



ԷԶՄԻԱԾԻՆ

1969-9

ՌՆԺԸ
ԻԵՏԱՐԻ

Մարտ

ԷԶՄԻԱԾԻՆ


ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Գ

1969

ՊԱ-11.258





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հայաստանյայց առաքելական եկեղեցի	3
Հայտարարություն	6
Մեծ պահոց խորհուրդը	7
ՄԱՏՐ ԱԹՈՌՈՒՄ	9
Մաղախ արհեստիպես Օրմանյանի նամակներից	11
ՊԱՐԳԵՎ ԵՊՍ. ԳԵՎՈՐԳՅԱՆ—Վարդանանց պատերազմի նետ կապված մի բանի հար- ցերի շուրջ	18
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Կոմիտասին նետ	22
ԽԱԶՍՏՈՒՐ ՄՈՒՇԵՂՅԱՆ—Գրամագիտական հվերհեր սփյուռփից	32
Ն. ԹԱՀՄԻՉՅԱՆ—«Արարատ»-ն ու երգ-երաժշտության հարցերը	37
ԹԱՄԱՆՅԱՆ ՅՈՒ. Ա., ԱԶԱՏՅԱՆ Շ. Ռ.—Մոմիկը որպես ճարտարագետ	41
Մատենագիտություն «Արարատ» ամսագրի	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՅԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՄԻՆ

«ԷՋՄԻԱՄԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS,


Հանձնված է արտադրության 3/III 1969 թ.: Ստորագրված է տպագրության 10/IV 1969 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 169:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1969 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

«Էջմիածին» ամսագրի փետրվարի խմբագրականում պատասխանել ենք հայ եկեղեցու դավանաբանական դիրքի մասին մեր ընթերցողների հարցին: Այժմ պատասխանում ենք հետևյալ հարցին:

— Ո՞րն է պատմական անունը մեր եկեղեցուն. որքա՞ն է արդար հայ եկեղեցուն տրված **Լուսավորչական, Գրիգորյան** կամ **Էջմիածնական** անվանումը:

Եկեղեցի բառը հունարեն է, **Էկեկհա**, որը նշանակում է «կոչումն» — կոչել, կանչել: «Եկեղեցիա կոչումն անուանի, որպես ի ցրմանն ի ժողովումն» կամ «ժողովումն կոչեցելոց», գրում է Եղիշեն, «Յեսուայ» գրքի մեկնության մեջ: Այս իմաստով էլ առաքելական դարում քրիստոնյաներին անվանում էին նաև «կոչեցեալ», այսինքն Աստծու կողմից «կանչվածներ», իսկ եկեղեցին՝ «կոչարան» կամ «ժողովրդանոց»:

Եկեղեցին երկու իմաստ ունի. նախ այն շենքը, տեղը, ուր հավատացյալները՝ «կանչվածները», հավաքվում են աղոթելու և եկեղեցական պաշտամունք կատարելու: Այս իմաստով եկեղեցին կոչվում է նաև աղոթքի տուն, աղոթարան, աղոթավայր: Պողոս առաքյալը եկեղեցին համարում է «Աստծու Տուն, պուն և հաստատությունն նշմարտության» (Ա. Տիմոթ. Գ 14):

Եկեղեցի է կոչվում նաև հավատացյալ ժողովուրդը: Հին ու Նոր Կտակարաններում «եկեղեցի» նշանակում է «ժողով հաւատացելոց»:

Ս. Սահակ Պարթևը հետևյալ բառերով է սահմանում եկեղեցին. «Աստծու պատվիրանը մեզ չի ասում, թե քարերից և փայտերից շինվածն է լոկ եկեղեցին, այլ՝ հաստատ

վեմի վրա հավատքով շինված մարդկային ազգը: Ուրեմն նշմարիտ հավատքն է եկեղեցին»:

325 թվականին Տիեզերական Ա ժողովում, 318 հայրապետներ, Նիկիական «հաւատոյ հանգանակ»-ում սահմանել են եկեղեցու հետեւյալ ստորագելիները, որպես դավանության և հավատի մաս.

Հավատում ենք մեկ, ընդհանրական, առաքելական և սուրբ եկեղեցուն:

Քրիստոս մեկ է, հետևաբար հավատացյալներն էլ մեկ հավատք և մեկ Ավետարան ունեն, և բոլոր քրիստոնյաները մեկ եկեղեցի են կազմում:

Այդ մեկ եկեղեցին **ընդհանրական** է, այսինքն քրիստոնեական եկեղեցին կազմում են աշխարհի բոլոր քրիստոնյաները առանց լեզվի և տեղի խտրության:

Այդ մեկ և ընդհանրական եկեղեցին՝ **առաքելական** է, որովհետև հիմնվել է առաքելական քարոզությամբ և նահատակությամբ, ըստ տերունական պատգամի (Մատթ. ԻԸ. 19—20):

Մեկ, ընդհանրական և առաքելական եկեղեցին **սուրբ** է, որովհետև նրա հիմնադիրն ու գլուխը Քրիստոս՝ սուրբ է:

«Առաքելականը եկեղեցիք թեպետև ընդ բազում տեղիս են, սակայն մի առի վասն միասնական հաւատոցն» (Խոսքով Անձնացի, Ժ դար, «Մեկնություն ժամակարգություն»): «Մի՛ կոչի եկեղեցի ո՛չ տեղեալ, այլ միով հաւատով և յուսով կոչմանն» (Գրիգոր Տաթևացի, ԺԴ դար, «Գիրք Հարցմանց», էջ 553):

Հայ եկեղեցին էլ որպես արևելքի հնագույն պատմական եկեղեցի, հարազատ մի

անդամն է մեկ, ընդհանրական, առաքելական և սուրբ եկեղեցու:

Հայ եկեղեցին առաքելական է նաև, որովհետև հիմնված է ս. Թադեոս և ս. Բարթոլոմեոս առաքյալների կողմից և վերանորոգված առաքելաշաղկի ա. Գրիգոր Լուսավորչի օրով Դ դարում իր ուրույն առաքելական հաջորդականությամբ և ինքնագլուխ (ալտոկեֆալ) նվիրապետությամբ, ի ս. Էջմիածին որպես «Աթոռ քահանայապետության» Հայոց (Ագաթանգեղոս):

Մեկ և ընդհանրական եկեղեցու միությունը խախտվեց 451 թվականին Քաղկեդոնի ժողովի պատճառով, պատրիարքական Աթոռների շուրջ ստեղծված հակամարտության հետևանքով և ստեղծվեցին տեղական, ազգային կամ հայրանվանական եկեղեցիներ, օրինակ, հույն եկեղեցի, լատին եկեղեցի, դպտի եկեղեցի, եթովպիական եկեղեցի և այլն, բոլորն էլ «չար ու նման» կոչում ունեցող եկեղեցիներ, որոնք **ներկայացնում են մեկ և ընդհանրական եկեղեցին**: Այս ձևով քրիստոնեական մեկ եկեղեցին պատմականորեն այլ և այլ ճյուղավորումներ ունեցավ, մասնավոր Արևմուտքի և Արևելքի եկեղեցական մեծ բաժանումից հետո, ԺԱ դարում, 1054 թվականին և ապա ԺԶ դարում, բարեկարգական շարժման հետևանքով. բայց, «2Է բաժանեալ Քրիստոս, ի Պողոս և յԱյսօղոս և ոչ եկեղեցի նորա ի հայս և ի հոռոմ, կամ ի ֆրանկ, թչպեսև տկարացն կարծիք այսմ ծառայէ» (Ն. Լամբրոնացի, «Մեկնութիւն պատարագի»):

Օրմանյան սրբազան գրում է այս մասին.

«Ընդհանրապես տարածված սովորություն է կրկին անուանելով բացատրել յուրաքանչյուր մասնավոր եկեղեցին, մեկը ազգագրական և մյուսը վարդապետական. մեկը առնված է յուրաքանչյուր տոհմային սեռումընեն, մյուսը կազմված է հետևած սկզբունքներում նշանակությունեն: Այսպես են զանազան եկեղեցիներու սովորական կոչումները, գործիմանկ, հունական օրթոդոքս եկեղեցին, ռուսական պրավոսլավ եկեղեցի, լատինական կաթոլիկ եկեղեցի, անգղիական եպիսկոպոսական եկեղեցի և այլն: Հայ եկեղեցվո զայով սովորաբար ազգագրական անունն է որ կգործածվի, և վարդապետական անունի մասին ընկալյալ սովորություն մը չկա: Ինքը կգոհանա Հայաստանյայց կամ Հայոց կամ Հայ կոչումները տալ իրեն պարզապես: Իսկ սուրբ և առաքելական և ուղղափառ և ուրիշ նմանօրինակ կոչումներ, իբր լոկ պատվանուն կգործածվին, և ոչ իբր հատուկ անուն: (Մաղաքիա արք. Օրմանյան, «Հայոց եկեղեցի», Կ. Պոլիս, 1912, էջ 146—147):

Որով մեր եկեղեցու անունն է **Հայաստանյայց առաքելական եկեղեցի**:

Հայաստանյայց եկեղեցի նշանակում է **Հայաստանցիների եկեղեցի**, այսինքն՝ այն եկեղեցին, որ միայն և ի հնուց անտի պատկանում է հայ ժողովրդին, և կոչվում է նաև «մայր» կամ «մայրենի եկեղեցի»։ «Մեզ համար հայր ենք ճանաչում սուրբ Ավետարանը և մայր՝ առաքելական, ընդհանրական եկեղեցին» (Եղիշեն):

Մեր եկեղեցական մատենագրության մեջ մինչև Ժ դար այդպես էլ կոչվել է եկեղեցին. «իսկապես խոստովանիմք մայր եկեղեցի» (Ս. Սահակ Պարթև) «Ուրախ լեր սուրբ եկեղեցի. եկեղեցիք Աստուծոյ և ժողովք ուղղափառաց»:

ԺԱ դարում արդեն մեր եկեղեցու համար **Հայաստանյայց** կոչումը ընդհանրացած և ընդունված անուն է, թե՛ մեր մատենագրության մեջ և թե՛ մեր ժողովրդի կյանքում:

Ներքես Շմորհալին 1144—1168 թթ. հույներին գրած իր երկու դավանաբանական թղթերում գործածում է միայն և միայն **Հայաստանյայց եկեղեցի** բացատրությունը, «Գիր խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցույ» և «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցույ»: Շմորհալին դարձյալ վարդապետ հիշատակին գրած իր շարականի մեջ՝ «Նորահրաշ պատկառոք, գործածում է **«Եկեղեցիք Հայաստանեայց»** բացատրությունը:

Շմորհալու օրերից, ուրեմն, մեր եկեղեցու համար նվիրագործված համբուրելի անունը եղել է **Հայաստանյայց** անունը, անուն, որ նա պահել է իր աչքի լույսի պես, որպես իր հավատքի և ազգային բարեմասնությունների ամբողջությունն արտահայտող խորհուրդ և հաստատություն:

Այնուհետև, նշում է Օրմանյան սրբազանը, հայ եկեղեցու համար «վարդապետական կոչում մըն ալ ավելցնելու պետքը ծագեցավ, երբ Էջմիածին ռուսական պետության ներքև ինկավ, և կայսերական կառավարությունը պահանջեց վարդապետական կոչում այ տալ, ընդհանուր և ընկալյալ սովորության համաձայնեցնելու համար. որովհետև նոր կանոնադրությունը կազմած ատեն՝ բավական չսեպեց ազգագրական անունով միայն հատկանշել հայոց եկեղեցին: Այդ առթիվ կազմվեցավ **Լուսափոքական** հայերեն կոչումը, ս. Գրիգոր Լուսավորչի անունն առնելով, իսկ ռուսերենի վերածված ատեն դյուրագույն սեպվեցավ սուրբին մակդիր անունն ավելի՝ բուն անունն առնել, և թարգմանվեցավ **Գրիգորյան**: Այս կերպով **Հայ Գրիգորյան** անունը առաջին անգամ գործածվեցավ 1836-ի պալատեմիայի ռուսերեն-

նին մեջ, և **Հայ Լուսավորչական** անունը անոր հայերեն թարգմանության մեջ»:

Մեր ժողովրդի կողմից երբեք չի ընդունվել հայ եկեղեցու համար նման անվանակոչություն, «որովհետև անուղղակի կերպով հեռացած կրյա հայ եկեղեցիներն առաքելականության նկարագիրը և այնպես իմն կրցուցնե իբր թե Դ դարում Գրիգոր Լուսավորչով սկսած եկեղեցի մը եղած ըլլա» (Օրմանյան, էջ 147):

Մյուս կողմից, հայ կաթողիկոսներն էլ իրենց գործածության համար ստեղծել են «Էջմիածնական կոչումը, Էջմիածնի Աթոռնն առնելով, բայց իրենց հորինած այս անունը ո՛չ հայ եկեղեցին կրնա ընդունիլ, և ո՛չ ալ օտարագոհներ գործածած են, նույնիսկ լատին կաթողիկոսներ ալ ընդունած չեն» (Օրմանյան, էջ 147):

Օրմանյան սրբազան շեշտում է, որ եթե հարկ լինի անպայման Հայաստանյայց եկեղեցու համար **երկրորդական** կամ **վարդապետական** մի անուն էլ տալ, «թեև ազգային սովորությունը այդպիսի պահանջ մը չունի երբեք», լավագույնը կլինի նախընտրել **ուղղափառ** կոչումը, «հայերեն բնիկ հնչումով» (Օրմանյան, 148), ինչպես հույն եկեղեցին կոչվում է օրթոդոքս, ռուս եկեղեցին, պրավոսլավ:

1910 թվականին Օրմանյան սրբազանը օտարների համար ֆրանսերեն լեզվով գրեց հայտնի իր գործը՝ հայ եկեղեցու պատմության, վարդապետության մասին և այն անվանեց «Հայոց եկեղեցին», Eglise arménienne: 1912 թվականին գիրքը թարգմանվեց Լոնդոնում անգլերենի և կոչվեց the church of Armenia և ապա՝ ալ թարգմանությանը Armenian church: 1912 թվականին Մոսկվայում Օրմանյանի «Հայոց եկեղեցին» թարգմանվեց ռուսերենի և կոչվեց «Армянская церковь», իսկ գերմաներենը՝ armenische kirche:

Մեր եկեղեցու ճիշտ ու պատմական անունը **Հայաստանյայց առաքելական եկեղե-**


ցի է: Պարզ, արտահայտիչ ու բովանդակալից. «Բնիկ հնչումով ուղղափառ» (Oughapար կամ yranap) կոչումն էլ ընդունելություն չգտավ:

Լուսահոգի Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսը, 1953 թվականի դեկտեմբեր 10 թվակիր իր շրջաբերական գրության մեջ նշում էր. «Հայ եկեղեցու պաշտոնական անունը կամ տիտղոսը **Հայաստանյայց առաքելական եկեղեցի** է, որ և՛ պատմական է, և՛ դարերի գործածությանը սրբագործված հայ եկեղեցու և ժողովրդի կողմից, և ո՛չ որ իրավատեր է հիշյալ պատմական տիտղոսի վերա հավելում կամ հապավում կատարել»:

Դժբախտաբար, ցարդ, և՛ հայ մամուլում, և՛ գիտական հրատարակություններում (տե՛ս «Ռուս-հայերեն բառարան», մեկ հատորով, Երևան, 1968, էջ 1351) և մեր որոշ հոգևորականների կողմից էլ դեռևս գործածվում են հայ եկեղեցու համար երբեմն **Լուսավորչական, Գրիգորյան** կամ **Էջմիածնական** կոչումները, ինչ որ անընդունելի է, խոտելի է, որովհետև ճիշտ չէ, պատմական չէ:

Հայ եկեղեցին ընդհանրական եկեղեցու հավատարիմ մեկ անդամն է: Հարազատությանը պահել է իր առաքելական, նվիրապետական կարգ ու կանոնը, իր դավանությունը, և բոլորովին ավելորդ է և մերժելի նրա պատմական և ճիշտ անվան վրա նոր ածական կամ ստորոգելի ավելացնելը:

«Ո՛վ եկեղեցի Հայոց, գրում է Հովհան Երզնկացի մեծ վարդապետը, ուղղափառ հաւատոյ քո լոյս՝ ո՛չ նուագեցաւ, ի բարի սերմանս ցորենոյդ՝ որումն ոչ խառնեցաւ, գաղփիր յատակ աւանդութեանց քոց՝ աղտաղտոկ ջուր օտարոտի ումանց ոչ պղտորեաց, ի ստուգութեան և ի ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր և հերձումած քացախութեան չարութեան ոչ զանգեցաւ, լոսկի անքիժ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին՝ պղինձ ժանգաճոտ և կապար սևաթոյր ոչ գտաւ»:





ՀԱՅ ՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսության դիվանս, ի պատասխան արտասահմանից եղած հարցումներին, այսու լիազորված է հայտարարելու, թե Մայր Աթոռ ս. Էջմիածինը տեղեկություն չունի Տանն Կիլիկիո կաթողիկոսի այցելության մասին Ամերիկայի հայոց թեմերին և համայնքներին, որոնք օրինավորապես գտնվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգևոր իշխանության ներքո, իրենց կազմավորման օրերից սկսած:

Անթիլիասի կիլիկյան Աթոռի գահակալի կողմից մման այցելություններ, առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիտության և համաձայնության, հանդիսանում են դարերից ի վեր նվիրագործված եկեղեցական կարգ ու կանոնի խախտում:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ

15 մարտ 1969 թ.,

Ս. Էջմիածին





ՄԵԾ ՊԱՀՈՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ*

Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Այսօր մաքրեցոյք պահօք քառասնօրեայ, զի եցոյք ի Էտուն իմանալի առ Աստուած» (Ծարական):

Այսօր մաքրվենք քառասնօրյա պահեցողութեամբ, որպէսզի իմանալի լեռը բարձրանանք, որտեղ Աստված է բնակվում:

Այս խոսքերով սրբազան շարականագիրը բնորոշել է քառասնօրյա պահքի իմաստը: Պահեցողութեամբ, ապաշխարութեամբ, աղոթքով և բարի գործերով մաքրվելու և սրբորվելու համար հոգեպէս և այդպիսով բարձրանալու դէպի կատարելություն, դէպի արդարացում, դէպի Աստված:

Այս իսկ նպատակով է, որ մեր եկեղեցին սահմանել է հնագույն ժամանակներից սկսած քառասնօրյա պահքի շրջանը:

Այսօր ամեն հայ հավատացչալի համար քառասնօրյա պահեցողությունը անհրաժեշ-

տություն պէտք է լինի, թե մարմնական և թե հոգեկան քարենորոգման իմաստով: Որովհետև որքան նյութական մարմինը կարիքն ունի վերանորոգման, նույնքան՝ և ավելի հոգին, «զի հոգի առաւել է քան գմարմին»: Մեծ պահքի շրջանը առավելապէս ոգեկան զորացման, հավատով ամրապնդման և բարի գործերով արդարացման շրջան է:

Ըստ Պողոս Առաքյալի, պահքի շրջանը առիթ է տալիս հավատացչային սանձելու մարմինը, հոգու թոյնքներին ընթացք տալու համար. «Զի ոչ է արքայութիւն Աստուծոյ կերակուր և ըմպելի, այլ՝ արդարութիւն և խաղաղութիւն և խնդութիւն ի Հոգին Սուրբ»:

Պահքի, ապաշխարութեան այս շրջանը մեզ համար հոգեկան վերանորոգման, սեփական խղճի խաղաղութեան և մեղքի կապանքներից ազատագրվելու մի շրջան է: Բայց նաև առիթ է խորհրդածութեան աշխարհի դժբախտությունների, մարդկային ցեղի ցավերի ախտաճանաչման և վերացման:

Ծշմարիտ քրիստոնեայն այն չէ, որ ինքնիրեն փրկված է համարում, այլ այն մանավանդ, որ փրկութեան ուղիներ է որոնում նաև իր նմանների համար: Քրիստոնեայն իր անձի սահմաններից դուրս է գալու, լինելու համար հասարակական կյանքում արդարութեան, խաղաղութեան և խնդութեան մի առաքյալ: Քրիստոնեայն՝ իր անձի մեջ պէտք է պարփակի իր կրոնքի բոլոր առաքինությունները և քրիստոսատու: ր սերը անսակարկ կերպով բաշխի իր նմաններին, իր եղբայրներին:

Անճնաւերներ պիտի կոչվենք, եթե այս-

* Մարտի 12-ին, չորեքշաբթի.—Միջինքի առթիվ ս. Էջմիածնի Մայր տաճարում կատարվում է Արևագալի հանդիսավոր ժամերգություն՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ: Հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Յարևելից», «Ծգնաորք Աստուծոյ», «Լոյս» և «Ժանապարհ» երգերը, որոնք ձայնագրվում են Երևանի ռադիոկոմիտեի միջոցով: Մարտի 16-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 11-ին, Արևագալի երգերի հատվածներ հաղորդվում են Երևանի ձայնասփյուռով:

Այս առիթով հոգևոր ճեմարանի տեսուչ Ներսես Ծ. վարդապետը խոսում է սույն բարոյը:

օր աղոթեինք միմիայն մեր անձերի փրկության համար:

Մեր եկեղեցին մեզ ուսուցանում է աղոթել համայն մարդկության բոլոր զավակների համար՝ խորություն չդնելով ազգերի, հարքստի և աղքատի միջև: Արդ՝ «Արդարության և խնդության և խաղաղության ի Հոգին Սուրբ» վայելելու ենք այն ժամանակ, երբ մեր աղոթքներով ու աշխատանքով կարողանանք նպաստել աշխարհի խաղաղության և եղբայրասիրության տարածմանը՝ մարդկային ցեղի բոլոր զավակների միջև:


Արդարության և խաղաղության բացակայության պատճառով, պատմության ընթացքում մենք՝ որպես ժողովուրդ բազմիցս տուժել ենք: Այժմ մենք առավելապես գիտենք գնահատել այս գաղափարների արժեքն ու կշիռը: **Այսօր վտանգ է սպառնում ամբողջ աշխարհի ճակատագրին:** Երկնակամարի վրա մոռալ ամպեր են սավառնում՝ ան ու

սարսափ տարածելով խաղաղասեր մարդկանց սրտերում: Ահա այսպիսի օրերում, առավել տոգորված արդարության և խաղաղության իղձերով, երբեք չդադարենք մեր աղոթքը լսելի դարձնել Տիրոջը:

Պահոց շրջանի Միջինքի այս օրերին սրտեռանդ մաղթենք, որ Տերը բազմապատկի մեր հավատքն ու կամքի տոկոսությունը, որպեսզի կարողանանք Իր սրբազան պատվիրանները սիրել և կյանքի կոչել:

Թող մեր աղայանքները՝ «վասն խաղաղության ամենայն աշխարհի», հավերժական Էջմիածնի սրբազան խորաններից բարձրացող, հաճելի լինեն, որպես խունկ առաջի Աստուծո: Թող կարծրացյալ սրտերը փափկեն, փշրվեն անարդարությունների շղթաները և խափանվեն պատերազմները: «Զի ելցուք ի լեսոն առ Աստուած». խնդությանը վայելելու Փրկչի հրաշափառ Հարության ավետիքը, ամեն:





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 27-ին, հինգշաբթի.—Հոգևոր ճեմարանի սաների համար առողջապահության մասին դասախոսություն է կարդում բժիշկ Ստեփան Տեր-Ստեփանյանը:

1955—1957 թվականներին սովորել և ա-վարտել է էջմիածնի հոգևոր ճեմարանի դա-սարանական բաժինը: 1957—1967 թվա-կաններին պաշտոնավարել է Բաքվի և Երե-վանի եկեղեցիներում որպես դպիր:

Մարտի 2-ին, կիրակի.—Անառակի կիրա-կի.

Մայր տաճարում պատարագում է արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը: Օրվա տոնի առիթով ոգեշունչ քարոզ է խոսում հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-փառ Հայրապետը:

Մարտի 13-ին, հինգշաբթի.—Հոգևոր ճե-մարանում իր հերթական՝ 5-րդ դասախոսու-թյունն է կարդում բժիշկ Ստեփան Տեր-Ստեփանյանը, դպրոցական առողջապահու-թյան մասին:

Մարտի 9-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի.

Մայր տաճարում պատարագում է արժ. տ. Հովհաննես քհն. Մարությանը: Քարոզում է հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը:

Նույն օրը էջմիածնի ս. Աստվածածին ե-կեղեցում կատարվում է քահանայական ձեռնադրություն: Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ մասնակցությամբ տ. Գևորգ վրդ. Սերայ-դարյանի: Ձեռնադրությունը կատարում է Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, հավատացյալների բազմության ներկայությամբ: Քահանա է ձեռնադրվում հոգևոր ճեմարանի շրջանա-վարտ Աբրահամ սարկ. Մարգարյանը:

Տ. Աբրահամ քահանան ծնվել է 1937 թը-վականին Իրանի Սուլթանապատ քաղաքում: 1946 թվականին ներգաղթել է հայրենիք:

Մարտի 16-ին, կիրակի.—Դատաւորի կի-րակի.

Մայր տաճարում պատարագում է հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը: Քարոզում է հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ «Պարտ է ձեռ-յամենայն ժամ յաղօթս դալ և ոչ ձանձրա-նալ» բնաբանով:

Մարտի 16-ին, կիրակի.—Այսօր ժամը 12-ին Մայր Աթոռ է այցելում Ֆինն գրող Մարտին Լարնին, որը Հայաստան էր հրա-վիրված Նորությունների մամուլի գործա-կալության կողմից: Մարտին Լարնինին ու-ղեկցում էր «Սպուտնիկ» հանդեսի խմբագիր Ա. Բորոգավիկինը (Ֆինլանդիա): Հարգելի հյուրերին ընդունում է նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

*
* *

Մարտի 22-ին, շաբաթ.—«Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. սոսկալի շար-
շարանացն և մտին ի Վիրապն».

Ս. Իջման սեղանի վրա պատարագ է մատուցում հոգ. տ. Ներսէս Ժ. վրդ. Պողապալ-
յանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագը երգում են հոգևոր ճեմա-
րանի ուսանողները:

Պատարագին ներկա է լինում Վեհափառ
Հայրապետը:

*
* *

Մարտի 23-ին, կիրակի.—Գալստեան կի-
րակի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը: Քարոզում է արժ. տ. Հովհաննէս քհն. Մարութ-
յանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-
փառ Հայրապետը:

*
* *

Մարտի 29-ին, շաբաթ.—Այսօր, երեկո-
յան ժամը 7-ին, Վեհարանում, Վեհափառ
Հայրապետի նախագահութեան ներքո, գու-

մարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հեր-
թական նիստը:

*
* *

Մարտի 30-ին, կիրակի.—Մաղկազարդ.

Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում հոգ. տ. Ներսէս Ժ. վրդ. Պողապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ցնծացաւ տիեզերք զալստեամբ Աստուածորդւոյն Երուսաղէմ» բնարանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհա-
փառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 6-ին, կատարվում է «Դռնբացէք»-ի հանդիսավոր արարողու-
թյունը, որին նախագահում է Վեհափառ
Հայրապետը:


*
* *

Մարտի 31-ին, երկուշաբթի. —Այսօր
Մայր տաճար է այցելում գերմանացի հա-
յագետ դոկտ. Պաուլ Յուկմանը, Արևմտյան
Գերմանիայից: Հարգելի գիտնականին ըն-
դունում է Վեհափառ Հայրապետը և զրույց
ունենում նրա հետ:

Այնուհետև դոկտ. Պաուլ Յուկմանը այցե-
լում է Եկեղեցական արվեստի թանգարան,
ս. Հովհաննէս և ս. Գայանէ վանքերը:

Ժամը 2-ին հարգելի հյուրը հանդիպում է
ունենում հոգևոր ճեմարանի դասախոսական
կազմի և ուսանողութեան հետ:





ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Օրմանյան արքազանի մահվան 50-ամյակի առիթով հրատարակում ենք Մայր Աթոռի երբեմնի միաբան Նրվանդ վրդ. Տեր-Մինասյանի՝ նրա գրած նամակները, որոնք ունեն պատմական նշանակություն՝ 1908 թվականից մինչև 1914 թվականները մեր ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ հարցերի առնչությամբ:

Այս առթիվ խմբագրությունը շնորհակալություն է հայտնում պրոֆ. Նրվանդ Տեր-Մինասյանին, որ խմբագրությանը հանձնեց Օրմանյան արքազանի ձեռագիր 30 նամակները՝ հրատարակելու համար:

*
* *

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Համար 1

Կոստանդնուպոլիս 7 փետրվարի 1908

Հոգեշնորհ տ. Նրվանդ վրդ. Տեր-Մինասյան
Ի ս. Էջմիածին

Հոգեշնորհ սիրելի.

Դեկտ. 22-ի գրությունդ ստացա: Անտոնյանց մա-
լիկն ինչ որ Realenzyklopedie ունի կրնա Ձեզի լավ
նախաջնորդ լլալ: Ուզելով Ձեզի նոր նյութ պատ-
մաստել՝ նույնիսկ իրենց դիմեցի, և իրենցմե ընդու-
նամ գրվածս նույնությամբ կծրարեմ ներկայիս մեջ:

1895-են ի վեր միաբանությունը բնավ փոփոխու-
թյուն կրած չէ. քանի մի միաբան վարդապետներ ևս
վախճանեցան, նորեր չավելցան, վարժարան չու-
նեցան, Հռովմեն ալ ազատ գործունեության արտո-
նություն չստացան. և կմնան նույն անորոշ վիճա-
լիկն մեջ: Արքահայրը միշտ գերապայծառ և Ռա-
փայել ծ. վրդ. Միսակյանն է (Կ. Պոլիս), ութսունը
անցուցանեց, բայց ժիր ու խոհական. փոխանորդն է
Վերնարզելի և. Նդիա ծ. վրդ. Քելջյան. և ստույգն
պուրա հազիվ տասը տասներկու միաբան մնացած

են, որոնցմե մին է և. Սարգիս վրդ. Յազընյան, Լո-
ռու կողմերը:

Իմ մասին տեղեկություններ. բավական դժվար
կեն. ես չեմ ուզեր առջև նետվիլ և իմ կողմեն աշ-
խատելու ձև ունենալ. հետևաբար չեմ ալ ուզեր այդ
տեղեկությունները տալ. իսկ ուրիշի դիմելն ալ Ձեզի
կպտկանի նայիլ:

Կաթողիկոսական ընտրության հրավիրագիրները
դեռ չհասան, որ կարենայինք ինչ ընելիքնիս մտածել
և կարգադրել: Բայց երբ որ փոխանորդությանց կար-
գը գա, հարկավ հարմարագույններուն պիտի դի-
մենք:

Սիրո ողջունիվ և օրհնածայն մաղթանք

Մնամ սիրելությանդ աղոթարար

Պ(ատրիարք) Կ. Պ(ոլս) Մաղաքիա արք.

Ման. Die Religion in Geschichte und Gegenwart
գերմաներեն բազմախոսոր նորագույն հանրագիտա-
րանի խմբագրությունը դիմել էր Ե. Տեր-Մինասյա-
նին և խնդրել, որ նա հանձն առնի այդ հանրագիտա-
րանի համար գրել «Die Antonianer», «Armenien»,
«Gregor der Erleuchter», «Persien» հոդվածները:
Այդ հոդվածներից առաջինի՝ «Անտոնյանների» մա-
սին նյութեր հավաքելու նպատակով Ե. Տեր-Մինաս-
յանը դիմել է Կ. Պոլսի այն ժամանակվա պատրիարք
Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին, որը և տվել
է վերևում տպված պատասխանը: Նամակում հիշա-

ԳԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կոստանդնուպոլիս 7 օգոստոս 1908.

Հարկեր

No 1 Luffzger u. brenner d. Aufsteigend
 falsch.

2. Hymne Wolf.

[illegible][illegible]

Մաղաքիա արքեպ. Թրմանյանի ձեռագիրը

վակված են Realencyklopedie-ի (24 հատորանոց խորամանկան համագիտարանի) հոդվածն «Ան-
վանականներ» մասին ստորագրված է «Dr. Karapet
Notizen von Dr. Ormanian»):

*
* *

ՀԱՍՏՈՒԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Համար 2

Կոստանդնուպոլիս 4 հուլիս 1908

Հոգեշնորհ սիրելի.
Հարկավ Գարեգին վրդ. հաղորդեց Ձեր սիրելու-
թյան, թե ինչու դանդաղ կշարժվիմ իմ գրությանց
ընդ: Այնչափ ուզեցին զիս կաթողիկոսության հետա-
նուտ մկարագրել, որ կվախմամ թե ամեն մա-
նակներս մույն դիտմամբ գրված կարծիքն: Ես մի-
ն ցարդ ինձի կանոն մը ընտրած և ըստ այնմ քալած
«ն» ոչ մի պաշտոնի հետամուտ լինել, ոչ մի պաշ-
տոնն խուսափիլ: Այդ կանոնով հանդարտ սրտով
ապրած եմ ցարդ, մույնպես կիսափագիմ ապրիլ:

Հետևաբար անմեղադիր լինելդ կխնդրեմ, երբ
1905 թ. հունիս 22 մամակդ իսկ անպատասխանի
մնաց. Բայց դուք, սիրելի, ամենայն հաստատմանու-
թյամբ շարունակեցիք ինձ հղել Ձեր աշխատասիրած
«Իրենցիտը» — «Եկեղեցական պատմությունը» — «Բա-
նալուրը» — «Տիմոթեոս Կուզը»: Ծնորհավորելով կը-
նդորհակտեմ անխնայ աշխատասիրությունդ, և կը-
նդաջաղեմ շարունակաբար այդ ճամբում մեջ հառա-
ջանալ, որովհետև, վստահ եղեք, ամեն ճամբաներում
հերազանցն այս է: Վարչական պաշտոններ, ևս և
սարդյունքներ, մարդում անուն չեն շիներ, ամենքն ալ
դիվանան, և դարերու մեջ անհիշատակ կմտնին.
Գրական արդյունքներ ամսան են և կանմահաց-
նեն: Եթե ձգտում մը ունեցած եմ, այն ալ գրական
սարդյունավորության համար եղած է. բայց բախտը
դիս վարչական փոսին մեջ գլորեց: Կյանքիս լավա-
գույն կետը էջմիածնի ուսուցչությունն էր, անկե-
տեղը Արմաշու վերատեսչությունը. բայց անցան և
մնացինք վարչականին, և ծանր վարչականին:

Կաթողիկոսական խնդրույն վրա մոր ըսելիք մը
չունիմ. կկարդամ Տփլիսի հրատարակութենն շա-
տաերը, և կգարմանամ. որովհետև այդչափ եղելու-
թյանց անգիտակցություն չէի ենթադրեր: Իսկ մեք
պաշտոնական քալ մը չենք կրնար առնել հրավիրա-
գիրները ձեռնվրձիս հասած չլիներուն: Երեկ ալ մորեն
տեղակալ արբանյան հետագրեցի:

Գեր. Կարապետ վրդ.-ի աշխատակցությունը այլևս
Ձեզի պիտի պակսի, քանի որ նա ալ ձախորդ վար-
չականի մը բռնվեցավ, և այս օրեր մամալանդ խեղ-
ճը ծանր տագնապի մեջ է: Ես չեմ գրեր, մինչև որ
ստույգ լուր մը առնեմ: Դուք հաճեցեք իմ սերս ու ող-
ջույնս և փորձանքն ազատվելուն համար բարեմալ-
ությունքս իրեն հասցնել, եթե կրնաք: Նա ալ ինձի
պես հակամաղից վարչականին մատմված մեկը ե-

ղավ. կմաղթեի որ գրական արդյունքներով պաշ-
տանար:

Ողջունիվ սիրո ծանոթից և սիրելյաց, մնամ
Սիրելությանդ աղոթարար
Պ(ատրիարք) Կ. Պ(ոլստ) Մաղաքիա արք.

Ծան. Նամակի սկզբում հիշված Գարեգին վրդ.-ը
Գարեգին վրդ. Հովսեփյանն է, հետագայի Մեծի
Տանն Կիլիկիո Գարեգին կաթողիկոսը: Նամակի վեր-
ջին պարբերության սկզբում հիշված Կարապետ
վրդ.-ը Օրմանյանի անդրամիկ աշակերտ և իմ ուսու-
ցիչ Կարապետ Տեր-Մկրտչյանն է հետագայում ե-
պիսկոպոս: Անվանի գիտնական հրապարակախոս:

*
* *

Համար 3

Կ. Պոլիս, հերա 25 օգոստոս 1908

Հոգեշնորհ տ. Երվանդ վրդ. Տեր-Միմասյանին
Միաբան Մայր Աթոռն ու Էջմիածին

Հոգեշնորհ սիրելի.

Ծնորհակալ եմ այն սիրալիր և բարյացակամ
զգացմանց համար, զորս հայտներ էիք Ձեր վերջին
գրությամբ: Ես հանգիստ եմ մարմնով և հանդարտ
սրտով. եղածները աշխարհի մեջ անսովոր բաներ
չեն. ոչ առաջին և ոչ ալ վերջին պիտի ըլլան: Կը-
ցավիմ միայն որ օտարագրիներու բերանը մեր ազգը
մեղադրելու առիթ ընձայեցին:

Վարչական պաշտոնն զերծ մնալ իմ հին փափագն
էր, իսկ պաշտոնավարությանս դատողությունը ա-
ռանց կիրքի և առանց հուզման պետք է կատարվի,
իմ որ առ այժմ դյուրին չկատարվի՝ երկրիս հան-
կարծական փոփոխության պատճառով:

Հաշիվ ըսված բաները արդեն պատրիարքարան
հանձնված են. և պաշտոնական գործեր իրենց ամեն
ձևակերպություններով կատարված են. անձնական
պատասխանատվություն հարուցանելու բնություն
չունին:

Սիրո ողջունիվ հոգ. սիրելությանդ և պատվական
ընկերներուդ՝ մնամ միշտ աղոթարար

Մաղաքիա արք.

Ծան. Այս մամակը Օրմանյանի պատասխանն է իմ
այն մամակի, որի մեջ իմ խորին ցավակցությունն էի
հայտնել որան խուժանավարական եղանակով որան
պատրիարքական Աթոռից հետացնելու առթիվ:

*
* *

Համար 4

Ի հերայն Կ. Պոլստ 8 հոկտ. 1908

Հոգեշնորհ տ. Երվանդ վրդ. Տեր-Միմասյան
Ի. ու Էջմիածին

Ստացա սեպտ. 18-ի մամակդ և հայ ու ասորի ե-
կեղեցյաց հարաբերության մասին գերմաներեն հրա-

¹ Թվականի մեջ ինչ-որ ինձ համար անհասկանա-
լի սխալ կա: Համեմայն դեպս 1905 թ. բացարձակ
թյուրիմացություն է, անշուշտ պետք է 1908 կարդալ:

¹ Վերջին բառը լավ չի կարդացվում, որինք ըստ ի-
մաստի:

տարակույթյանը հայացած հաստորը: Պետք է որ սըր-տանց գոհունակություն և անկեղծ գովություն հալտ-նեն գրական աշխատությանց համար ցուցած փու-թաջանությունը և արդյունավորությունը, և քաջա-լերել աղ ճամբուն մեջ հառաջանալը, առանց շփո-թելու վարչական զբաղմանց հրապույրին, որոնք ծանրատաղտուկ են և ապաշնորհ. և ոչ իսկ մարդը քարձրացնելու կծառաչեն, այլ կկատարվին իրեն վիճակի և կոչման պարտավորություն:

Կաթողիկոսական ընտրության հրավերագիրերը պատրիարքարան հանձնվեցան, և ազգային ընդհա-նուր ժողովն ալ այսօր կհավաքվի անով զբաղե-լու. այլ ես ոչ ևս գործին մեջ մաս ունիմ. կսիրեմ հուսալ որ թե այստեղ և թե Էջմիածին հրապարակի ցուցամոլ երևույթներեն ավելի խոհական մատակ-ներ գիտակշռություն ունենան:

Հանգիստ եմ արտով և մարմնով. և կաշխատեմ հանդարտութենե օգուտ քաղել: Միտո ողջունիմ սի-րամույն ընկերակցացո, մնամ սիրելությանդ աղո-թակից

Մաղաքիա արք.

*
* *

Համար 5

Ֆեռա Կ. Պոլսո 8 նոյեմբեր 1908

Հոգ. տ. Երվանդ վրդ. Տեր-Մինասյան
ի ս. Էջմիածին

Որպեսզի համոզվիս, սիրելի, որ գրական աշխա-տությանց սերը կմշակեմ, կխնդրեմ որ քացա-տորես խնդիրս:

Աչքիս առջևն եմ Բաբգենի ժողովին համար թե «Հայոց եկեղեցու հարաբերությունները կն» և թե «Արարատի» մեջ գրածներդ:

Կպաշտպանես թե Բաբգենի ժողովը 505/6-ին էր, և թե գիրը, այսինքն Բաբգենի Ա թուղթը այդ ժողո-վին գրված է:

Ես ալ ժողովին թվականը նույնպես ճշտած էի կանուխեն (տես Լուսնա 1908, Ող-դեկտ. եր. 227), այս մասին համամիտ ենք: Միայն Բաբգենի կաթո-ղիկոսության տարիներուն և թղթույն գրության տա-րիներու մասին դիտողություն ունիմ:

1. Վահան Մամիկոնյան մարզպան եղավ Վաղար-շի թագավորության մյուս տարին, ուրեմն 485-ին, Վահանի կտրվի 25 տարի մարզպանություն, ու-րեմն մինչև 510, կամ 509: Արդ, Բաբգենի առաջին թուղթին մեջ հիշված մարզպանը Վարդ է (Գիրք Թղթոց, եր. 42 և 47) ուրեմն առաջին գիրը հանուն ժողովո գրված է, քայց ժողովին տարիներ ետքը, երբ Վարդ մարզպանության անցած էր Վահանի մեղեդեն ետքը:

2. Բաբգենի կաթողիկոսությունը 6 տարի ըսել անհնար է. ոչ ի Զ այլ ԻԶ կարողալու է տարիները: Մանդակունիին ոմանք 6 տարի կուտան և ոմանք 12: Այս տարբերությունը ես նկատած եմ իրեն երկու տեսակ հաշիվ, մեկը Գյուտի մահվանեն ետքը ազ-գային հաստատությանը, և մյուսը Վահանի սպա-րապետութենեն ետքը արքունական հաստատու-

թյամբ, որով նրա կաթողիկոսությունը կվերջանա 490-ին (տես Լուսնա, որպես ի վեր, եր. 224): Ահա մեկ¹ կես:

Մյուս կետը Աբրահամ Աղաթանեցիին ընտրու-թյունն է՝ որոշակի գրված Խորովի 17-րդ տարին կամ ճիշտ 807 նոր կիրակիին: Եթե Սամվել կաթո-ղիկոսեն մինչև Վրթանես տեղապահ հաստատուն կերպով դրված տարիները դեպի ետև դառնալով հաշվենք՝ Սամվելի կաթողիկոսությունը կլինա 516-ին և ըստ այսմ 490-ե 516 ճիշտ 26 տարի կմնա, զորս անհնալտակ կարծեմ հարկ է տալ Բաբգենի և այս ատեն ամեն դժվարությունք կհարթվին: (Տես ևս Լուսնա որպես ի վեր 227):

Կապանեմ պատասխանիդ. գուցե ուրիշ խնդիրներ ալ շարունակեմ, և մնամ սիրալիր ողջունիմ

Մաղ. արք. Օրմանյան

Հ. Գ.

Փառք Աստուծո, որ այլևս կաթողիկոսության գրույցներն ալ վերջացան:

Մ. Օ.

*
* *

Համար 6

Ֆեռա Կ. Պոլսո, 8 մայիս 1909

Սիրելիդ իմ և հոգեշնորհ վարդապետ,

Ժամանակին ստացած էի նոյեմբեր 7 նամակդ, այլ չէի պատասխանած չանդրադառնալու համար կաթողիկոսական ընտրության հարցի վրա, որուն մեջ իզուր գիս ալ խոթեցին, ոչ իրեն ընտրելիի մը վրա խոսելով, որ իրենց ազատ էր, այլ շատ մը մտա-ցածին ենթադրություններով ինձի գործունեությունն-ներ, հետամտություններ և ջանքեր վերագրելով և անոնք ցրվելու համար ավելի մտացածին գրադար-տություններ հերյուրելով. գոնե դուք դիտեք, թե որ-չափ քաշված մնացի այդ հարցի մեջ, և առաջի օրեն անոր հավանականության չհավատացի: Այժմ խնդիր-ներ լրացած են, մոտ օրեն Զեր հրավիրակները կու-գան, Գարեգին արք., Աշոտ եպիսկոպոս, Մեսրոպ վրդ. և ուրիշ մի վարդապետ, նորընտիրը կերթա Պետերբուրգ, անկեց Էջմիածին, կօծվի և կսկսի գոր-ծել. և անկեղծաբար հաջողություն կմաղթեմ, վասնզի հաջողությունը հօգուտ եկեղեցու և ազգի է, և անհաջողությունը ի վնաս հանրության: Այդ գլուխը փակենք:

Ստացա վերջերս հղված «Կրոնների պատմու-թյուն» և «Հիսուսի կյանք» երկասիրություններդ: Նյութերը ավելի ընդհանուր են, և ոչ հատուկ ազ-գային, ինչպես նախընթաց աշխատություններդ: Ինձի կմնա զարմանք և խնդությանդ դիտել աշխատասի-րությունդ և բեղմնավորությանդ առատությունը և պետախությունը, շնորհավորել և քարեմաղթել տո-կուն առողջություն և նորանոր արգասյաց համար կարողություն: Եթե մյուս ընկերներդ ալ քեզի հե-տևելեն, Էջմիածնի միաբանության ճշանավոր ժամա-

¹ Մի անընթեռնելի քառ:

վանակամիջոց մը կկազմենք անշուշտ:

Վերջին 2 ասորիի նամակովդ գլխավորաբար կը-
նախաձեռնարարենք Ռոշքյանի բառարանին իրենցիսի
սխալներէն վկայություններուն արտագրությունը:
Ինչպէս ինչպէս Անտոնյանց արքայապետ, ծերունագաղղ Միա-
սեպեան Ռափայել գերապաշտօնին, որ հաւանեցաւ
22 միացն պատշաճ հրամանները տալ, այլ ինքն ան-
սխալմբ աշխատության, այսինքն հետազոտության
նկատել. և հուսամ թէ ի մոտո կարենամ արդյունքը
լոյսնել: Գիտնալու եք որ Ռոշքյանի բառարանը երկու
տո folio սովոր հատորներ են մանր հոտորգի գըր-
ւած: Ստույգ որ կարծեր անոնց տպագրությունը,
հաւաք գրականության մեծ օգուտ կրնար ընձեռել. ծա-
ւանանակին քիչ մը թարթափած են:

Բարգեւ վրդ. Կոլլեաներանի Նոյնին ցարդ ստա-
ւացած կըլլաք, ես ինքս զայն թղթատարին հանձնեցի,
և վարդապետին ներկայ քացատրության տոմար,
22-եր կասկածը փարատած կըլլա անշուշտ:

Խնդիր մըն ալ Բարգեւ կաթողիկոսի տարիներուն
մասին հաշիվն է: Դուք չէիք ուզեր ընդունիլ 26 տա-
րիին, սակայն ոչ թէ հակառակը ցուցնելով, այլ բա-
նական ասպացուցած չկարծելով: Սակայն երբ հաշտ-
ւանի վկայություններ կպակսին, և դժվարություններ
կգտնվին, induction ոճը ասպացուցական պետք է
ընդունվի: Արդ՝ միջոց ժամանակին լրացնելու պետ-
քը ըստ իս գորավոր է: Դուք 26-ը 16-ի իջեցնելու
համար կուզեք Ղևոնդ եռաստեցվույն տարիները
շատցնել: Ես կաթողիկոսաց տարիներուն համար 15
հետինակներու քաղդատական ցուցակ են կազմած
և այս 15 ցուցակներն հիմադ կուտան 2 տարի, ութը
կուտան 3 տարի, մեկը կուտան 4 տարի, և մեկն ալ
21 տարի: Արդ՝ չորսը երեքին խառնելով 4 և 4 տա-
րերու շփոթության հիմամբ՝ կտեսնենք որ 15-են 14-ը
երեքն աւելի չեն տար, և բոլորովին անհնար կը-
դառնա Ղևոնդին տարիները շատցնել, առանց որևէ
պատմական պահանջի, զի գործունեությունն ալ չու-
նի: Այս է իմ տեսությունը և բավական կսեպեն հա-
մառտակի ակնարկել:

Կխնդրեմ որ պատասխանած ատեննիդ մեր սի-
րելիներուն, և մանավանդ, Կարապետ Ծ. վրդ-ի մա-
սին ստույգ և լիովի տեղեկություններ տայիք:

Ողջունիվ սիրո մնամ սիրելիւդդ աղոթաբար

Մաղաքիա արք. Օրմանյան

*
* *

Համար 7

Ի հերա Կ. Պոլսո, 15 մայիս 1909

Հոգեշնորհ տ. Երվանդ վրդ. Տեր-Մինասյան

Սիրելի

Ներկայ կգտնեք իրենցիսի վկայությանց քաղ-
վածը, ինչպես որ ուզեր էիք: Անտոնյան հարք իրենք
աշխատեցան ամենայն խղճմտությամբ, հսկողու-
թյամբ իրենց արքայապետ Ռափայել Միա-
սեպեանի, որ գրական գործոց հմուտ և կարող և մը-
տադիր անձնավորություն է:

Ընդ ամենն 82 վկայություն գտնված է. բայց
պետք չէ աշխատությունը այդ արդյունքն չափել.
որովհետև պետք եղած է երկիցյան in folio հոտոր-
գի երկու հաստ հատորներ թարթափել, ուստի քա-
վական ծանր աշխատություն մը կատարված է:

Փոխարինության համար արքայապետ առաջարկն է
ոչ թէ դրամական այլ գրական փոխարեն ստանալ.
և այդ բանը Ձեզի ալ դյուրին կըլլա Էջմիածնի հը-
րատարակություններն և մուցիսկ Ձեր և ընկերաց
գործերն (Տիմոթեոս, Իրենցիոս, Ասորոց հարաբե-
րությունը, եկեղեցական պատմություն և այլն) տա-
սը հատոր մը նվեր դրկեք Անտոնյանց մատենադա-
րանին, Արարատի առաքումն ալ ավելցնելով: Ասի-
կա կծառայե հարաբերությունը պնդելու, վասն զի
Անտոնյանց մատենադարանը կարևոր պարունակու-
թյուններ ունի, ինչպես գիրք թղթոց և Վիեննայի
Հանդեսին մեջ տրված տեղեկություններն և Վենե-
տիկի Պիսիդաս հրատարակութենն ալ տեղեկացած
եք, և կարող կըլլաք ասպագային ուրիշ օգուտներ ալ
քաղել: Տեր-Մովսեսյան Մեսրոպ վարդապետն ալ
անցյալ տարի Անտոնյանց մատենադարանը այցելեց
և օգուտեցաւ:

Դրկվելիք գիրքերը դյուրության համար իմ հաս-
ցեիս կդրկեք, և ես տեղը կհասցնեմ: Այս մասին
այսչափ: Հարկավ հասնիլը կծանուցանեք:

Պատգամավորներ* 13-ին հասան. ես գիրքնք չուե-
սա, որովհետև տունն չեմ ելներ տակավին և չգիտեմ
թէ անոնք ինչ կընեն. բայց կհուսամ կերպով մը հան-
դիպիլ:

Կաթողիկոսին դեպի Պետերբուրգ մեկնումը նշա-
նակված է 22-ին կամ 25-ին Սևաստապոլի ճանա-
պարհով:

Առայժմ ավելցնելիք չունեմ և Ձեր պատասխանին
կսպասեմ, Ձեր լուրերուն ալ կկարոտիմ: Կարա-
պետ, Գարեգին և Հուսիկ վարդապետներուն սիրո
ողջույններ, և սիրելությանդ մնամ աղոթաբար

Մաղաքիա արք. Օրմանյան

Կխնդրեմ որ ինձի Էջմիածնի օրացույց մը դրկեք
ուստից այս տարի չստացա:

*
* *

Համար 8

հերա, 25 մայիս 1909

Հոգեշնորհ սիրելի.

Ընտարանի ուսանող պ. Երվանդ** Ամատունի երկու
բուլղարացի ընկերներով հանձնեց Ձեր մայիս 12-ի
սիրադրոշմը, և շնորհակալությամբ կպատասխա-
նեմ, ինչպես որ ինձի կամոն ըրի՝ գորդին պատաս-
խանել. և չեմ գիտեր թէ Գարեգին և Հուսիկ վար-
դապետներ ինչու վերջին գիրքնու չպատասխանե-
ցին:

* Խոսքը վերաբերում է հորընտիր կաթողիկոսին
Էջմիածնի առաջնորդելու համար Կ. Պոլիս ուղարկ-
ված պատգամավորներին կամ, ինչպես այն ժամա-
նակ ասվում էր հրավիրակներին:

** Պետք է լինի Երվանդ:

Չեմ գիտեր թե ինչպես օգտակար կրնամ ըլլալ Ձեր սիրեցյալ աշակերտին, քանի որ գործունյա ոչ մի դեր չեմ վարեր, և բոլորովին քաշված կմնամ։ Ստեփանոսյան բառադանին* գործը արդեն լրացած է և հղած եմ. և ցարդ ստացած կըլլաք. հետեւ վաքար այդ կողմնն ալ իրեն աշխատություն չմնար։

Պատգամավոր սրբազաններ և հայր սուրբեր եկան ու գացին։ Կաթողիկոսին այցելած օրս երկու սրբազաններն ալ տեսնել ուզեցի և բացակայած ըլլալուն պայմանով թողուցի. երեկոյան Սաթուրյան և Ծախյան սրբազաններ ինձի եկան. ժամն ավելի խոսակցեցանք. երկուսին տեսություններն ալ լավ տեսաւ. կացության վրա տեղեկություններ ուրախացուցիչ չէին, ապագայի վստահություննին ալ գորավոր չէր։ Կըցովեին որ քառանուն ցանկն ալ գաղտնի քվեարկությամբ չկազմեցաւ։

Ուրիշ երեկո մըն ալ Աղավերյան** վրդ. եկաւ առանձին, որ ինձի մօտ ծանոթություն էր։ Ժամն ավելի ալ մտաւ և խոսակցությունը ամբողջ էջմիածնի շուրջ էր. և մեկ մ'ալ իր սիրելի մյուսը եկեղեցական կալվածոց ուսումնասիրությունը։ Խոսակցության կերպը լուրջ էր, ինքն ալ հմուտ և աշխատող անձի տպավորություն թողուց։ Որովհետեւ գիտեի իր և Ձեր մեջ բաց լինելը, անողակի իրեն հորդոր կարդացի, որ երիտասարդ ույծերու համերաշխությունը հարգվի, անոնք իրենց մեջ չպատակտվին, արդեն արտաքին հակառակորդներ շատ ունին, եթե իրարու հետ միությամբ չգործանան, իրենք ալ կըսկարանան, գործն ալ, եկեղեցին ալ կ'սկսանգվի։

Իսկ Մեսրոպ վրդ. (Տեր-Մովսիսյան) պատիվ չըրաւ երևալու։ Յուր առաջին զգաւտյան ատեն իմ տանը հյուրընկալված էր, և յուր աշխատությանց ամեն դյուրություն ստացած էր. և երեսն ի վեր չափազանց շողոքոթություններ քրած էր։ Կսպասեի որ կհիշե ու կուգա։ Սակայն ընտրությանց միջոցին յուր խարդախ դերը կերես թե հիշեց, և երես չունեցաւ մերկայանալ։

Կաթողիկոս մեկնեցաւ շաբաթ օր, ամսույս 28-ին, ուղիղ ի Պետերբուրգ։ Պատրիարքության ատեն երեք անգամ ուզած էի տեսակցիլ և փախուստ էր տված, վերջին անգամ ինքն փափագեցաւ և լուր դրկեց և գացի։ Ժամն ավելի տեսակցեցանք։ Մեր գործերը պատմել Ձեզի համար ավելորդ, իսկ կաթողիկոսությանը համար ըսի որ «ի սրտն կփափագիմ, որ ինքն հաջողի, որպէսզի ազգը չի ձախողի»։

Իր գործունեության և ապագա ակնկալությանց համար շատ բան չունիմ ըսելու. դուն ինքդ սկսեր ես կոստել։ Ես միայն դիտել կու տամ, որ բոլոր Իզմիրլյանի գովաբանները և ընտրության պաշտպանները անոր զգացումները մերթողեցին, կարողության մասին չխոսեցան, արդյունավորության փաստեր չըտըվին։ Եթե լոկ զգացմամբ գործեր կրնան հաջողի՝ վստահություն զլանալու պատճառ չկա։

* Ստեփանոսյան բառարան—Ստեփանոս Ռոշչյանի բառարան, որի մասին խոսված է մայիսի 10-ականներում։

** Պետք է լինի Աղավերյան։

Պ. Ամատունի երկու թիվ Գեղարվեստ հանձնեց. բայց չիմացա թե ձեր նվերն է, թե ոչ խմբագրապետին, կամ թե յուր Ամատունիին։ Երբոր բացատրություն տաւանմ, կպարտավորվիմ շնորհակալություն հայտնել։

Հատուկ ողջուններ բոլոր սիրելյաց և սիրանվեր ընծյուք

Մնամ հոգեշնորհ վարդապետի աղոթարար

Մաղաքիա արք. Օրմանյան

*
* *

Համար 9

Կ. Պոլիս, Սահմանֆանո գյուղ. 20 հունիս 1909

Հոգեշնորհ սիրելի

Բժշկական ստիպումներ և առողջական պահանջներ ստիպեցին գիս քանի մը ամիս օդափոխության ելնել այստեղ, հեռու ժողովրդն և քաղաքի ապականյալ օդն, կատարյալ համադարձության մեջ, առանց իմ քաշված կյանքի կերպը փոխելու։ Տեղվույս օդն ու դիրքը և համարձակ շրջագալությանց դյուրությունը սկստն իրենց օգուտը ցուցնել։ Այս պատճառով գրական աշխատությանց ալ դադար տված եմ, և մեկ երկու ամիս ևս այսպէս պիտի շարունակեմ։

Այս միջոցին ստացա հունիս 6-ի կրկին մամակներդ և հունիս 8-ի մամակդ. միանգամայն ինը հատոր գիրքեր Անտոնյանց գրադարանին, և երեք հատոր գիրքեր Բաբգեն վրդ.-ի համար, որոնք տակավին մոտս են, բայց իրենց տերերուն կհասցեն։ Ձեր շնորհակալությունը Անտոնյանց արքային և մյուս հանձնարարությունը Հ. Գրիգորիս Գալեմքարյանի՝ մամակով հաղորդեցի իրենց, Բերայե հեռու գտնվելու պատճառով։

Ստացա ևս ինձի ուղարկած օրացույցները և շնորհակալ եմ։ Պատրիարքարանն բան մը չստանալուս, ուզեմ ալ ավելորդ սեպած էի, և Ձեզի դիմելը դյուրագույն դատեցի։

«Եղիշին» ուշ հասնելը Գաղտնի ցեղգութայի վերագրելի կկարծեմ, թե ոչ թողարդույն ալ կրցած է Ձեզ հայտնել, թե մամակներես կանուխ ճամբա հանած էի զայն՝ Բաբգեն վրդ.-ի տոմսն ալ մեղը կցելով։

Էջմիածնի մեջ այսօր թերևս մորընտիր կաթողիկոսը մերկա ունիք, կամ թե վաղը մյուս օր կունենաք։ Ինչպէս իրեն երեսն ալ ըսի, իմ իղձս միշտ մոյմ է. կմարթեմ և կբարեմարթեմ որ կաթողիկոսը հաջողի, որպէսզի ազգն ու եկեղեցին չձախողի։ Կաթողիկոսը հանրության անձնավորությունն է. ինքն անձամբ վնաս չկրեր, ազգ ու եկեղեցին է որ կըսուծե, երբ մա չհաջողի։

Կփափագիմ որ մեր կաթողիկոսի մուտքը բարեգուշակ ըլլա Աթոռին և միաբանության, և ուղղամիտ վարչության և գործունյա աշխատության դուր բանա ամենուն համար։ Դիտում և զգացում չեն պակսիր իրեն, սակայն պետք ունի վարչական ոգի և անձնական կարողության, և կսիրեի, որ ամենաբարձր դիրքը տար իրեն այդ ձիրքը, և ինչ որ յուր մակըն-

թափացին մեջ նկատված է՝ շրջապատողներու ազդեցությունն տպավորվելու չիմար, կամ գոնե լավագույն տարրերով շրջապատվելու զգուշավորություն ունենար: Ես փոքր ի շատե՛ր բան մը հասկցցնել ուզեցի մեր տեսակցության առթիվ, բայց գիտե՛ի, թե ինն ետքը շատ տարբեր շրջանակներու մեջ պիտի իյնար, և նորանոր տպավորությանց պիտի ենթարկվեր:


Բարեկարգությանց խնդիրը երկու տեսակետեն պետք է նկատի առնու: Մեկը մասնավոր և մյուսը ընդհանուր, եթե այսպես հենար է ինձ բացատրել: Առաջինն է կարգ ու կանոն, Միաբանության մեջ discipline-ի հոգի, մատակարարական ուղղություն, անձերու ընտրություն, գործերու դասավորություն և ընդհանուր վարչական անիվին կանոնավոր հոլովում: Իսկ երկրորդն է՝ եկեղեցական կանոններու և ծեսերու և սովորություններու խոհական épuration մը, ի բաց նետելով հետզհետե ինչ որ ժամանակը, զեղծումը օտար ազդեցությունը և օտարամտությունը սպրդեցուցած են մեր եկեղեցվույն մեջ, և հիմեհորդ դարու նախաքաղկեդոնական ժամանակներու գործության մեջ վերահաստատել Հայաստանյայց ուղ-

ղափառ եկեղեցին: Գործերը կանոնավորապես և հիմնապես և իրականապես հառաջացնելու համար պետք է առաջին գործունեությունը մասնավորին վրա տարածել, որպեսզի դյուրին ըլլա ընդհանուրին անցնել, ապա թե ոչ նոր շփոթություններ կրնան հառաջիկ՝ երբ discipline-ի հոգին արմատապես զորացած չէ և յուրովի գործելու և իրար զգեսնելու հոգին ասպարեզ կգտնե:

Ահա իմ programme-ը, որուն այլևս ի հեռուստ նկատողը կմնա ինձ լինել, և իմ քաջված դիրքիս մեջ բարեմաղթանք միայն կամ թե գրավոր աշխատությամբ թելադրել:

Հոգ. Հուսիկ և Գարեգին և Կոմիտաս վարդապետներու սիրալիր ողջույններ. Ղևոնդ եպիսկոպոսի ողջագուրանքը շնորհակալություններ. Կարապետ վրդ.-ի խնդակցական բարի ազատման գործվանքներ և Սուքիաս արքեպիսկոպոսի մեծարանաց վկայություններ: Ներսես արքեպիսկոպոսի ալ եղբայրական ողջույններ, որ հարկավ կաթողիկոսին հետ և կած է:

Սիրելությանդ ալ սիրալիր ողջույններ, որով մնամ Մաղ. արք. Օրմանյան



HA-4.258



ՊԱՐԳԵՎ ԵՊՍ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

(Աուսջնորդ, Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի)

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏ ԿԱՊՎԱՏ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԾՈՒՐԶ*

Վասակի գործունեությունն արդարացնող բանասերների մեծամասնությունը՝ խոսելով Ավարայրի ճակատամարտի մասին, այն համարում է սուսկ փոքրիկ ընդհարում հայերի և պարսիկների միջև, որ վերջացել է հայերի պարտությամբ: Այս տեսակետի պաշտպաններն իրենց կարծիքները հիմնավորում են Փարպեցու պատմությամբ: Ըստ որի, ճակատամարտի սկզբում հայերը հալածում են պարսիկներին, սակայն հայոց զորքերի մի մասի փախուստը, որոնք Ավարայրի դաշտն էին եկել ոչ իրենց կամքով, այլ հարկից դրոշման, մտադիր լինելով պոտորել կովողների մտքերը և հետ պահել նրանց ճակատամարտին մասնակցելուց, թուլացնում է հայերի դիմադրությունը և պատճառ դառնում գլխավոր ուժերի շրջապատմանն ու ոչնչացմանը: Այնուհետև պարսից զորքերը՝ հետապնդելով հայոց փախստական զորամասերին, ունենալ կոտորում են, ունենալ էլ բանտարկում ամրոցներում: Բանտարկյալներից շատերին հաջողվում է ազատվել և ցրվել երկրի զանազան կողմերը:

Պատերազմի տեղում ընկած հայ մարտիկների թիվը, սպանված նախարարներին էլ հետը հաշված, Փարպեցու բերած տվյալների համաձայն, կազմում է երկու հարյուր յոթանասունվեց հոգի: Իսկ նահատակված փախստականներինը, որոնց ճակատամարտի? հաջորդող օրվա առավոտյան ամրոցներից բերել են և կոտորել, իսկ շատերին էլ փղերի ոտների

տակ ձգելով սպանել, յոթ հարյուր հիսուն հոգի: Պարսիկները ճակատամարտի ժամանակ կորցրել էին երեք հազար հինգ հարյուր քառասունչորս մարդ³³:

Փարպեցու կողմից Ավարայրի ճակատամարտի նկարագրությունն այնքան չոր ու ցամաք է, որ պատերազմական գործողությունները, իրապես, փոքրիկ ընդհարման տպավորություն են թողնում, թեև անհասկանալի է մնում, թե ինչպե՞ս կարող էր այդպիսի թեթև բախման ժամանակ երկուստեք սպանվել երեք հազար ութ հարյուր քսան մարդ: Նույնպես անհասկանալի է մնում, թե ինչի՞ հիման վրա մեր բանասերները Ավարայրի ճակատամարտը համարում են հայերի պարտություն, երբ պարսիկները, հենց Փարպեցու վկայությամբ, տառնելու անգամ ավելի կորուստ են ունեցել, քան հայերը, և երբ այդքան մեծ կորստի գնով նրանց չի հաջողվել գերեվարել, չեզոքացնել հայերի զինվորական ուժերը:

Փարպեցու մոտ, անկասկած, շփոթություն կա և ճակատամարտի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների ոչ լավատեսականությամբ, այլապես, նա հայերի երկու հարյուր յոթանասունվեց հոգու զոհվելը չէր նկատի որպես հայոց զորքերի շրջապատում ու ոչնչացում:

Ավելի համոզիչ և ճշմարտացի է Եղիշեի Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը: Նրա պատմելով՝ սայարապետ Վարդան Մամիկոնյանն Ավարայրի դաշտն է հավաքում վաթսուհինգ հազար հետևակ և

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1969 թվականի № Բ-ից:

³³ Փարպեցի, եր. 147—149:

միևնույն ժամանակ, որոնց ճակատամարտից առաջ բաժանվում է չորս զորամասերի: Գնալով դեպի Երևան, զորամասերի սկզբնական հայտնվելը և պարսից զորքերը խմբվում են Տղմուս գետի երկու ափերին, աշխատելով խանգարել մակրոնիդի գետանցումը: «...Եվ գետի դժվարությունից ախալեսցան պարսից զորքն սկսեց իր տեղում վրիժապանվել, գրոմ է Եղիշեն, — իսկ հայոց զորքն անցավ Երևան, և ձի նստած մեծ զորությամբ հարձակվեց: Երբ ժամանեց թափով իրար զարկվելով՝ երկու կողմից էլ զորքերը զայրացան և զայրությամբ գետին ընկած թաքստում էին: Այս մեծ տագնապի մեջ դեպի վեր մայեց քաջ վարդապետը և տեսավ, որ պարսից զորքի ընտիր-ընտիր քաջ զորականները հայոց զորքի ձախ կողմն ընկնեցին նա մեծ ուժով հարձակվեց այն տեղը և պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քնցեց գագազների կողմը և շուրջը պատելով կոտորեց մինչև նույն տեղը: Եվ այնպիսի տագնապ ու իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գետի հաստատուն կազմակերպությունը քայքայվեց, ցրվի և կալ, և նա՝ դեռևս պարտություն չկրած, փախուստ տվեց:

Այս աչքերը վեր բարձրացրեց Մուշկան Նիսալավորտը և տեսավ, որ հայոց զորքից ոմանք բաժանվել և ետ են ընկել լեռների հովիտներում: Ուստի և առաջապես բարձրացրեց, քաջալերեց իր շուրջը գտնված Արյաց զորքին, որոնք կանգնած էին Վարդանի գետի հանդեպ: Այնտեղ երկու կողմերն էլ իրենց պարտված էին զգում, և ընկած դիակների թիվն այնքան մեծ էր, որ նմանվում էր խորդորորդ քարակույտների:

Երբ այս բանը տեսավ Մուշկան Նիսալավորտը, պատում էր Արտաշրի գագազներին (փղերին), որը նրանց վրա նստած էր բարձր դիտանոցում, ինչպես միջնաբերդում և գալարափողերի բարձր ձայնով շտապեցրեց իր գնդերին և առաջամարտիկ զորքերով շրջապատեց նրան:

Իսկ կորովի Վարդանն իր քաջ հիզակակիցներով մեծ կոտորած արեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ ստանալու կատարյալ նահատակության պատկեր:

Եվ պատերազմի գործը երկարելով՝ օրը տարածամեջ և երեկոյան դեմ դադարեց³⁴:

Վերջացնելով ճակատամարտի նկարագրությունը, Եղիշեն ավելացնում է. «...Ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին:

Բայց որովհետև հայոց զորավարն ընկել էր մեծ պատերազմում, այնուհետև էլ ոչ ոք զխալով չկար մեջտեղում, որին հենված ժողովվեին մնացած զորքերը: Թեպետ ողջ մնացածներն ավելի շատ էին, քան թե մեռնողները, սակայն նրանք ցան ու ցիր եղան և բաշվեցին երկրի զանազան ամուր տեղերը և ուժով տիրեցին շատ գավառների ու բերդերի, որոնք ոչ ոք մինչև իսկ առնել չէր կարողանում»³⁵:

Եղիշեի մոտ հայերի կողմից ընկածների թիվը հազար երեսունվեց հոգի է, որոնք բոլորն էլ, ի տարբերություն Փարսեցու տվյալների, զոհվել են ճակատամարտի օրը՝ պատերազմի դաշտում: Պարսիկների կորուստները նույնն են, ինչ որ է Փարսեցու մոտ. երեք հազար հինգ հարյուր քառասունչորս մարդ: Երկուստեք սպանվածների թվականն այս հարաբերությունը խոսում է հօգուտ Եղիշեի՝ հօգուտ նրա Ավարայրի ճակատամարտին պատերազմական գործողությունների խոշոր կերպարանք տալուն, որովհետև, ինչպիսի քաջագործություններ էլ ցույց տալին հայոց զորքերը, դժվար է հավատալ, թե հաջերը ճակատամարտում կորցրել էին միայն երկու հարյուր յոթսունսունվեց հոգի, իսկ պարսիկները՝ երեք հազար հինգ հարյուր քառասունչորս³⁶:

Ավարայրի ճակատամարտը փոքր ընդհարում համարողները, նկատի ունենալով Եղիշեի հայրենասիրությունը, պատմությունը գրելու նպատակը, չափազանցություն են համարում նրա կողմից հայերին պարտված կողմ չճանաչելը՝ հայոց զորամասերի ուժեղ դիմադրությունը Կապույտ լեռան, Տմորիքի ամրոցներում, Խաղտյաց լեռներում, Տալիսի ձորագավառում, Արցախի անտառներում և այլ տեղերում, հաստատում են Եղիշեի պատմածների արժանահավատությունը, որ հայկական փոքրաթիվ զորքը, մի ամբողջ օր կռվելով Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկի՝ Իրանի մեծաքանակ, փղերով ու ժեղացված զորքի դեմ, Ավարայրի դաշտում չի ջախջախվել, այլ ցրվել է երկրի անտառի վայրերը և շարունակել պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ:

Հայագետների մեջ վեճի և տարակուսանքի առարկա է դարձել նաև այն հանգամանքը, թե ինչո՞ւ Վարդան սպարապետը, որ փորձառու զորավար էր, իմանալով իր ուժերի թույլ լինելը, փոխանակ լեռնային կռիվներ վարելու, ինչպես հետագայում վարել է իր եղբորորդի Վահան Մամիկոնյանը, որոշել է դաշ-

³³ Միջնադարյան հայ և օտար պատմիչները սովորաբար քիչ դեպքերում են հիշում ճակատամարտերում սպանվածների թիվը, իսկ վիրավորներին ընդհանրապես չեն հիշում: Համեմայն դեպ, խոշոր էր համարվում այն ճակատամարտը, որի ընթացքում սպանվածների թիվը հասնում էր հնգից վեց հազարի, և ավելի: Բերենք բազմաթիվ օրինակներից միայն մեկը: 552 թվին Իտալիայում օստ գոթերի դեմ մղած պատերազմների ժամանակ բյուզանդական բանակը հայազգի հռչակավոր զորավար Ներսեսի (կամ Նարսեսի) հրամանատարությամբ մի ճակատամարտում պարտության մատնեց օստ գոթերի թագավոր Տոսիլիոսի զորքերին: Պատերազմի դաշտում սպանվեցին վեց հազար հոգի: Այդ ճակատամարտը պատմիչների կողմից նկատվել է որպես ժամանակի ամենախոշորը (տե՛ս «История Византии», Москва, 1967 г., том I, стр. 319): Եթե հարցին այս տեսակետից մոտենանք, ապա այդ դեպքում ևս Ավարայրի ճակատամարտը, ուր երկու կողմերից ըստ Եղիշեի, սպանվեց 4570 մարդ, չի կարող համարվել որպես փոքր ընդհարում:

³⁴ Եղիշե, եր. 106—107:

³⁵ Անդ, եր. 108:

տային մեծ ճակատամարտ տալ պարսից բանակին:

Վարդանի պատերազմական ծրագրերի մասին քիչ տեղեկություններ ունենք: Եղիշեի վկայությամբ՝ Վարդանը քաջ գիտեր իր ուժերի անբավարար լինելը, նույնիսկ նրան հայտնի էր իր հետ միաբանվածներից շատերի երկմտությունը³⁷, և եթե, այնուամենայնիվ, որոշեց բաց ճակատամարտ տալ, այդ անհրաժեշտություն համարեց: Հեր և Զարեվանդ կենտրոնացված պարսից հսկայական բանակը սկսել էր ասպատակել շրջակա հայ գավառները և սպառնում էր ներխուժել «Աշխարհի մեջտեղը»³⁸: Ստեղծված իրադրությունը աննպաստ էր լեռնային կոիվների համար: Մանր ընդհարումներով հնարավոր չէր կանգնեցնել պարսից զորքերի առաջխաղացումը, ուստի Վարդանը որոշում է բաց ճակատամարտ տալ, մտածելով՝ «Գուցե այնտեղ՝ Հեր և Զարեվանդ գավառում վերջանա պատերազմի գործը»³⁹:

Բացառված չէ նաև այն, որ թերևս Վարդանը, ճակատամարտ տալով, հույս ուներ մախ զգալի հարված հասցնել պարսից զորքին, այնուհետև, նահանջելով երկրի ամուր վայրերը, ոչնչացնել թուլացած պարսկական զորամասերին, որ և մասամբ կատարվում է, թեև ոչ այն չափով, որպիսին կկատարվեր, եթե չըզոհվեր Վարդանը:

Անշուշտ, Վարդանի համար պակաս դեր չի խաղացել նաև խնդրի բարոյական կողմը: Ազատասեր ազգերի պատմության մեջ քիչ չեն եղել վճռողական պահերը, երբ վտանգված հայրենիքի և նրա անարգված արքայությունների առջև մահը երևացել է իբրև խաղալիք, կյանքը՝ անպատվություն: Ահա այդպիսի մի պահ հայ ժողովրդի շահերը և մարդկային արժանապատվությունը Վարդանին և նրա զինակիցներին առաջնորդել է Ավարայրի դաշտ՝ ինքնագոհողության գնով:

Ավարայրի ճակատամարտը բախտորոշ իրադարձություն հանդիսացավ հայ ժողովրդի ճակատագրի համար. նա հարկադրեց պարսից արքունիքին փոխելու իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Ընդհատ, ժողովրդական այդ հուժկու ապստամբությունը չազատագրեց հայ ժողովրդին պարսկական լծից, սակայն ձեռք բերածն էլ բարոյական խոշոր հաղթանակ էր, որին հասնելու համար ահագին կազմակերպչական թափ և եռանդ հանդես բերեց Վարդանը:

Ընդհանրապես Վասակի պաշտպանները, որոնք երբեմն քառեր չեն խնայում փառաբանելու նրան՝ անվանելով «Իմաստուն Վասակ», «Հսկա Վասակ», լուրջամբ են անցնում Վարդանի գործունեության կողքով, իսկ եթե առիթի բերումով ստիպված են լինում խոսել, Վարդանին ցածր են դասում Վասակից: «Վարդան Մամիկոնյանը... Վասակի պես մի բարդ բնավորություն, մի ուժեղ և ինքնուրույն անհատա-

կանություն չէր»⁴⁰,—ասում է Լեոն, և նույնը կրկնում են մյուսները:

Վարդանին այդպիսի բնութագիր տալու փաստեր չկան: Եղիշեի և Փարպեցու տողերից Վարդանը մեզ ներկայանում է որպես ժամանակի համեմատ լավ ուսում առած, խելացի, խիզախ, հաստատակամ և հետևողական բնավորության տեր անձնավորություն, նույնպես կասկած չի հարուցում նրա հեռատես և քաղաքագետ լինելու հանգամանքը: Իսկ որպես նշանավոր զորավար, Վարդանը հայտնի էր ոչ միայն հայկական շրջանակներում, այլև պարսկական և բյուզանդական արքունիքներում:

Բանասերներից ոմանք, Վասակին արդարացնելու համար՝ կովաններ չգտնելով Եղիշեի մոտ, պախարակում են նրան զանազան անպատշաճ արտահայտություններով: Հնամարկել այնպիսի երախտալիք անձանց գործունեությունն ու աշխատությունները, ինչպիսիք են Սահակը և Մեսրոպը, Մովսես Խորենացին ու Եղիշեն, Նարեկացին և Խաչատուր Աբովյանը, բանասերների գործն է, բայց անվանարկել այդ պաշտելի և խելելի անունները, որոնք իրենց առողջ հայրենասիրությամբ, մտքի բարձրությամբ, ինչպես և օտար ժողովուրդների նկատմամբ տաժաժ հարգանքով, խիղճն են հայ մարդու և հպարտությունը հայ ազգի, անթույլատրելի է:

Եթե պատմության նպատակն է վերականգնել ազգի անցած ուղին, պարսավել պատմական անձնավորությունների թերությունները, դրվատել առաքինիների, իմաստասերների, հայրենասերների և այլ վսեմ գաղափարներին հետևողների գործերը, դրանով իսկ նպաստել առաջադիմությանը, ուղեցույց լինել հետևորդների կյանքի մեջ, ապա Եղիշեն լրիվ կերպով կատարել է իր պարտքը իր հայրենակիցների հանդեպ:

Ժամանակի իրադարձությունները խոր տպավորություն են թողել Եղիշեի վրա: Հայրենիքի անմիջապար վիճակը, մտավոր ուժերի հալածանքն ու փախուստը, իր ուսուցիչների և ընկերների սրախողխող արվելը Պարսկաստանում, այնպիսի ուժեր են նրա հոգին, և սիրտը լցվում է գայլորթով՝ ընդդեմ Վասակի, որը՝ ներքին երկպառակություններ սերմանելով, թուլացրեց երկրի դիմադրական ուժերը և առիթ տվեց թշնամուն տակն ու վրա անել հայրենի հողը: Ամեն անգամ, երբ Եղիշեն հիշատակում է Վասակին, սևացնում է նրան որքան հնարավոր է. «Այս հիշատակարանը գրվեց նրա (Վասակի) մասին,—ասում է Եղիշեն,— նրա հանցանքները կշտամբելու և նրան մեղադրելու համար, որպեսզի այնքան մարդ, որ լսի և իմանա այս բանը, նզովք կարդա նրա հետևից՝ և նրա գործերին ցանկացող չլինի»⁴¹: Եղիշեի այս խոսքերը չպետք է զարմանալի թվան և «բորբոքված կրքի» արդյունք համարվեն: Ո՞ր ժողովրդի պատմագիրն է, որ չի դատապարտում հայրենիքի դավաճանին, չի գամում նրան անարգանքի պոնիմ. Եղիշեն բացառություն չպետք է կազմեր: Սակայն Եղիշեի մեծությունը Վասակին պատմության դատաստանի առջև մեղադրելու

³⁷ Եղիշե, եր. 91:

³⁸ Փարպեցի, եր. 141:

³⁹ Փարպեցի, էջ 141:

⁴⁰ Լեո, «Հայոց պատմություն», հատ. II, եր. 59:

մեջ չէ, այլ Վարդանանց պատերազմի ժողովրդակա-
նացման, այդ պատերազմը համազգային նշանակու-
թյուն ունեցող զաղափարի վերածելու մեջ է: Առանց
աշխատագրության կարելի է ասել, որ եթե չլինե-
ր Եղիշեի հզոր և ոգեշնչող տաղանդը, չերմ հայրենա-
վարությունը, ապատմաբ ժողովրդի բոլոր դասակար-
գների նկատմամբ ունեցած սերն ու խանդաղատանքը,
այն Վարդանանց պատերազմը (եթե այն հասած լինե-
ր) միայն Փարպեցու միջոցով՝ սերունդների կողմից
լիցիտվեր որպես ազատագրական պայքարի խոշոր
բզդյանարտերից մեկը, որոնցով լեցուն է հայոց պատ-
մությունը:


Վարդանանց պատերազմի ժողովրդականացման
բզործում մեծ դեր է խաղացել այն հանգամանքը, որ
հեղինակը պատմական իրադարձությունները շարա-
դրելիս չի մնացել լույս դիտողի դերում, այլ իր անձ-
նական ապրումները խառնել է պատմական դեպքե-
րի ընթացքին: Նա մերթ հանդես է եկել որպես օտար
բռնության դեմ բողոքող, մերթ ջերմ ջատագով ա-
պրտամբների հայտնի նշանաբանի՝ «Հարազատ եղ-
բոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ
դուրս է եկել Աստծու պատվիրանի ուխտից», մերթ
Ալարայրի ճակատամարտի փառաբանող, մերթ
«Հայոց աշխարհի փափկասուն տիկիներին» գովա-

բանող: Եվ ինչի մասին էլ Եղիշեն պատմել է, նախ և
առաջ իր ներկայացրած պատկերներով արտահայ-
տել է իր տրամադրությունները, մտածումները: Նա
ասեց: րեւ ուխտապահների (հայրենասերների խըմ-
բակցության) հետ է, ոգևորվում է նրանց հաջողու-
թյուններով, վշտանում՝ անհաջողությունների հա-
մար: Նրա լավատեսությամբ լցված առաջնորդող
ձայնը՝ Վարդան սպարապետի և Ղևոնդ Երեցի խոս-
քերով՝ հորդորում է ժամանակակիցներին և հետ-
նորդներին՝ սիրել հայրենի եկեղեցին և նրա արքու-
թյունները, հայրենիքին սպառնացող վտանգների
պահին ցույց տալ բարոյական արիություն և աներկ-
յություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մար-
տիրոսանալ հանուն բնության ձեռքին տառապող
հարազատ ժողովրդի ազատության:

Արտահայտելով այն ամեն ազնիվ ու նվիրականը,
որ հատուկ էր Վարդանանց և Ղևոնդյանց, Եղիշեն
Ալարայրի դաշտում ընկածների և Իրանի հեռավոր
աքտրավայրերում նահատակվածների թարմ հողա-
բլուրներից առաջացած հիշատակների վրա կերտում
է իր ոգեշունչ մատենիկը, հաստատ համոզված լի-
նելով, որ իր վաստակը, «Սիրելիների համար մխի-
թարություն է, հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քա-
ջալերություն», չի կորչի և չի մոռացվի երախտագետ
հայ ժողովրդի կողմից, այլ կհանդիսանա ոգևորու-
թյան աղբյուր՝ նրա կյանքի ամենամտալ և վճռողա-
կան օրերին:

41 Եղիշե, եր. 126:





Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

VIII.—Վերջին հանդիպումներս Կոմիտասին հետ

Մվարած թաքստոցի մը մեջ, լուր կառնեմ
սակայն դուրսի դեպքերեն: Գուժեր է միայն,
որ գավառեն կհասնին Պոլիս, սարսուռ
պատգնելով տունն տուն ու մտնելով մինչև
մեր թաքստոցները:

Կոմիտասի և իր խումբին Պոլիս բերվիլը
սփոփանքի պահ մը կըլլա մեզ համար:
Հանդգնությունը կունենամ զինքը երթալ
գտնելու: Զայն պատմած եմ տարիներ ա-
ռաջ:

«Թաքստոցս էի երբ ինձի լուր բերին թե
Կոմիտասը Պոլիս են փոխադրեր աքսորեն:
1915 ամառն էր: Աչքս առած ամեն վտանգ՝
գացի զինքը տեսնելու: Կուզեի զինքը համ-
բուրել, ու լուր առնել աքսորը մնացած եղ-
բայրներու մասին: Չանդրըրեն կու գար,
ու այդ պահուն Չանդրըր էին Վարուժան,
Սևակ, և շատերը մեր սրտի և մտքի եղբայր-
ներեն:

Հուզիչ էր առաջին վայրկյանը: Երկա-
ր չկրցանք իրարու բառ մը ըսել: Վերջապես
ճիգ մը ըրի, ու սկսա հարցնել: Հակիրճ կըց-
կըտուր խոսքերով կպատասխաներ վարդա-
պետը ըրած հարցումներու: Հայտնի էր թե
առանց սարսուռի չէր որ միտքը կբերեր ինչ որ
զգաց ու տեսավ Պոլսեն Չանդրըր, ու Չան-
դրըրեն Պոլիս: Բնավորությամբ դուրսգր-
գիւ ու երկչոտ՝ շատ ազդված էր այն գիշերը
երբ զինքը եկեր տարեր էին անկողնեն: «Եր-

կու գիշեր Ազատամարտ պանդոկը կեցա»
ըսավ...

Կակնարկեր կեղր. բանտի այն խցիկին՝
ուր հագիվ տարի մը առաջ մնացեր էի քանի
մը ամիս, և մեկնած ատենս «Պանդոկ Ազա-
տամարտ» փորագրեր դռանը վրա, առանց
գիտնալու, ավա՜ղ, թե տարի մը հետո, այս
անգամ եղբրական պարագաներու տակ, հոն
պիտի գային շատ մը եղբայրներ՝ սարսափի
մեկ-երկու գիշեր անցընելու, ու հոնկի մեկ-
նելու իրենց աքսորը, մինչդեռ ես ձեռք չպի-
տի տալի օձիքս...

Երբ աքսորի իր տպավորությունները կը-
սեր՝ վարդապետը մեկնե ընդհատեց իր
պատմությունը, և իբրե թե հանկարծական
մղձավանջի մը բռնված ըլլար, պոռաց երե-
սիս.

— Գնա՛ թաքստոցդ մտի. չե՞ս գիտեր
որ թանկագին է մնացողներեն ամեն մեկուն
կյանքը...

Զինքը երկար ատեն չպահեցի իր հուզու-
մին մեջ. մեկնեցա: Կղզայի որ սարսափը իր
հոգվույն մեջ արդեն բույն է դրած: Բայց
թաքստոցես կհետևեի իրեն. օր մըն ալ լսե-
ցի թե մեղամաղձություն մը եկած է վրան,
աղոթքի կկենա երկար, հսկում կընե ու ծոմ
կպահ՝ Աստուծո գութը հայցելով մեր դժ-
բախտ ազգին: Փորձ մը ըրի դարձյալ զինքը
տեսնելու. այդ օրերուն խստությունները
մեղմացեր էին պահ մը, ու փողոցը մարդ
չէին ըռնել: Երբ սենյակը մտա՝ վոնտեց ու
երեսը անդին դարձուց. իր հսկումը խան-
գարեր էի: Մտան հարցուփորձեցի. ու ան
ինձի պատմեց թե շատ ջղայնացած է վար-
դապետը, մարդոցմի կխորշի, կապալխա-
րե, ու օրերով ծոմ կպահ՝ որովհետև սպա-
ռած են իր ապրուստի միջոցները...

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվա-
կանի №Ն Ա-ից, Ե-Ժ-ից, 1966 թվականի №Ն Ա-
Զ-ից, Բ-Ժ-ից, 1967 թվականի №Ն Դ-Զ-ից և 1968
թվականի №Ն Ա-Դ-ից, Է-Ժ-ից:

Հետո միայն այս տխուր պատմության մնացած մասը իմացաւ: Կոմիտասը հանձնախումբ մը ունենէ՝ որուն կհամարեցին իր համերգներուն հասույթները: չէ՝ որ երաժշտանոց մը պիտի հիմնվեն՝ եթէ աղետը չգար: Կոմիտասին աքսորեն տարված օրերուն սպառնալու մոտ է եղեր համարված գումարը: օր մը հանձնախումբի անդամներին մեկը կղզացնէ իրեն այդ բանը, ու կհանձնարարեն խնայողութեամբ ապրիլ: հարվածը ծանր էր արվեստագետին համար, ու ան կուստե ծով պահել՝ դառնացած կյանքին ու մարդոց դեմ, մանավանդ անոնց դեմ՝ որոնք բարեկամ կձեռնադրէին իրեն: Անկէ հետո էր որ մեյմադձութիւնը սաստկացաւ, ու հիմարանոց նետեցին զինքը՝ որպէսզի ծախքը ավելի քիչ ըլլա, ու հոն իսկ՝ խնայողութեան ձեռք խորհեցան: Իր աշակերտները պատմած են ինծի թէ ի՜նչ կարոտով ու խորժակով կպահիր իրենց տարած պատառ մը սպիտակ հացն ու շոքրլան...:

Կոմիտասը շինեցեցա՛վ: Ինքզինքը խենթեցուց: Իր սրտին մեջ մարդոց դեմ կուտակված ոխը, սրտմտութիւնը իր մտքին պայծառութիւնը խռովեցին: մե՛նք խենթեցուցինք զանիկա:

Կա՛վ էր որ այս տողերը գրելի՝ երբ դարձալ շատցած են զինքը ողբացողները...»²⁹:

ԺԱ

ԳՈՂԳՈՒԱՆ

I.—Ու Գողգոթան կսկսի

Շատերու համար աքսորն եղավ Գողգոթան: Տարագրութեան մեջ էր որ խաչը հանեց զիրենք դահիճը, ու գերեզման մը անգամ զլացաւ իրենց:

Կոմիտասին բուն Գողգոթան պիտի սկսեր աքսորեն դարձին: Անոր խաչին ճամփան չէր վերջացած դեռ, ու պետք էր որ անցներ նոր հանգրվաններէ:

Կոմիտաս զարհուրանքներ չէր տեսներ իր աքսորի օրերուն: ոչ տեղահան եղող կարավաններու հանդիպել էր ճամփան, ոչ ալ ջարդերու ականատես էր եղեր: Կսխալին հետեւաբար անոնք որ ահապոր տեսարաններու առթած սարսուռին կվերագրեն հոգեկան իր փլուզումը:

Բայց սխալ պիտի ըլլար նույնպէս կարծել որ աքսորի իր զույգ շաբաթը դեր չկատարեցին այդ փլուզումին մեջ: Աքսորեն դարձաւ հոգեպէս արդեն ընկճված, կասկածներու անձնատուր, մղձափնջերու հաճախներէ տակ հոգին միշտ վրդով: Ան ջարդ չտեսաւ՝

բայց ամեն օր իր երեւակայութեան մեջ ջարդ երեւակայեց: Ապրեցաւ ինքն իսկ՝ ջարդը: Սարսափներու արձագանքը՝ որ ամեն օր կհասներ զավաններեն, մտնելով նույնիսկ թաքստոցի մեր խուցերեն ներս, Կոմիտասին ալ կու գային, ու կխոշտանգէին փխրելու արդեն պատրաստ իր հոգին:

Այնպէս որ Գողգոթան նոր էր որ կսկսեր Կոմիտասի համար, ապրելով ողբերգութիւնը զոր իր եղբայրները կապրէին հեռուն: Հոգեկան այս տառապանքին պիտի գային ուրիշ կսկիծներ ալ խառնվիլ շուտով, ու ավելի զարհուրելի դարձնել Կոմիտասի Գողգոթան:

II.—Երբոր մթագնած է մարդկային հոգին

Շատեր մթագնած են երբեմնի պայծառ իմացականութիւններեն՝ թույլ տալով որ վերացական ոլորտներու մեջ թափառի իրենց միտքը: Ոմանք անձնատուր եղած թաքուն գիտութիւններու ոլորապտույտ ցանցերուն՝ իրենց երեւակայութիւնը ման են ածած իրական աշխարհին հեռու, անտեսանելի, անգտանելի, անմբռնելի որոնելով: Ուրիշներ ոգեհարցութեան բավիղներուն մեջ կորսված՝ ոգիներուն հետ անցուցած են իրենց գիշերները, երեւակայելով անձանոթ էակներու հետ հաղորդակցութեան մեջ մտած ըլլալ: Այդպէս են ըրած, օրինակ, անգլիացի վիպասան Քոնըն Դոյլը և ուրեմն պատմաբան Բոգտան Հաշտեուն՝ այս աշխարհին բաժնված սիրելիներու հետ խոսիլ կարծելով: Այդպէս է ըրած իր վերջին օրերուն Զվիցերիո մեջ՝ թուրք քաղաքական մարդոցմեն ամենեն ողջամիտը, իշխան Սաբահեդ-դին:

Ոմանք ալ այս աշխարհին հոգեպէս բաժնվիլ փորձած են՝ Աստվածաշունչին այս կամ այն տողին կառչելով, մարգարեներու երկմաստ տողերուն ապավինելով կամ հույս մուրալով հայտնութեանց գրքին, անկէ գուշակութիւններ փորձելով՝ կորցել նոր օրերու համար: Այդպէս չբացաւ Տիրան Զրբաբյանը հայ գրականութեան համար: աղանդավորի՝ մարդանքներու մեջ մխրճեց ան իր բովանդակ գիտակցութիւնը, և աղանդավորի մոլորութեան ալ զոհ տվաւ ի վերջո իր կյանքը:

Կոմիտասի հոգեկան փլուզումը ևս այդ ճամփով սկսաւ: Աքսորեն դարձած էր հոգեպէս արդեն ընկճված, տկարացած ջիղերով, դուրսագլաց:

Ան մյուս կողմն երազներու սիւսած էր հաւատալ ու զանոնք մեկնել:

Վարդան Անկյուլյան. որ մեկն է եղած Կոմիտասի ստեպ այցելողներեն՝ անոր աքսոր-

²⁹ Սիր. Աստղեր որ կմարին. Կոմիտաս վարդապետ. «Նամանարդ», Պոլսի, 1923 նոյեմբեր, էջ 76—77:

րեն դառնալեն հետո, վերջերս ինձ ուղղված նամակի մը մեջ կ'ապատմե անոր հոգեկան հուզումներուն առաջին պահերը, ու կ'նկարագրե իր մեկ այցելութիւնը վարդապետին՝ վերջնական տագնապէն քիչ առաջ: «Երբ իրեն գացած էինք քանի մը ընկերներով՝ տեսանք որ մտածումներու մեջ խորասուզված է Աստվածաշունչը առաջին: Մեզ տեսված է հատվածները սկսավ կարդալ անկե և մեզ ալ մեկնել: Ի սկզբան լուրջի առի իր փորձերը մեզ համոզելու և սկսա վիճիլ հետ: Կոմիտասի դեմքը կ'ընդունեցաւ մեկնել՝ պատասխաններն ազդված, ու գոչեց խոսքը ընդմիջելով:

— Գիտցե՛ք որ Հիսուսն եմ ես, ու դուք առաջալն ես... դու, Վարդան, Թովմաս առաջալն ես...:

Իր իսկ առաքելութեան ամենն ջերմ հավատացողը Թովմաս առաքալ կորակվեց այսպես: Զգացի թե բան մը խախտած էր հոգիին մեջ ու ալ լռեցի: Երբ ընկերներով դուրս կ'ելլեինք քիչ հետո քովին, ամենուս համոզումն այն էր որ լուրջ դարձանի կկարող մեր սիրելի վարդապետը: Քանի մը օր վերջ դուրս. Գոնոս, հայտնի ջախտաբուժը, մեր կարծիքներն հաստատեց:

Կարո Ուշազանը կ'ապտմե իր կարգին. «Հաջորդ 1916-ի տարին, վարդապետը սկսավ նվազ աշխատիլ: Հաճախ ս. Գրքով կ'զբաղեր և հսկումի երկար պահեր կ'ունենար:

Այդ օրերուն իր մօտ գացի հայրենակից բարեկամի մը հետ: Քաղաքավարութեամբ ընդունեց մեզ՝ ինչպես միշտ: Նորեկը գաղթականներու կյանքն զրկագներ պատմեց և միջոց մըն ալ խնդրեց վարդապետին որ քանի մը կտոր նվագե. նվագած միջոցին տարօրինակ հուզումի մը մատնվեցաւ, թեև կաշխատեց պաղարշուն երեւալ: Արդեն քանի մը օրե ի վեր ունեցաւ այդ վիճակը: Ես ուղեցի մեկնելի սակայն բարեկամս միտք չունեց, ուրեմն ստիպված կ'եղձ միջոցի մը դիմելով, սպասավորին հասկցուցի, որ հյուրին առջև վարդապետին հիշեցնեմ, ժողովի մը ժամագրութիւնը: Այս ձևով դուրս ելանք բոլորս մեկ: Վարդապետը զնաց ճաշելու իր մեկ բարեկամին՝ Ստեփան Մելիքյանին տունը:

Մինչ այսպես կանցնեին օրերը, Կոմիտասին վիճակը տարբեր գույն կ'առնէր: Ես ամեն օր կ'հանդիպեի իր բնակարանը գտնե սպասավորին լուր առնելու համար իր մասին: Օրե-օր ավելի շեշտվեցաւ իր մեջ լուսկեցութիւնը և հուզված վիճակը: Զեր ուզեց այցելունքն ընդունիլ: Այդ միջոցին իրեն կայցելեին բժ. Թորգոմյան, Ա. Հարենց, Տ. Զիթունի, Զ. Լ., Գրիգոր Կարապետյան (վերջին Գոստան վրդ.) և ուրիշ քանի մը ծանոթ-

ներ, թեև բոլորն ալ դժկամութեամբ կ'ընդունէր Կոմիտասը»¹:

III.—«ԴՆԱՐԱՅԵՔ»-ը

1916 տարւան «Դնարայեք»-ը Կոմիտասի դժբախտ տարիներուն մեջ նոր պահ մը բացաւ:

«...Հիշողութեանս մեջ դրոշմված հետեւյալ դրվագը կ'տանի զիս դեպի ընդհանուր պատերազմի 1916 թվականը, կ'ապտմե Հովսեփ եպոսկ. Կարապետյան իր հուշերուն մեջ:

Նույն տարվո ավագ շաբաթն էր: Մաղկազարդի կիրակի իրիկունը, Պոլսո հեռավոր թաղերու ժողովուրդը գոնդագոնդ կ'զիմեր Գուրուշեմէյի Նրեման ս. Խաչ եկեղեցին, ժամ առաջ եկեղեցվո մեջ տեղ գրավելու: Կոմիտաս վարդապետն էր որ պիտի կատարեր Դնարայեքի վսեմ արարողութիւնը, և պիտի երգեր «Բաց մեզ, Տեր»-ը:

Աքսորութենէ հրաշքով Պոլիս դարձին՝ որդիական սիրով ընդառաջ երթալով լուսահոգի հորս փափագին, որուն հետ ազգականական կապերով կապված էր, նույն տարվո ս. Զատիկի տոնը մեր նահապետական տան մեջ միասին պիտի անցնէր, միևնույն ատեն ավագ շաբաթվա տոնական օրերուն թաղիս եկեղեցվոյն պիտի նախագահեր:

Ինքս ալ Զատիկական տոնին առթիվ պատուական ինշաքաք-քապուտիս զմանտան պէյնէն արձակուրդ առնելով Պ. Մկրտիչ Զանանի հետ Պոլիս փութացինք Պանտրմայեն, ուր կ'առաջանէր որպէս դեղագործ սպա Մշուկալիմեմվելի աստիճանով Զանանի հետ:

«Հասա տուն... Ուրախ զվարթ ճաշեցինք և երեկոյան պահուն բոլորս միասին եկեղեցի գացինք. իսկապես վեհ էր ըստին, երբ յուր պարթև հասակով բեմ բարձրանալով փակյալ ս. սեղանին առջև ծունկ չոքեցաւ. երկու կողքինն ես ու եղբայրս նույնպէս ծընկալք. առավ ձեռքը տաճարի խոշոր բանալին և վեղարը ձախ ձեռքը բռնած, զխաբաց սկսավ երգել՝ նախ մեղմ ապա զոռ ձայնով «Բաց մեզ, Տեր»-ը. առաջին բաժինը վերջացուց, բայց երբ սկսավ երկրորդը՝ հանկարծ ալլայլեցաւ, դեմքը տխրութեամբ պատեցաւ և ձայնը սկսավ դողալ. «ասոր ի տես՝ մենք, երկու եղբայրներս, հասկացանք թե՛ վարդապետը կ'գտնվի հուշալ վիճակի մը մեջ. չկրցաւ լրացնել երկրորդ բաժինը և երբ «ողբալով կարդամ առ քեզ» բառերը հազիվ լսելի ձայնով կարտասանեց, աչքերն արցունքներ կ'հոսեին, և խուռնեամբ բազմութիւնն ալ ազդված կ'ուլար:

Մեծ վարդապետին եկեղեցիէն ներս կատարած արարողութեան վերջինը եղաւ այդ...»²:

¹ «Արածանի», Փարիզ, 1940, էջ 68—69:

² «Կոչնակ», 1935 դեկտ. 14, էջ 1185—1186:

IV.—Հուսկ պատարագը

Այն քանի մը կուտինացիները որոնց հշուր-
վար Կոմիտաս Պոլիս անցուցած իր տա-
ններուն՝ իրենց դուրգուրանքը պակաս չը-
նան անոր մոայլ օրերուն ալ: Գուրուշեշմեն,
դր կրնակեին անոնք, հոգեկան կաղզուլի
հաղանցուկ պահեր տված է քանիցս Կոմի-
տասին:

Միշտ Կարո Ուշագլանն է որ կ'պատմե.
«Քիչ մը փոփոխություն մտցնելու համար
դ կյանքին մեջ զինք հրավիրեցին Պոլսո
ուրուշեշմեն գյուղը, իր ազգականին տունը,
պար սովորություն ունեւ հաճախ երթալու և
գիշերելու: Տնեցիներուն հետ իր ծննդավայ-
րին Կուտինայի մասին խոսակցություններ
ուրուններ, կկատակեր տան հայրիկին և
շուաններուն հետ:

Այս անգամ սակայն իբր հիվանդ տարին
ինք խնամելու: Քանի մը օր ետքը զիս ալ
հրավիրեցին: Գացի տեսա վարդապետը,
խոսուր և լուս նստած էր, շատ քիչ կիտսեր,
Դենք էինք որ կստիպեինք խոսելու: Ծաշեն
վերջ, ելանք վերի հարկը, ծովահայաց սեն-
ակը. սկսանք խմբովին երգել ջութակի ըն-
կերակցությամբ: Վարդապետը ինքն ալ
Մասնակցեցաւ մեզի՝ հուզված վիճակով մը,
վերջեն սկսավ արտասվել. խորապես ազգ-
ված դադրեցուցինք երգը:

Քնանալու ժամը հասավ. ինծի առաջար-
կեցին որ ես հսկեմ վարդապետին վրա. ի-
տենք քանի մը գիշեր կատարած էին այդ
պարտականությունը. ընդունեցաւ:

Կոմիտաս իր հին ձևովը պառկեցաւ գե-
տերին՝ վերմակին կեսը տակն առած կեսը
վրան: Քիչ վերջ ելաւ նստալ:

— Վարդապետ, անհանգիստ եք, հար-
ցուցի:

— Ոչ, տղաս. երկնային ձայներ կառնեմ.
տես պատուհանեն լուսեր կերևան. Աստու-
ծո ձայնն է, չե՞ս լսեր:

— Հանգիստ ըրեք, վարդապետ. անձրեն
է որ կգարկե ապակիներուն. լուսերն ալ
նախկիններուն են, մի՞ վախճաք...

Այդ գիշեր այսպես լուսացուցինք: Առտը-
վան նախաճաշին հավաքված էինք ճաշատա-
նը: Ընտանիքին հայրը, Կ. Զ., որ նահապե-
տական համակրելի և հեղինակավոր ծերու-
նի մըն էր, ինչպես և իր կինը, հայրական
գուրգուրանքով հարցուց.

— Վարդապետ, տղաս, ինչպե՞ս ես, լավ
քնացա՞ր այս գիշեր:

Վարդապետը չպատասխանեց: Բոլորս
սկսանք զվարթ խոսակցություն մը, միևնույն
ատեն նախաճաշելով ու թեյ խմելով: Հետե-
յալ օրը կիրակի էր. որոշեցինք վարդապետին
պատարագել տալ գյուղի եկեղեցին: Առա-
ջարկեցինք. հավնեցաւ առանց ընդդիմու-

թյան: Ուրեմն, վարդապետը պատարագիչ էր
հետևյալ օրը: Բոլորս մեկ եկեղեցի գացինք
նույն օրը: Երգիչներուն մեջ էին և իր ազգա-
կան երիտասարդները: Բավական բազմու-
թյուն կար: Զ. Լ. և ես կեցած էինք ծոցու-
վորդին մեջ, կհետեւինք հեռվին:

Պատարագը կանոնավոր կընթանար և որ-
քան ուրախ էինք, մոռցած նախորդ օրերուն
տխուր անցքերը: Կարգը եկավ քարոզին:
Վարդապետը նյութ առավ Նուսավորիչեն.
աղվոր և սահուն կերպով կխոսեր՝ երբ հան-
կարծ հուզվեցաւ և խոսքին կապը կորսն-
ցուց, թեև առանց կանգ առնելու՝ կխոսեր
անկապ: Խռովքի մատնված՝ կսպասեինք
եւթին: Եվ ահա քանի մը վայրկյան շփոթու-
թենն վերջ, ձեռք առավ կրկին խոսքին՝ թեւը
և հաջողությամբ ավարտեց քարոզը, ինչպես
և պատարագը:

Արարողությանց ավարտումն ետք տուն
վերադարձանք և բավական տարբերությու-
ն գտանք իր վիճակին մեջ: Ուրախ էինք բոլորս
և կկարծեինք թե ժամանակավոր բան մըն
էր վարդապետին տագնապը, որ անցած էր
կամ պիտի անցներ: Քանի մը օր վերջ, գյու-
ղեն Բանկավթի իր տունը վերադարձաւ՝:

Կոմիտասի հիվանդության պարագանե-
րուն ակնարկելով, «աքսորեն դարձին, կղեր
ինծի իր ուրիշ մեկ հայրենակիցը՝ Գ. Ու-
շաքլան. սկսավ վերստին աշխատիլ, բայց
այլևս չէր մնացած առաջվան խանդավառ
շենշող մարդը: Երբեմն կտեսնեի զինքը՝
կրբ 1916 տարվան փետրվար-օգոստոս ա-
միսներուն Պոլիս կգտնվեի իբր զինվոր: Հի-
վանդ կուշկելու չափ տկարություններ ցույց
չէր տար ան տակավին, բայց սկսած էր
սարսափելի կերպով առել թուրքերը:

Մեղք է, կըսեր ինձ, ծառայել այդ անպի-
տաններուն: 1916-ի ընթացքին էր, որ սկսավ
շեշտվիլ իր հիվանդությունը, և զայն հիվան-
դանոց դրին նույն տարվան հոկտեմբերին
կամ նոյեմբերին»:

V.—Հարեցնեքու տան մեջ

Հայ մեծատուներեն շատեր շրջապատեր
էին Կոմիտասը իր փառքի օրերուն: Անոր
համերգներուն հաճախելով, զայն երբեմն
հյուրընկալելով իրենց հարկին տակ՝ կկար-
ծեին սատարած ըլլալ անոր: Հանձնաժողո-
վը զոր անոնք կազմեր էին որպեսզի հիմ-
նադրամ ապահովեն Կոմիտասի ծրագրած
երաժշտանոցին համար, բարերարի հովեր
ալ տվեր էր իրենց, մինչ իրենց ըրածը ուրիշ
բան չէր բայց եթե Կոմիտասի համերգներուն
հասույթը հավաքել և պահ դնել դրամատան
մեջ:

Աստուծոյն շատերը ա՛լ Կոմիտասի մոտը չէին անոր դժնդակ օրերուն:

Հարենց ընտանիքը բացառութիւն կկազմէր: Ան Կոմիտասը երբեք չլքեց: Հնդհակառակը այն քանի մը աղվոր պահերը՝ զորս Կոմիտաս ապրեցաւ իր Գողգոթայի ընթացքին՝ կպարտի Հարենց ամուլին, և անոնց հյուրընկալութիւնը: Երաժշտութենէ կհասկընար ինքը, Աստվածատուր Հարենց, իսկ իր կինը՝ Արուսյակ՝ իսկական արվեստագետի խառնվածք ունէր: Ան դաշնակ կնվագէր և սիտի նպաստեր Կոմիտասի դաշնավորումներուն ալ՝ Մեծ կղզիի իրենց բնակարանին մեջ անոր հյուրընկալված երեք ամիսներուն, 1916-ի ամառը:

Հարենց սապես պատմած է ինքը իր հուշերուն մեջ.

«1916-ի սկիզբները արդեն հիվանդութիւն նշանները ծայր տված էին և դուկտ. Թորգոմյան, ընկերակցութեամբ դուկտ. Գոնոսի, հսկեցին ու զանազան դարմաններ ըրին, այնպէս որ 1916-ի գարնան վերջերը բոլորովին լավ էր, երբ ամառվան սկիզբը առաջարկեցի զինքը հյուրընկալել մեր կղզիի տունը: Մեր բարեկամ հիշյալ երկու բժիշկները շատ հարմար ու օգտակար գտան առաջարկս: 1916-ի ամառը 3 ամսվան չափ մեր մոտ անցուց վարդապետը և այնքան լավ վիճակ մը ունէր որ հոն վերստին գրի առավ և դաշնակեց հայկական պարերը, որոնց ձեռագիրները ինձ մօտ կմնան և որոնք երեք տարի առաջ հրատարակվեցան պ. Ղուկասյանի ծախքով:

Այդ երեք ամիսը մեզ համար գեղեցիկ օրեր էին և վարդապետը նույնը կկրկնէր: Այդ պարերու առաջին մասը կարգի բերելի հետո, աշնան մօտ արդեն ձեռնարկած էր գլուխ-գործոց մը պատրաստելու, այն է՝ Մշու պարը որ 10—12 երեսն պիտի բաղկանար և զոր շարունակ հղկելու ու դաշնավորման նրբաշուքներու կենթարկէր, և որ շարունակ կփոխէր, և սակայն ինքնին շատ գունագեղ և գեղեցիկ բան մըն էր: Հաճախ նվագել կու տար զայն կնոջս, արդունքը դատելու համար: Այդ ընդարձակ պարը սեւ վագրութեան վիճակի մեջ ամբողջ էր երբ աշնան իր նոպային վերջընթերցի այցելութեան՝ ամբողջութեամբ նվագել տվավ, որուն դաշնավորման գեղեցկութեան և գերադանցութեան վրա հիացանք: Ինքն ալ գոհ էր և գրեթէ բառ առ բառ ըսավ. «Տե հիմի Աստվածատուր եղբայրս. այդ էլ մաքուրի կղնեմ և հաջորդ շաբթու կբերեմ քեզ, որպէսզի մյուսներուն հետ պահես»: Հաջորդ շաբթու մասնակի գլուրութիւն ունէր և կրցավ ըսել թէ ժամանակ չէր ունեցեր մաքուրի գնելու իսկ 15 օր վերջ արդեն ինքզինքնէ ելած էր, և ոչինչ խոսեցանք»:

Կոմիտաս, ինքն իսկ, 1916-ի ամառը Մեծ

կղզիէն կգրէ Բերա՝ իր բարեկամ Ստեփան Սեղիքյանի ընտանիքին.

«Ես այստեղ շատ լավ եմ զգում ինձ. ուտում, խմում, ձնմում, քնում—գործ մեծ՝ բոլոր մեծ մարդոց—ես էլ իբր այն, նույն պաշտոնն ու պարտականութիւնն եմ կատարում:

Հարենց ընտանիքներն ինձ այնքան ընտիր են խնամում, որ հիանալով, ինքս ինձ հայ ընտանիքի փայլալայնքովն եմ մխիթարում:

Որոշել եմ ոչ մի գրով չգրադել, թե երբ ժիշկն ինձ իրավունք է տվել»:

Զիթունի կպատմէ իր մեկ այցը Կոմիտասին, 1916 ամառն, երբ ան կգտնվեր Հարենցի կղզիի ամառանոցը.

«Իբր գեղարվեստագետ՝ Կոմիտաս ընականաբար առանձին հակում ունէր գեղարվեստի ճաշակով օժտված անձերու հանդէպ: Թե՛ իբր այդպիսին և թե՛ իբր կարողութեան տեր մարդիկ՝ Ա. Հարենց ընտանիքին ալ հաճախ կերթար վարդապետը: 1916-ի սկիզբները, երբ իր վրան նշմարված հոգեկան հիվանդութեան նշանները անցան իբր օգախոխութեան նպաստավոր միջոց, Կոմիտասը հյուրասիրվեցաւ Հարենց ընտանիքին կղզիի բնակարանի մեջ:

Ամառն ամիսներուն, կիրակի մը, շոգեկանով առի՝ իրեն այցի երթալու: Շատոնց է որ չէի տեսած զինքը: Գտա շատ առողջ, զվարթ ու համակ երաժշտութեան կորած:

Անհուն երջանկութիւնն ունէր հանուն տիկին Արուսյակ Հարենցի գտնելուն՝ շնորհալի դաշնակահարուհի մը՝ իբր իր երգերուն նըվագակից:

Ցերեկի ճաշէն ետք էր, Կոմիտաս երգեց ու նվագեց դաշնակի վրա: Ապա տիկին Հարենց թրթռաց զմայլելի եղանակ մը: Ամբողջ իմ այցելութեան քանի մը սուղ ժամերուն, կղզիի այդ օդասուն ամառանոցին մեջ, ու գրասեր-գեղարվեստագետ Հարենց ամուլին ու ամենուս սիրած վարդապետի հետ գեղարվեստական այնպիսի քաղցր վայելք մը ունեցաւ, որ բնավ չպիտի կրնամ մոռնալ:

Հյուրասիրող մեծատուն ամուլը ամեն կարելի գուրգուրանքով ու խնամքներով շրջապատեր էր մեծանուն հյուրը, որ իր նախկին առողջութիւնը լիովին վերստացած կազդուրված էր և նախկին եռանդով անձնատուր էր եղած իր երգերուն դաշնավորումի աշխատանքին»:

4 Ռոբերտ Արայան, Կոմիտասի 1914—1916 թվականների նամակներից, «Գրական թերթ», 1965, թիվ 17:

5 Տ. Չիբուքի. «Կոմիտասին հետ», «Հայրենիք» ամսագիր, 1936, XII, էջ 95:

Այսպես անցան 1916-ի ամրան այդ երեք ամիսները: Կրնանք ըսել՝ Կոմիտաս երանիկ անցուց զանոնք, պահ մը դուրսը մոռցած ճաշխարհն ու իր հոգեկրը:

Բայց, ալա դ, դե մը կսպասեր իր դրանը ձեռին՝ հափշտակելու համար զայն իր երանության գրկին ու զայն տանիլ հանձնելու կրկին իր խաչի ճամբուն:

VI.—«Օրհնչալ գերդաստան»

Հայ մեծատունները Հարենց չէին բոլորն ալ: Ավելի ճիշտ՝ Հարենց միակն եղավ անոնց մեջ, որ Կոմիտասին չգալաճանեց, երբ բոլորը խույս կու տային արդեն անկե, առանձին ձգելով զայն իր ճակատագրին մեջ:

Արփիար Արփիարյանի աճյունները թող ինձի ներքին, եթե անկե կզոհում սույն հատվածին խորագիրը: Արփիարյան իր երգիծական համով մեկ գրով՝ զայն վերնագիր էր տվեր տարիներ առաջ, ակնարկելով հայ հարուստի մը, որ հայ որբերուն կտակեր էր գումար մը, բայց իր ժառանգորդները, քանի մը սերունդ, դժկամակեր էին զայն հանձնել ազգին, պահելով սակայն իրենց ճակատին բարերարի տիտղոսը: «Օրհնչալ գերդաստան»-ը դասական բացատրություն մը դարձավ այն օրեն ի վեր:

Ոչ ոքի համար գաղտնիք մը չէր, որ Արփիարյան կակնարկեր Գարակյոզյաններուն՝ երգիծական իր այդ պատմվածքին մեջ, այսինքն բարերարին ուղղակի ժառանգորդներուն, որոնք տասնյակ տարիներու ձգձգումներն և սակարկություններն հետո պիտի գիշանեին ի վերջո դուզն գումար մը հանձնել ազգին, որպեսզի որբանոց մը հիմնվի, սակայն միշտ իրենց հովանավորությունը ներքե: Արդար ըլլանք ըսելու համար, որ Գարակյոզյաններն սրտի տեր մարդիկ ալ ելան հետագային, ու ջանացին մաքրել գերդաստանին քսված ամոթը: Բայց արդեն ուշ էր:

Որո՞ւն մտքն կանցներ թե Կոմիտասի ճակատագրին մեջ դեր պիտի կատարեր նույն այդ օրհնչալ գերդաստանը: Կոմիտասի «հովանավոր» հանձնախումբին մեջ, ալելի ճիշտ այն հանձնախումբին մեջ՝ որ պիտի իրականացներ Կոմիտասի ծրագրած Հայ Երաժշտանոցը, կար արդարեւ Եղվարդ Գարակյոզյանն ալ ուրիշ քանի մը հայ աղաներու հետ մեկտեղ, որոնց մեկ գիշերվան փոքրիկ դրամով քանի մը հայ երաժշտանոց կրնար հիմնվիլ և որոնք սակայն իրենց հույսը դրած էին խեղճ վարդապետին համերգներու հասույթին վրա:

Ու պատահե՛ր էր, որ Կոմիտաս և Թերլեմեզյան նույն այդ մարդուն մեկ շնորք վարձն իրրեւ բնակարան, Բանկալթիի սոցիոտայի այն տունը, որ քանի մը տարի նվիրական

մեկ օջախը դարձավ Պոլսո հայ մտավորականության, ուր հայ երգի վարպետը կշարունակեր բնակիլ աքսորեն դառնալեն հոգն ալ:

Սեփականատիրոջ համար Կոմիտաս վրատահելի վարձակալ մը չէր սակայն պատերազմի այդ տարիներուն: Ան կրնար օր մը ի վիճակի չըլլալ վարձքերը վճարել, մինչ շնորքը կրնար մեծ հասույթ բերել, եթե վարձու տրվեր ուրիշի մը: Ուրեմն պետք էր բնակարանը պարպել տալ: Պատրվակը կար. հիվանդ էր Կոմիտաս, ու պետք էր զայն դեռ զել հիվանդանոց մը:

Հիմա թողունք որ Կարո Ուշագլյանը պատմե.

«Օր մը, երբ կրկին այցելեցի իրեն, վարր ճաշարանեն սպասավորը ներս կանչեց զիս և տխրությամբ ըսավ.

— Այսօր շատ դեշ վիճակ ունի վարդապետը, մի քնար մոտը:

— Ինչո՞ւ, ի՞նչ եղավ.

— Տան տերը պ. Գարակյոզյան լուր դրեկած էր որ պարպենք տունը:

— Որո՞ւն ըսած էր:

— Ինձի, և ես ալ վարդապետին ըսի: Ասոր վրա շատ հուզվեցավ և «վա՛յ, տունեն դուրս նետել կուզեն զիս», ըսավ և այսօր չուզեր խոսիլ բնավ...

— Ինչո՞ւ ըսիք իրեն, վարպետ, կրնայիք մեզի ըսել:

— Ի՞նչ անեմ, ըսի:

Այս դեպքը շատ դեշ էր ազդեր վարդապետին վրա: Նյութական միջոցներն զրկված՝ թեև բարեկամները չէին լքեր զինք հիմա իր բնակարանն ալ կուզեին առնել ձեռքեն, զրկել զինք իր այնքան գուրգուրացած գույքերեն, աշխատանքի տաճարեն, ուր քանի տարի ի վեր քրտինք թափած էր հայ երգի և երաժշտության զարգացումին և ուժեղացումին համար, ու մշակված էին երգահանդեսներու հայտագիրները և իր աշակերտներուն ձայները, ուր այցելած էր հայ մտքի ընտրանին ինչպես և օտարներ՝ խմելու համար հայ գեղարվեստի երկու ակերեն երաժշտական և նկարչական (Փ. Թերլեմեզյան), և այդ շնորքը կերպով մը իրավունք ստացած էր հայ կյանքի կարևոր մասը, հավաքավայրը դառնալու, և հիմա կուզեին զայն խլել և դարձնել նյութական եկամուտի աղբյուր՝ հանդիպած վարձակալին ձեռքը...

Զհասկցա որո՞ւ ուղեղեն վիժած էր այդ անգույթ որոշումը, պարպել տունը և վարձու տալ: Կարծես աղատիլ կուզեին այս «անտանելի» հյուրեն: Գոնե ես այսպես տպավորվեցա՞մ:

...Հայ ժողովուրդի ծոցին մեջ հազվադեպ չեն եղած «օրհնյալ գերդաստան»-ները: Կատմությունը թող արձանագրե սակայն, որ անոնց մեջ մեկը եղավ, որ որբերուն պատան էր խելը ատենին, և հիմա Կոմիտասը կու գար խոցելու իր խաչի ճամբուն վրա:

VII.—Տագնապը կու գա

Թաթավլայի մեջ պահվում էր, երբ Կոմիտաս իր տագնապի շրջանը մտավ: Այնպիսի պահու մը, երբ ոստիկանությունը որևէ ատենն ավել մոլեգնած էր հետքս գտնելու համար՝ եկած ապաստանած էի հունական հայր՝ եկած ապաստանած էի հունական հայր թաղը, պառավ հայ կնկա մը խրճիթին մեջ: Քիչեր միայն թաքստոցս գիտեին, ու անոնք ալ զգուշ էին դուրսի գեշ լուրերը իմաց տալու ինձ: Օր մը ինչպես եղավ բերններն փախավ հանկարծ թե Կոմիտասի խելը եկած է:

«Սև օր»-ը՝ որմե այնքան կողոպտինք՝ եկեր էր վերջապես, զգեստնելու համար մարդ մը զոր ծնած ըլլալուն համար կրնար հպարտ ըլլալ մեր դարերեն որևէ մեկը: Օրերով քունս չտարավ: Այն մարդը, որ տարի մը առաջ սաստիկ էր դիտ թաքստոցս դուրս ելած ըլլալու համար ու պոռաքեր էր երեսին թե այլևս թանկագին է ամեն մեկ հայու կյանքը, հիմա հայ ժողովուրդը կըրկեր նոր օրերու իր ամենին մեծ փառքերեն մեկին: Հարվածը, զոր կրեր էր Կոմիտաս՝ արդեն մահ էր կես մը:

Ո՛վ պիտի կրնար այնքան կենդանի կերպով մեզ պատմել այդ «սև օրը» քան Արշալույսը, Թերլեմեզյաններու դուստրը, որ այն ատեն փոքր աղջնակ, մեծ վարպետին փրկողուն տեսավ: Արշալույս, ներկայիս տիկ. Զ. Սարգիսյան, սապես կպատմե:

«Երբ կանդորդառնամ այդ օրվան՝ տակավին սարսուռ մը կանցնի հոգիես ու պահ մը կըրգծամ հիշողությունս կորսնցնելու:

Լավ կհիշեմ սակայն. գարնան երեկո մըն էր և դասերս կպատրաստեի: Հանկարծ դրան զանգակը՝ արագ, ուժգին՝ գուլժի մը պես: Վարպետը (Կոմիտաս վարդապետի խոհարարը) ներս ինկավ շնչասպառ:

— Շուտ ելեք, վարդապետը շատ գեշ վիճակի մեջ է, կու լա և կաղոթի:

Հարցումները սառեցան մեր շրթներուն վրա: Արդեն մեկնած էր հայրս վարպետին հետ: Բոլորս անձկության մեջ կսպասեինք՝ մեր աչքերը ճամբուն հառած: Հանկարծ փողոցի այն անկյունն, ուրկե ամեն անգամ վարդապետին աշխույժ ու կենսուրախ հասակը կցցվեր, տոգույն ու սլացիկ սիրուեթ մը գծագրվեցավ: Հայրս թևը մտած էր, իսկ ինք թևերը կտրծքին վրա խաշած, աչքերը հեռուն սեռած՝ կհառաչանար կարծես մագնիսացած:

Ձինք դիմավորեցինք դիտմամբ մեր սովորական ուրախ բացազանություններով: Ոչ մեկ պատասխան սակայն: Ուղղակի գնաց իր սովորական տեղը բազմոցին անկյունը, ու նստավ արձանի մը անշարժությամբ և միշտ աչքերը հեռուն: Բոլորս լռեցինք: Գրեթե քառորդ մը տեղեց այդ ճնշող լռությունը և ահա հանկարծ ահավոր պորթկումի մը մեջ վարդապետը սկսավ լալ հեկեկալով, ծունկի իյնալ ու աղոթել:

Նույն պահուն, հայրս՝ որ անմիջապես մեկնած էր բժշկի՝ ներս մտավ դոկտ. Թորգոմյանի հետ: Շուտ մը հանդարտեցուցիչ դեղ մը պատրաստեց բժիշկը: Գավաթ մը կարմիր ջուր զոր պետք է խմեր վարդապետը: Բայց զուր էին բոլոր աղաչանքները, վարդապետը կուլար, կգալարվեր կմերժեր խմել:

— Ես հիվանդ չեմ, թույն է այդ, կուղեք դիտ մեռցնել:

Այսօրվան պես կհիշեմ: Գավաթը առի և դողահար մոտենալով վարդապետին՝ միշտ սիրված ու փափախված երեսայի բովանդակ հրապույրովս՝ սկսա համոզել և աղաչել: Հետըզհետե լացը դադրեցուց, լուռ աչքերուս նայեցավ և ըսավ:

— Այո՛, դուն անմեղ հրեշտակ ես, քու ձեռքերդ միայն կվստահիմ առնել:

Ու խմեց ամբողջ դեղը մեկ ումպով: Ինձի թվեցավ թե հրաշք մը կպատահի: Կյանքիս ամենն մխիթարական վայրկյանը պիտի մնա այդ: Դեղին աղբեցության տակ բոլորովին հանդարտեցավ վարդապետը, անկողին առաջնորդեցինք և վստահ՝ թե ջղային նոսր մըն էր այս պատահածը, մենք ալ գացինք պառկելու:

Կես գիշեր: Երազիս մեջ երգ մը կարձագանգե, այնքան անուշ և հուզիչ ձայն մը, որ քունիս մեջն անգամ կզգամ արցունքներս: Երգը կշարունակվի ավելի և ավելի հստակ ու կարթննամ հեկեկալով: Բայց այս անգամ գիշերվա խոր լռության մեջն կլսեմ բառեր:

Սիրոյ քո հուր, արկեալ յերկիր, բորբոքեսցի ի հոգիս մեր...

Վարդապետը կերգե՝

Տան մեջ աղմուկ կսկսի. քույրերս իրենց անկողնին մեջ չկան: Բոբիկ ոտքերով վար կվազեմ սանդուխտներեն և դրան մը բացվածքն կտեսնեմ վարդապետը, որ ծնրադիր՝ իրիմյան Հայրիկի յուղաներկ պատկերին առջև կերգե, կուլա ու կաղոթե սուրբի մը ինքնամոռացումով:

Այդ գիշերը և դեռ շատ ցերեկներ և գիշերներ անցուցինք սարսափելի մղձավանջի տակ. ամեն մեկ նույա քանդակված է մտքիս մեջ անմոռանալի...»:

Տիկ. Արշալույս. Հ. Սարգիսյան կշարունակե պատմել:

«Եվ գեղեցիկ օր մը վարդապետը առողջացավ: Երկու շաբթվան տառապանքներն վերջ, ան կրկին դարձավ մեր առաջվան ուրախ և առողջ վարդապետը: Նույնիսկ մեղի կպատմեր, կբացատրեր իր զգացածները և կըսեր:

— Կարծես կատու մը կար փորիս մեջ որ կճանկոտեր զիս:

Անմոռանալի՝ պահեր: Վարդապետը օր-րաթողի մը վրա կհանգստանար և ես քովը փոքրիկ աթոռի մը վրա նստած՝ խոշոր ճափոնական հովահարով մը կզովացնեի զինք: Կկատակեինք, կերգեինք: Ոչ մեկ հետք հիվանդության:

Այդ միջոցին Ա. Հարենց ընտանիքը, որ Մեծ Կղզի օդափոխության գացած էր, հրավիրեց զինք: Ուրեմն, վարդապետը ամառը հոն անցուց, վայելելով հազվագյուտ խնամք և հոգածություն:

Այդ օրերուն իրմե ստացած եմ շատ զվարթ նամակ մը զոր կպահեմ թանկագին մասունքի մը պես: Մնողքիս հետ կիրակի օր մը Կղզի գացինք այցելելու իրեն, և հիացանք իր կատարյալ առողջության և լավ տրամադրություններուն վրա:

Բայց, ավաղ, մեր ուրախությունը երկար չտևեց: Աշնան իր տուն վերադարձին՝ հիվանդությունը կրկին զինք կաշկանդեց, այս անգամ տարբեր ու լուրջ երևույթի մը տակ: Լալ, աղոթել չկար, այլ առանձինն խոսիլ, բացարձակապես մերժել ուտելիք և տեսակցություն, պարտեզին հորին մեջ հայիլ, կովիլ երևակայական թշնամիներու հետ: Վերջապես վտանգավոր հանգամանք մը ստացած էր հիվանդությունը, որով հարկ եղավ զինք հանձնել հիվանդանոցի մը խնամքին:

Վերջին անգամ տեսա զինք իր տան մեկ սենյակին մեջ առանձին. անկողնի բուրդե ծածկոցի մը մեջ. փաթեցված ամբողջովին: Որքան աղաչեցինք հայրս ու ես մեր մեծ սիրուն ամենաբաղցր խոսքերով, ան գլուխը անգամ ցույց չտվավ մեզի:

Լոբեր էր հավիտյան մեր չքնաղ սոխակը: Լևոն Մեսրոպ Փարիզեն գրած է քոջը՝ Աղավնի Մեսրոպյանին:

«Անմահ վարդապետին կյանքը, մանավանդ իր վերջին տարիներուն հաավոր ողբերգությունը լուսաբանող անձնական որևէ հուշ, որքան աննշան համարվի, կրնա մեծ ծառայություն մատուցանել հայ արվեստագետին կենսագիրներուն:

Անցյալ օր հանդիպեցա պոլսահայու մը, որ 1914 թվին առաջ և հետո շատ մոտեն ճանչցած և գործակցած է վարդապետին:

Խնդրեցի իրմե, և սպասելով որ գրի առնե ունեցած տեղեկությունները, ահա՝ մեկ-երկու

ղեպք այն շրջանեն, երբ Կոմիտասի հոգեկան տագնապը արդեն սկսած էր:

Պոլիս Մեծ Կղզի կրնակեինք, պատմեց խոսակիցս. վարդապետը նոր Պոլիս բերված էր մահվան ճամբեն: Օր մը, դեկտ. Թորգոմյանը եկավ և հայտնելով Կոմիտասի հիվանդագին վիճակը, առաջարկեց, որ զինքը հյուրընկալենք և ջանաք մոռցնել տալ կրած ցնցումը: Բժշկին առաջարկը սիրով ընդունեցինք, և վարդապետը մեր տունը մնաց մեկ ամիս, ամենուս գուրգուրանքին առարկա:

Դժբախտաբար հետզհետե սկսան երևան գալ տագնապին նշանները: Օրին մեկը, մեր երկու փոքրիկներուն հետ մոտակա բլուր մը կբարձրանա և հետո, տղոց ձեռքեն բռնած կակսի բլուրն ի վար վազել: Երեկաները բնականաբար չեն կրնար իր քայլերուն հասնիլ և Կոմիտաս զանոնք տուն կհասցնե գետնին վրա քաշկոտելով: Սարսափեցանք, բայց ոչինչ հայտնի ըրինք և շարունակեցինք խնամել զինքը:

Այդ զեպքեն երկու օր ետքը իր սենյակին անհայտ եղավ: Իդուր փնտրելե ետք դրացիներու մոտ, մեր սպասուհին մոմի լույսով կմտնե մութ սենյակ մը: Վարդապետը, որ սեղիրի մը վրա սլաված է եղբւր, հանկարծ կբարձրանա և մոմը կմարե, լեղապատառ ընելով սպասուհին:

Ուրիշ անգամ մը կպահվեր սեղանի մը ծածկոցին տակ: Մայրս ներս կմտնե սենյակեն և Կոմիտաս թաքստոցեն դուրս կնետվի պոռալով:

Այս մանրամասնությունց կարգին, որոնք թերևս աննշան համարվին, ահա ամենաթանկագին տեղեկություն մը որուն վրա կարժե կանգ առնել: Հակառակ հիվանդությանը, որ երթալով կսաստկանար, հարեց խոսակիցս, Կոմիտաս ոչ միայն ի վիճակի էր տակավին նվազելու և երգելու, այլև ստեղծագործելու: Հոգեկան տագնապի այդ օրերուն էր որ գրեց իր ամենեն արժեքավոր գործերեն մեկ քանին»⁸:

Անձնավորությունը, որուն խոսքերը կհիշատակե Լևոն Մեսրոպ իր նամակին մեջ՝ նույն ինքն Աստվածատուր Հարենցն է: Բայց լավ է որ ուղղակի զինքը լսենք իր իսկ հուշերուն մեջ.

«Աշնան սկիզբը մենք Գատրգյուղ վերադարձած էինք, և ինքը Բերային կու գար շաբթվան 2—3 օրը միասին անցընելու: Ուրբաթները հատկացուցած էինք երկար պլանայիններու ուր մանկական զվարթություն մը ունեւր հարաճուն և անվերջ: Կերգեինք ընդհանրապես երկձայն:

⁸ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 311—312.

Հոկտեմբերի մեջ սակայն իր վիճակին մեջ փոփոխություն երեցավ. ամեն շաբաթ իր զվարթությունը կապակսեր հետզհետե. կհիշեմ մանավանդ թե վերջին շաբթուն մեզ այցելելուն՝ դժգոհություն և զայրույթ ուներ արևուն դեմ, ինքը որ կղզի եղած պահուն արևածագը կվայելեր երանությամբ:

Մեզ մոտ եղած այդ վերջին ուրբաթը՝ երեկոյան ճաշի ժամը հնչելուն, երբ կսպասեինք իր սենյակին իջնելուն, հանկարծ գահավեժ քայլերով վար վազեց, ուղղակի դուրս, փողոց խոյացավ և դեպի նավամատույց ուղղվեցավ. բնականաբար ես ալ ընկերացա ի վեցավ. Երբ հասանք եկեղեցվո առջև, մտավ ներս և տաճարին դուռը բանալ տալով հառաջացավ և ծնրադրելով սկսավ արտասվախառն աղոթել:

Ես, զինքը քահանային հսկողության հանձնելով, տուն դարձա, տնեցիներուն վրդովումը հանդարտեցնելու համար, և նորեն իջա եկեղեցի, ուր ըսին թե վարդապետը քահանա հոր հետ դեպի քարափ գացած է: Քիչ վերջը, գիշերվան մութին մեջեն երեցան վարդապետը և տեր Վարդան հայրը և ավելի ետևեն ոստիկան մը՝ որ գիրենք եզերքին շատ մոտ նշմարելով՝ հետևած էր իրենց հետաքրքիր՝ հանգիստ ձգելով սակայն զիրենք: Զիս տեսնելուն՝ քահանան ըսավ թե վարդապետը կը փափաքի տուն վերադառնալ: Վարդապետն ալ իր կարգին ոստիկանին դառնալով շարունակ ինքզինքը կը մեղացնե թե՛ կառավարական օրենքներուն հակառակ ոչինչ ըրած է, ինքը հանցավոր չէ, միշտ հավատարիմ եղած է, և այլն:

Ոստիկանին բարյացակամ խոսքերուն վրա բաժնվեցանք իրմե և վարդապետը առաջնորդեցի տուն, ուր անքուն և անձկության գիշեր մը անցրելիս հետո, հաջորդ առտու (շաբաթ) զինքն առաջնորդեցի Բերա, իր տունը, ուր դուրս. Թորգոմյան և դուկտ. Գոնոս, անմիջական խորհրդակցութենն մը հետո, զինքը փոխադրեցին Շիշլի, Hôpital de la Paix:

Գողգոթայի իր ճամբուն՝ վրա, Կոմիտաս տաժանքի նոր հանգրվան մը հասած էր:

Խաչը կերևար արդեն:

VIII.—Մագհար Օսմանի խնամքին ներքև

Գատրգյուղի ահավոր այդ ուրբաթեն մինչև Շիշլիի իր դժնե կայանը տարվիլը՝ քանի մը օրեր անցած պետք է ըլլան սակայն Բանկալթիի իր բնակարանին մեջ, դժնդակ քանի մը նոր օրեր, ուր երկու բժիշկ, մեկը հայ և մյուսը հույն, իրենց գիտցած մեթոդները օգնության կանչած են դարմանելու համար հոգեկան մեծ փրկուղամ մը:

Այդ օրերուն մասին Կարո Ուշագլյանի վրկայությունը ունինք: Սապես կպատմե Կոմի-

տասի հայրենակիցը՝ որ միշտ գտնված է վարդապետին մոտ, աքսորեն իր դարձն հետո:

«1916-ի հոկտեմբերի կամ նոյեմբերի օր մը, թժ. Թորգոմյան ըսավ ինձի.— «Տղաս, դուն այսօր կամ վաղը պետք է գիշերես վարդապետին տունը, տեսնելու համար թե ինչ վիճակ ունի գիշերը, և մեզի տեղեկացնել այդ մասին»: Սիրով ստանձնեցի այդ պարտականությունը, թեև բավական դժվարին գործ էր այդ, ինչու որ վարդապետը ունէ այցելու չ'ընդուներ, ուր մնաց գիշերային հյուր: Իրիկունը ուշ ատեն գացի մոտը և ըսի.— Վարդապետ, այսօր տանս բանալին մոռցած եմ մոտս առնելու, տունն ալ մարդ չկա, չեմ գիտեր ինչ ընեմ. կրնա՞մ հոս մնալ այս գիշեր:

— Այո՛, տղաս, Փանոսին (Թերլեմեզյան) մահիճը պարապ է, ըսավ հանդարտորեն:

Հրա շք էր եղածը. լայն շունչ մը առի և իջա վար սպասավորին մոտ ու քիչ մը խոսակցելի վերջ ելա ուղղակի վերի ընդարձակ սենեակը, որ ատենին նկարիչ Փ. Թերլեմեզյանի աշխատանոցն էր և ուր տակավին նրկարները կմնային պատերուն վրա: Վարդապետին մահճակալը սենյակին մեկ անկյունն էր, իսկ Թերլեմեզյանինը մյուս ծայրը:

— Սա դիմացի մահճակալը կպառկիս. գնա դուրսը ծածկոց մըն ալ կա բեր ու ծածկիր, չմիս, ըսավ:

Ես կզարմանայի այս փոփոխության վրա և ամոթ կզգայի զինքը խաբելու: Երբ այս կարգադրությունները կընեի, հարցուց.

— Ինչ լուր Բյութանիայեն, եղբայրներդ ո՞ւր են:

— Բյութանիայեն նամակ կստանամ ծընողքես և եղբայրներես, լավ են բոլորն ալ. եղբայրներես Գեորգը գիշերը է Տիգրանակերտի մեջ, ըսի:

Այս քանի մը խոսքերը ամրապնդեցին զիս և հույս ներշնչեցին վարդապետին առողջության մասին: Վարդապետը պառկեցավ, — հիվանդութենեն ետքն այլևս գետինը չէր պառկեր. իր անկողինը ուներ ուրիշներուն պես: Կես գիշերվան մոտ էր, նստավ անկողնին վրա և սկսավ հառաչել, տնջալ:

— Վարդապետ անհանգիստ եք:

— Ոչ, տղաս, քիչ մը նեղություն եկավ վրաս, ոչինչ, կանցնի, ըսավ:

Այսպես քանի մը անգամ կրկնվեցավ մինչև առավոտ: Երբ լուսացավ, տեսա որ պառկած տեղեն զիս կդիտեր ուշադրությամբ, ինչպես ես այդ զինք. հանկարծ.

— Ելի՛ր, ելի՛ր, գնա՛, ես պիտի աշխատեմ, մի խանգարեր զիս, ըսավ՝ բարկացած ձևով մը:

Մեղմորեն դիտել տվի թե տակավին շատ կանուխ է և հիմա կարելի չէ փողոց ելել:

Մակայն ինք կրկնեց իր ըսածը ավելի խիստ: Թոխված էր, երեկվան Կոմիտասը չէր այլևս: Դժբերդիմացա, ելա և ուղղակի վարը սպասա- լորին մոտ իջա»⁹:

Ուշագլխան կպատմե. հետո թե ինչ դժեղակ ապայամաններու մեջ հիվանդանոց փոխադր- ված է հեք վարդապետը:

«Նույն օրը կեսօրե վերջ երբ կերթայի բժ. Թորգոմյանի մոտ տեղեկություն տալու դի- վանի վան մասին, Բանկալթիեն անցած ատեն ճակեցի հանդիպիլ վարդապետին տունը՝ մտնելու սպասավորը որ զիս կանխելով ասացավ դուռը:

— Գիտե՞ս, այսօր վարդապետը տարին, ասավ:

— Ո՛ւր տարին, ո՞վ տարավ, հարցուցի Կոմիտասը:

— Գոմիտասը, — ոստիկան ըսել կուզեր, — լիկավ կառքով մը և ըսավ. «վարդապետ է- ձեքնտի, Նազրը պելը (նախարարը) ձեզ կու- ձեք, հարցնելիք բան ունի երգի մասին. պիտի պնդանք»: Վարդապետը հագվեցավ և ըսավ. «Եկեք ելիմ էֆենտի» (երթանք պարոն): Ես ալ անստեցա իրենց մոտ և կառքը Շիշլիի կողմը ղեկավար սկսավ: Այն ատեն վարդապետը ըսավ Կոմիտասին. «էֆենտի, պենի արաքտընը, Կոմիտասը պել պու քարաֆտա տելիլ» (էֆեն- տի, զիս խաբեցիք, նախարար պելը այս կող- մը չէ): Եվ մենք գացինք Շիշլիի հիվանդանո- ցը, վարդապետը հոն ձգեցինք:

Մեկնություն չկրցա տալ այս եղածին: Հա- յապա ինչո՞ւ ինծի հրահանգ տրվեցավ որ գիշե- րը մնամ իր բնակարանը և իրենց տեղե- կացնեմ:... Այլ չգացի բժ. Թորգոմյանի մոտ: Վերջին տեղեկացա, որ իր շուրջինները հար- մար տեսած էին այս կերպը, վախնալով որ վարդապետին վիճակը ավելի ծանրանալով վատանգի առջև չգտնվին իրենք: Սակայն իմ մեծ թաղը Կոմիտասին այն եղավ թե շուրջինները, փոխանակ լրջորեն նկատի առնելու իրենց էձեռնարկը և անոր հետևանքը, աճապարած մեն օր առաջ ազատիլ պատասխանատվութե- նս, միևնույն ատեն գոհացնել տան տները»:

Այսպես տարին մեծ արվեստագետը իր ճակատագրական վախճանին, այլևս դադա- րեց դադաղ փոխադրելու համար զայն:

Խոսքը դարձյալ Կարո Ուշագլխանին տանք. «Քանի մը օր վերջ լսեցի որ Զ. Լ.¹⁰ և Ա. Հարենց և կարծեմ ուրիշներ ևս հավաքած են ղրթախտ վարդապետին գույքերը որոնց մե- ղքն գրական գործերը և ուրիշ փոքր կտորներ անտուկներու մեջ դնելով հանձնած են պատ-

րիարքարան, իսկ մնացած կարասիները ծա- խելով դրամի վերածած են՝ հիվանդանոցի ծախքերուն հասնելու համար: Օրեր վերջ ին- ծի լսողներ գտնվեցան թե վարդապետին ձկանած կրկնակողիկները տեսած են իր մո- տիկ ծանոթներին մեկուն ոտքը... Այս գույ- քերին և ձեռագիրներին մեծ մասը պատ- րիարքարանեն վերցված են աշխատանքի կողմ»¹¹:

Կոմիտասի շուրջ անցած-դարձածով հե- տաքրքրվողներու համար գաղտնիք մը չէր, որ անոր հապճեպ փոխադրությունը հիվան- դանոց մը նպատակ ուներ բնակարանը սե- փականատիրոջ հանձնելու շուտով: Բայց դարմանք պատճառեց մեզի, թե ինչո՞ւ Աղ- զային հիվանդանոց չփոխադրեցին զայն, ուր բացառիկ գուրգուրանք և հոգածություն, ան- շուշտ, ցույց պիտի տրվեր իրեն, և գացին նե- տեցին թրքական հիվանդանոց մը, ուր ամեն վայրկյան իր հոգին պիտի շարշարվեր դառն հուշերով:

Ընդհանրապես այն կարծիքը կտիրե թե Կոմիտաս փոխադրված է Շիշլիի ֆրանսա- կան հիվանդանոցը: Ծիշտ չէ սակայն աս: Այդ պահուն ֆրանսական որևէ հիվանդանոց չկար Շիշլիի մեջ: Hôpital de Paix բուժարա- նը՝ որ ֆրանսական էր, արդարև՝ պատերազ- մի տարիներուն գրավված էր թուրքերուն կողմ, Համաձայնական Պետությունց պատ- կանող ուրիշ բազմաթիվ հիմնարկությանց հետ մեկտեղ ու տրված էր համարավոր թուրք ջլախտաբույժի մը՝ Մաղհար Օսմանի հսկողության տակ:

Գիտություն մարդ էր, անշուշտ, Մաղհար Օսմանը: Բայց գիտության մարդը չէր որ պի- տի կարենար Կոմիտասին ցավը ըմբռնել, եթե նույնիսկ թուրք բուրժուական վտարած ըլ- լար իր ներսեն այդ ցավին մոտեցած ատեն: Ոչ ալ իր բարեկամ մյուս երկու բժիշկները, հայն ու հույներ, որոնք այստեղ բերած էին զայն և որոնք հետագային ալ իրենց հոգածու- թյունը անպակաս ըրին:

Աստիճան ոչ մեկը կրցավ անոր ցավը ճան- չընալ: Ու ոչ մեկը չգիտցավ թե ինչու աշ- խարհին կոնակ դարձուցած այս մարդը, զոր խենթի տեղ էին դրեր, իր տաճնապի օրերուն անգամ՝ պոռթկումի պահեր հաճախ կունե- նար, և ստեղծագործելու կիրքը կարթննար խոտվահույզ իր հոգիին մեջ: Արդարև այդ օ- րերուն ալ ժայթքելու փորձեր երբեմն ըրած է ան: Գրեթե ոչինչ հասած է մեզի այդ նշխար- ներին:

⁹ «Արածանի», էջ 74—75:

¹⁰ Լևոն Զիվեր, փաստաբան, Կոմիտասի հայրենակի- ցը:

(Ծարումակելի)

¹¹ «Արածանի», էջ 76:



ԽԱՉԱՏՈՒՐ ՄՈՒԾԵՂՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու,
Թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ)

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՆՎԵՐՆԵՐ ՍՓՅՈՒՌԷՑ

Նյութական մշակույթի տասնյակ հազարավոր առարկաներ, որոնք ցուցադրված են Հայաստանի ազգային թանգարանում, ունեն կարևոր նշանակություն՝ ըմբռնելու համար հայ ժողովրդի ծագման ու զարգացման պատմությունը: Այստեղ է, որ մարդը կարող է մի ամբողջական պատկերացում ստանալ արևելքի և արևմուտքի հետ բյուրավոր թելերով կապված Հայաստան աշխարհի մասին:

Հնագիտական պեղումները, որոնք տարեց-տարի լայնորեն ծավալվում են Սևանի ավազանում, Էրեբունի ամրոցի, Կարմիր բլուրի, Արմավիրի, Գառնիի հեթանոսական տաճարի, Դվին քաղաքի ավերակների վրա և շատ այլ հնավայրերում, ինչպես նաև ազգագրական գիտաբանությունը, վերջին տասնամյակներում մեծապես հարստացրել են թանգարանի ֆոնդերը:

Սակայն հայոց հողի ծոցից դուրս եկած անցյալի նորահայտ վկայությունների հետ միասին թանգարանը հարստանում է նաև սփյուռքից ստացված հնագիտական բնույթի նյութերով:

Շակատագրի բերումով աշխարհի տարբեր կողմերում տարածված հայությունը Սովետական Հայաստան է ուղարկում իր անցյալի նշխարները, որոնք սրբությամբ պահել է օտարության մեջ և այժմ ոգեշրջված Հայաստանի առաջընթացով նվիրում է նրա ազգային տանը՝ պատմության պետական թանգարանին, Երևան, Լենինի հրապարակ: Այդ նվերների ամենատպալար մասը

ալ կազմում են հին ու միջնադարյան դրամները:

Հիրավի պատմության համար, որպես կարևոր, երբեմն անգուգական տվյալներ են ներկայացվում այդ փոքրիկ, սակայն իմաստալից մետաղյա կտրակներով: Դրանք իրենց նյութի կշռային չափերով, իրենց վրա ունեցած պատկերներով ու արձանագրություններով ներկայացնում են ժամանակագրական, դիցաբանական, տնտեսական և շատ այլ կարգի այնպիսի վկայություններ, որոնցից հաճախ տակավին զուրկ են մատենագրական ամենահարուստ աղբյուրներն անգամ:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ մետաղյա դրամներն իրենց ծագման ու զարգացման վաղագույն ժամանակներից մինչև ուշ միջնադար, հանդիսանալով պետական օրենքներով սահմանված վճարամիջոցներ ապրանքափոխանակության համար, տարբեր դարաշրջաններին բնորոշ իրենց պատկերատիպի տեսակներով արտացոլում են յուրաքանչյուր առանձին վերջրած երկրի քաղաքական պատմության կարևոր փոփոխությունները:

Եղել են քաղաքներ, որոնք կործանվել են բոլորովին, սակայն նրանց անունները պահպանվել են դրամների վրա: Եղել են ճարտարապետական կոթողներ, որոնք անհետացել են, քայքայվել են պատկերները մեզ են հասել քաղաքի վրա դրամներով:

Եղել են աշխատանքային գործիքներ, ուսուցիչ պարագաներ, պաշտամունքային ա-



Մ. թ. ա. 85 թիվ.

Հայոց թագը թափուր, պատկերված հռոմեական զորավար Մարկոս Անտոնինոսի արծաթ դրամի վրա Հայաստանի նվաճման առթիվ: Նվեր Զարեն Պտուկյանից



Մ. թ. ա. 20—18 թվերի

Օգոստոս Օկտավիանոսի արծաթ դրամը Հայաստանի նվաճման առթիվ: Նվեր Զարեն Պտուկյանից.



Մ. թ. ա. 20—18 թվեր.

Օգոստոս Օկտավիանոսի արծաթ դրամի վրա հայ զինվորի պատկերը, թողարկված Հայաստանի նվաճման առթիվ: Նվեր Զարեն Պտուկյանից



140 թիվ.

Հռոմեական կայսր Անտոնին Պիոսի պղնձյա շքադրամը հալոց թագավոր Սոլեմնուսի օժման առթիվ: Նվեր Զարեն Պտուկյանից:



Լուկիոս Վերոս, 164 թիվ, հռոմեական շքադրամ հալոց թագավոր Արշակունի Սոլեմնուսի օժման առթիվ: Նվեր տեր և տիկին Գեղամ ու Փառանձեմ Գալաճյաններից:



164—165 թվեր. Հռոմեական կայսր Մարկոս Ավրելիոսի պղնձյա շքադրամը, թողարկված Հայաստանի նվաճման առթիվ: Նվեր տեր և տիկին Գեղամ ու Փառանձեմ Գալաճյաններից:

ուարկաներ, տարբեր տարազաններ, որոնք փոխվել ու չքացել են, սակայն նրանց պատկերները հիշատակված են մետաղյա դրամների վրա և եթե չլինեին վերջիններս, ապա մենք զրկված կլինեինք աղբյուրագիտական այն հարուստ շտեմարանից, որ բացվում է մեր առաջ դրամագիտության շնորհիվ:

Ի՞նչ է մտածում հայ մարդը օտար երկնքի տակ, երբ Հայաստան է ուղարկում պատմական այդ նշխարները: Այս հարցի բնորոշ պատասխանը կարելի է գտնել այն նամակներում, որ թանգարանն ստանում է սփյուռքից: Ահա դրանցից մեկը. Ամերիկայի Միացյալ Նահանգների Դետրոյտ քաղաքի հայագի բնակիչ Եղիազար Պահլավունին, նվիրելով Հայաստանի թանգարանին հին դրամներ, գրում է՝

«...Սրտիս մարմաջը հանդարտեցնելու համար միշտ ջանացի նկատելի բան մը դրկել իմ ցանկալի հայրենիքիս... Խնդրում եմ ընդունեցե՛ք անմար սիրույս, այրող կարոտիս, համոզված գաղափարակիցի օղային համբույրները և տվե՛ք զայն իմ սիրելի Հայաստանի սարերուն, ձորերուն, դաշտերուն, ջուրերուն, գետերուն, լիճերուն, օդին, քամուն, քարին, հողին, իսկ իմ ժողովրդիս մեծին, պզտիկին, ծերին, երիտասարդին, մամիկին, պարմանուհիին, պատանեկին, մանկիկին, գրագետին, բանաստեղծին, իմաստունին, մշակին, որոնց միացյալ աշխատանքով հայ ժողովրդին հանճարն է ցուցահանվում, և փառք էք կերտում ի տես համայն աշխարհի և ի հեճուկք ցեղասպան, գազան թուրքին:

Կրկնակի համբույրներով
Եղիազար Պահլավունի»:

Սփյուռքում ապրող հայը չի կարող անտարբեր մնալ և իր մասնակցությունը չբերել հայրենիքում կատարվող ազգանվեր աշխատանքին և ջանում է փրկել ազգային հիշատակները:

Այդ նույն խոհերի մղումով է, որ Նյու-Յորքի հայկական գաղութը իր մեծարժեք լուսնի մոմեց Հայաստանի պատմության թանգարանը:

Ներդրումներն արտահայտվեցին նախ Գեղամ և Փառանձեմ Գալանյանների նվիրած հին ու միջնադարյան դրամների քերտումով և ապա Զարեհ Պտուկյանի հոռմեական և հայկական դրամների հարուստ հավաքածուների ստացումով:

Գալանյան ընտանիքի նվերը թանգարանին հանձնող նյու-յորքաբնակ սեբաստացիները ներկայացրել են մի փոքրիկ գրություն, որի մեջ ասված է. «Նյու-Յորքի բնակիչ Գեղամ Գալանյանը տարիների ճիգերով հավաքած հայկական դրամներու այս

հավաքածուն նվիրած է մեր թանգարանին: Տեր և տիկին Գեղամ և Փառանձեմ Գալանյանները դժբախտություն ունեցած են վերջին պատերազմի մեջ կորցնելու իրենց միակ զավակը՝ Տիրամը: Եվ այս հայկական դրամներու հավաքածուն կնվիրեն մեր թանգարանին, իրենց նահատակված զավակին հիշատակը հավերժացնելու փափագով: Գեղամ Գալանյան երեք տարիներն ի վեր հիվանդությամբ մը կտառապի: Ինք ճակատիք քրտինքով ապրող գործավոր մը եղած է: Հայրենասիրական վե՛մ գզացումով է, որ կկատարեն այս զոհաբերությունը, նվիրելով հայկական դրամներու հավաքածուն հայրենիքին: Իրենց ալ փափագը եղած է այցելել Հայաստան, տեսնել հայրենիքի վերելքը ու անձամբ հանձնելու հավաքածուն, բայց հիվանդությունը և իրենց համեստ վաստակը արգել եղած է: Տեր և տիկին Գեղամ և Փառանձեմ Գալանյանները հոգեկան երջանկություն կզգան այս նվիրատվության համար»:

Այդ գրության մեջ մի այլ տեղ գրված է. «Գեղամը իր միակ զավակը ուղարկեց գերմանական ֆաշիզմի դեմ կռվելու, որովհետև Գեղամը իբրև հասարակ աշխատավոր գիտակցում էր, որ գերմանական ֆաշիզմը պետք է ջախջախվի, և այդ կռվում Տիրամը զոհվեց»:

Հիրավի մեծ է արժեքը Գալանյանների նվիրական ժողովածուի:

Այն քաղկացած է տարբեր երկրների, ընդհանուր թվով շուրջ 170 դրամներից ու շքադրամներից: Ներկայացված են վաղ հայկական, մասնավորապես հայոց Ծովքի Քսերքսես թագավորի, ինչպես նաև Արտաշեսյան հարստության Տիգրան Մեծի, նրա որդու՝ Արտավազդի դրամները: Վերջիններս հետ ժողովածուի մեջ կարելի է տեսնել Պոնտոսի թագավոր՝ Միհրդատ 6-րդ Եվպատորի շքադրամը:

Հանդես է բերված հոռմեական 1—2-րդ դարերի ոսկա, արծաթյա և պղնձյա շքադրամներ ու դրամներ, թողարկված կայսերական Հռոմի և Հայաստանի ռազմա-քաղաքական առանձին դեպքերի առիթով: Այդ տեսակետից հետաքրքրական են կայսեր՝ Օկտավիանոսի, Տիբերիոսի, Ներոնի, Տրայանոսի, Անտոնին Պիոսի, Մարկոս Ավրելիոսի և Դ. Վերոսի հուշադրամները, որոնց վրա նշված են Հայաստանին վերաբերող պատկերներ և ռազմա-քաղաքական լուռուզներ: Հավաքածուի մեջ կան նաև ինչպես պարթևական, այնպես էլ սասանյան դրամներից նմուշներ, մասնավորապես Արշակունի Միհրդատ Ա, Հրահատ Բ, Հրահատ Դ և Սասանյան Ծապուհ Բ, Եղիգետ Բ, Խոսրով Բ արքաների դրամները: Ժողովածուն օժտված է նաև հազվագյուտ բյու-

զանդական 6—10-րդ դդ. ոսկյա ու պղնձյա դրամներով, դրվագած Կոստանդնուպոլսում, Ռավենայում, Անտիոքում և այլ քաղաքներում:

Այս խմբում ներկայացված են Տիբերիո-



116—117 թվեր. Հռոմեական կայսր Տրագանոսի պղնձյա շքադրամը Հայաստանի նվաճման առթիվ: Նվեր տեր և տիկին Գեղամ և Փառամենե Գալադյաններից:

սի, Հերակլեսի և նրա երկու որդիներ՝ Հերակլ-Կոստանդինի ու Հերակլենոսի պատկերներով, Հուստինիանոս Բ, Լևոն Ե, Հովհաննես Ա Չշկիկ կայսրերի դրամները: Հավաքածուի վերջին և մեծագույն մասը կազմում են կիլիկյան հայկական պետության արծաթյա ու պղնձյա դրամները, որոնց մեջ ուշագրավ են հայոց թագավորներ Լևոնի «օծման» հուշատրամները, Ջաբելի և Հեթումի, իսկ վերջիններիս կողքին Երկյեզվանի (հայերեն և արաբերեն) դրամները, թողարկված 13-րդ դարի 30—40-ական թվականներին Սիս քաղաքում Հեթումի և սելջուկյան սուլթան Քալիսարաու իբն Քալ-Կոբադի անունով:

Առանձին օրինակներով ներկայացված են Լևոն Մեծ, Մմբատ, Կոստանդին, Հեթում Բ, Լևոն Գ, Ավշին, Լևոն Դ, Կոստանդին Գ, Կոստանդին Դ և Լևոն Ե թագավորների արծաթյա ու պղնձյա այնպիսի դրամների, որոնք իրենց վրա ունեցած գրությունների ու պատկերների տվյալներով լրացնում են մեր թանգարանի հայատառ դրամների շարքը:

Ժողովածուի ամենավաղ դրամը պատկանում է Եգիպտոսի Պտղոմեոսյան հարբա-

սությանը, թողարկված մ. թ. ա. 4-րդ դարում, իսկ ամենատառ՝ Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Ե (1374—1375) իշխանության տարիներին:

Դրամագիտական նման ժողովածուներն ստեղծվում են երկար տարիների ընթացքում համատ ձգտումների և հաճախ մեծ գոհողությունների գնով: Սակայն ուշագրավ է նաև նյութաբանական Զարեհ Պտուկյանի դրամագիտական նվերը. նույնպես բաղկացած է երկու կարևոր մասերից: Նախապես, նա ուղարկեց զուտ ազգային դրամներ, թողարկված Կիլիկիայի հայկական պետության կողմից 12—14-րդ դարերում: Այդ շարքով ներկայացված են 362 արծաթյա դրամական միավորներ, կիլիկյան Հայաստանի 14 հայ թագավորների անուններով:

Այնուհետև, վերջերս նա Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաքինի միջոցով Հայաստանի թանգարանին հանձնեց հռոմեական դրամներ, բայց այնպիսի օրինակներ, որոնք բոլորն էլ թողարկվել են Հայաստանի վերաբերյալ պատկերներով և արձանագրություններով: Դրանք նվիրված են հռոմեական առանձին գորավարների՝ դեպի Հայաստան կատարած արշավանքներին և արտացոլում են որոշակի տարիների համար Հայաստանի վիճակը Հռոմի տիրակալության տեսակետից:

Լինելով անցյալի անմիջական վկաները, այդ դրամներով հանդես են բերված թեև միակողմանի, բայց կարևոր ցուցումներ պատմական իրադրությունների քննության համար: Դրանցից մեկի վրա դրոշմված է հռոմեական գորավար Մարկոս Անտոնինոսի դիմանկարը և հայոց թագ թափուր, վերցրած նետ ու աղեղի մեջ: Այն թողարկվել է մ. թ. ա. 35—34 թվերին, երբ Մ. Անտոնինոսի զորքերը գրավել էին Արտաշատը և ձերբակալված հայոց թագավոր Արտավազդ Բ-ին յուր ընտանիքով աքսորել էին Եգիպտոս: Մի ուրիշ դրամով ներկայացված է հայ զինվորը հնազանդ կանգնած և շուրջը գրված է, որ Հայաստանը գրավված է: Դրամն այդ թողարկվել է մ. թ. ա. 20—18 թվերին, երբ Օգոստոս Օկտավիանոսի զորքերը հարձակվել էին հայոց երկրի վրա, ներքին խարդավանքներով սպանել էին տվել Արտաշես Բ-ին, որ ժողովրդի գլուխն անցած մաքառում էր հռոմեական նվաճողների դեմ՝ իր հոր սպանության և Արտաշեսյան զանի անկախության համար: Այստեղ ուշագրավ է հայ զինվորի տարազը, նրա զենքերի տեսակները, որ պատկերված են հռոմեացիների կողմից: Հարկ է նկատել, որ Հայաստանի անվան ARMENIA և կամ կրճատ ARMEN լատինատառ ձևերը դրամական շրջանառության համաշխարհային

որոշորում առաջին անգամ արտացոլվել են Մարկոս Անտոնիոսի և Օգոստոս Օկտավիանոսի հիշյալ դրամներով: Բացի այդ, Պտոլեյանը գտել է նաև երկու նույնանման, բայց տարբեր կտրային չափի արծաթ դրամներ՝ թողարկված Ներոն կայսեր դիմանկարով և հաղթանակի դիցուհու պատկերով, ըստ որում վերջինիս մոտ նշված է ARME- NIACUS լատիներեն գրությունը՝ մի տիտղոսաձև, որով հռչակվել էր Հռոմի կայսրը Հայաստանի նվաճման համար:

Այդ իրողությունը տեղի է ունեցել 59 թվին, երբ հռոմեական լեգեոնները Կորբոլոնի գլխավորությամբ արշավելով Հայաստան՝ ներս էին խուժել Արտաշատ:

Ինչպես Գալաճյանի, այնպես էլ Զ. Պտոլեյանի ժողովածուի մեջ գտնվում են մեկական օրինակներով 116—117 թթ. պղ- դրնձյա խոշոր շքադրամներ: Դրանց մի կողմի վրա դիտվում է Տրայանոս կայսեր դիմաքանդակը, իսկ մյուսին՝ պատկերված է Հայաստանը կնոջ կերպարանքով, նստած երկու խոշոր գետերի միջև, նրա վերևում կանգնած է Նիզակը ձեռքին ինքը՝ կայսր Տրայանոսը:

Այս պատկերի շուրջը գրված է, որ Հայաստանը և Միջագետքը հպատակեցված են հռոմեական իշխանությանը: Ուշագրավ է, որ հոսող ջրի խորհրդանշաններով անձնավորված երկու հոսիկու կերպարները հռոմեացիները դիտել են որպես Տիգրիս և Եփրատ գետերը: Հենց այդ պատկերացումը, որ Հայաստանը ներկայացված է Տիգրիս ու Եփրատ գետերի միջև, հիշատակում է հռոմեացիների տվյալ ժամանակներում հայկական պետության աշխարհագրական դիրքի վերաբերյալ ունեցած սահմանումը:

Տրայանոսի դիմանկարի շուրջ գրված են նրա տիտղոսները, որ նա ինքնակալ է, Կեսար ամենաբարո, պաշտելի, գերմանացիների, Դակերի, Պարթևների հաղթող, բարձրագույն քրմապետ, տրիբուն, հյուպատոս 6 անգամ և հայր հայրենիքի: Տրայանոսը 115 թվին Հայաստանում լինելուց հետո վերադարձել էր Հռոմ, և սենատը նրա հաղթական արշավանքի իմաստը հավերժացնելու համար 116—117 թվերին զանգվածորեն թողարկել է տվել այս պատկերատիպով պղնձյա շքադրամներ: Ինչպես Տիրան Գալաճյանի, այնպես էլ Զարեհ Պտոլեյանի հավաքածուների մեջ մենք տեսնում ենք Հայաստանի համար հռոմեացիների կողմից ոչ միայն զուտ ռազմական բնույթի պատկերներ, այլև հայ-հռոմեական քաղաքական հարաբերությունների բացահիշ կարևոր երևույթներին նվիրված շքադրամներ: Դրանցից մեկը վերաբերում է 140 թվին: Նրա վրա պատկերված է այն

հանդիսավոր պահը, երբ Հռոմի կայսր Անտոնին Պիոսը պաակադրում է հայոց Արշակունի թագավոր Սոյեմոսին: Լատինատառ գրությամբ այդ պատկերի տակ ազդարարված է, որ սենատի որոշումով հայերին թագավոր է տրված: Ծագումով Պարթև Սոյեմոսը դաստիարակվել էր Հռոմում, և երբ նրան հայերին թագավոր դարձրին՝ կնքեցին Տիգրան անունով, մի անուն, որ խորհրդանշում էր հայերի անկախությունը Տիգրան Մեծի ժամանակ, չնայած այդ հեղինակությունից անցել էր արդեն շուրջ 200 տարի, լակայն ժողովրդի հիշողության մեջ այն դեռ փայլատվում էր: Այս Սոյեմոս-Տիգրանին Հռոմեական Կայսրությունը համառոտեմ պաշտպանում էր որպես իր հավատարիմը, երբ 161 թ. հայ-պարթևական միացյալ ուժերը վոնդեցին նրան Հայաստանից, ապա Հռոմը չհանդուրժեց իր քաղաքականության այդ ձևի տապալումը: Անմիջապես հռոմեական զորաբանակները շարժվեցին դեպի Հայաստան, և կարս Մարկոս Ավրելիոսի գահակցի՝ զորավար Լուկիոս Վերոսը, վերահաստատեց Հռոմ փախած Սոյեմոս-Տիգրանին իր գահի վրա իբրև հայոց թագավոր:

Կայսրության համար մեծ նշանակություն ունեցող այդ հաղթանակի առթիվ 164 թ. Հռոմի փողերանոցները թողարկեցին դրամներ, նվիրված Սոյեմոս-Տիգրանի երկրորդ թագադրությանը, այս անգամ արդեն կապված Լուկիոս Վերոսի արևելյան արշավանքների հետ: Դրամի վրա պատկերված է թագադրության հռոմեական ծեսը. բեմի վրա նստած է Հռոմի կայսրը, նրա աջ թևի մոտ կանգնած է Լուկիոս Վերոսը, թիկունքին՝ կայսեր ժառանգները, իսկ ներքևում կանգնած է հայոց թագավոր Սոյեմոսը և գլխին է դնում արքայական պսակը, որ տալիս էր նրան վերևից Հռոմի տիրակալը: Այս տեսարանին կից լատինատառ արձանագրված է, որ սենատի որոշմամբ հայերին թագավոր է տրված:

Այսպիսի դրամների շրջանառությամբ հաղորդվում էր Հռոմի քաղաքականության, նրա հաղթանակների մասին և հաղորդման այդ ձևը միակ մասսայական ու գործոն միջոցն էր հիշյալ ժամանակներում:

Այդ կարգի հռոմեական դրամների շարքում բերված են ինչպես Լուկիոս Վերոսի, այնպես էլ Մարկոս Ավրելիոսի դիմաքանդակներով 164—165 թվերի դեմարներից այնպիսի նմուշներ, որոնց վրա գրված են նրանց մակդիրները Հայաստանի առումով՝ «Արմենիակոս», և տարբեր պատկերներ այդ առթիվ (Հայաստանը կնոջ կերպարանքով ընկճված նստած է գետին գլխիկոր և կամ թե այդ նույն կերպարանքի կող-

քին թեւալոր հաղթանակն է կանգնած և շատ այլ խորհրդանշաններ): Գալաճյաններին և Զ. Պտուկյանի նվերները ունեն կարելի էր գիտական նշանակություն մեր երկրի պատմության համար: Նրանց կորստից փրկելու հոգսն է, որ համակել է մեր հայրենակիցներին: Այսպես օրինակ, փարիզաբնակ Մկրտիչ Գազանճյանը, Հայաստանի թանգարանին նվիրելով ազգային հերոս Անդրանիկի ինքնահոս գրիչը, գրում է.

«Երևանի թանգարանի պատվարժան վարչություն.

Ստորագրյալս, Մկրտիչ Գազանճյան, (ծնած ի Թամզարա Ծ. Գարահիսար) վերապրողը 1915-ի եղեռնեն և այժմ բնակվելով Փարիզ, անհուն գոհունակությամբ կնրվիրիմ սույն պատմական գրիչը, որ անցյալին պատկանած է ազգ. հերոս՝ գոր. Անդրանիկին և գոր ինն հիշատակ էր տրված:

Նկատելով որ՝ իբրև անհատ, գայն քույս պահիր իմաստե գուրկ պիտի լույսը՝ օգտը վելով, հայրենակցիս պր. Խաչիկ Թևեռյանի դեպի Հայաստան ուղևորութենեն, անոր ձեռամբ, սույն թանկագին գրիչը ուրախությամբ կնվիրեմ Երևանի թանգարանին, խորհելով, որ անոր բուն տեղը մեր հայկական թանգարանին մեջ է, հոն գոյություն ունեցող ուրիշ՝ շատ մը թանկարժեք իրերու կարգին:

Թող, այս ալ գա ավելնայու Անդրանիկի պատկանած մնացյալ գույքերուն՝ որոնք կոչված են այլևս պատմության սեփականությունը դառնալու, քաջ գիտենալով մանավանդ, որ Երևանի մեջ Անդրանիկի անունը ու անոր գործը հավերժացնելու առաջադիմությամբ, ժամանակե մը ի վեր բոլորն ջանքեր կթափվին, լույս աշխարհ բերելու համար հերոսին իրական արժա-

նիքն ու անոր կատարած դերը, մեր ազգագրական կյանքին մեջ:

Կեցցեն մեր Անդրանիկները.


Կեցցե մեր հավերժական Հայաստանը և կարոտալի համբոյր՝ անոր սրբազան հողին:

Մկրտիչ Գ. Գազանճյան
Փարիզ 25 հուլիս
1965 թ. »:

Բոստոնում ապրող Պերն Հ. Գազանճյանը դրամագիտության բաժնին ուղղած նամակում գրում է, որ հավաքել է հունահռոմեական հին դրամներ և մի քանի հայաստա դրամներ Ռուբինյան թագավորներից, ըստ որում հայտնում է. «Այս հավաքածուն մեծարժեք բան մը չէ: Ոսկե դրամներ չկան մեջը: Միայն արծաթ, բրոնզ և պղինձ դրամներ են: Սակայն բոլորն ալ շատ լավ վիճակի մեջ են և մեծ մասամբ հազվագյուտ: Այժմ, որ ծերացած եմ և տրկար՝ կփափագիմ հավաքածուն նվիրել Հայաստանի թանգարանին»:

Հնարավոր չէ թեկուզ շատ սեղմ ձևով հաղորդելու այն բազմատեսակ թանգարանային նյութերի մասին, որ պարբերաբար ստանում է թանգարանը սփյուռքից: Տիրան Գալաճյանի և Զարեհ Պտուկյանի դրամագիտական ժողովածուներով Հայաստանի թանգարանը հարստացավ, սակայն նրանք դեռ բոլորը չեն: Կան շատ ու շատ հայրենասերներ, որոնցից յուրաքանչյուրի անունը գրված է հայոց թանգարանի մայր Մատենադարանում: Ամենաթանկագինը այն սերն է մայր երկրի նկատմամբ, որ գալիս է աշխարհի տարբեր հայկական գաղթավայրերից թեկուզ հին դրամների նվիրաբերություններով:





«ԱՐԱՐԱՏ»-Ի ՈՒ ԵՐԳ-ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ*

Բ.

Անցյալ դարավերջի ու ներկա դարակզրի հայոց երաժշտական մշակույթի կառուցմանը կապված էական երևույթներից ու խնդիրներից ամսագրում քննված են՝ Արևելյան Հայաստանում հայկական ձայնագրության ուսուցումն ու տարածումը, հայ եկեղեցու ավանդական երգերի ձայնագրային ժողովածուների ստեղծումը և մեր հոգևոր կրթարվեստում արդի բազմաձայնության զարգացումը:

Արևելյան Հայաստանում հայկական ձայնագրության ուսուցումն ու տարածումը նախաձեռնողն էր Գևորգ Դ երաժշտասեր մեծագործ կաթողիկոսը, որ հայ եկեղեցու պաշտամանը կարգավորման հարցում շարունակելով Սիմեոն Երևանցու հարթած ճամփան, այս մասին իր բազմարդյուն ջանքերին սկիզբ դրեց 1873-ին, Պոլսից հրավիրելով Նիկ. Թաշճյանին ու հրապարակելով իր պատմական Կոնդակը⁴⁹:

Այնուհետև տարբեր հեղինակներ մեկնաբանում, մանրամասնում են. աստվածապաշտության մեջ երաժշտության կատարած դերի ու ձայնագրության արվեստի ուսուցման մասին կաթողիկոսի մտքերը: Հոդվածներով հանդես են գալիս, օրինակ՝ Վհր. Վրդ. Մանկունին⁵⁰ և Մեսր. քհ. Փափագյանը⁵¹: Վերջինս տալիս է հիշյալ մտքերի առավել պարզ ու մատչելի մեկնությունը, անելով մի բաղդատություն, որ պատմական հետաքրքիր փաստ ունի իր մեջ. «ուրեմն,—ասում է նա,—թե քահանայք և թե դպիրք կամ տիրացուք կպարտավորին հմուտ երգիչներից

սովորել և ապա ձայն ձայնի՝ եղանակ եղանակի հարմարեցնելով և մեղմաձայն և քաղցր եղանակներով դաս առ դաս երգել՝ ոչ թե խառնաշփոթ ձայներով եկեղեցին հարելունյան աշտարակ դարձնելով՝ ունկնդրաց սրտերը պղտորեն և գայթակղության առիժ դառնան, ինչպես պատահում է ուրեք ուրեք [!], որ երբեմն եկեղեցվո մեկ դասից սկսում են ցան ձայնով՝ էն մյուս դասից բարձրացնում են, մեկը ծանր կերպով է երգում, էն մյուսը թեթևացնում, մինը սկսում է չորրորդ ձայն, մյուսը՝ երկրորդ ձայնով է պատասխանում. իսկ երգեցողներից ոմանք թողած երգեցողությունը՝ սկսում են իրար հետ թըշնամաբար վիճել»⁵²: Իսկ Վհր. Մանկունին նույնպես ելնելով հայ պաշտոնեթղթության իրեն ժամանակակից վիճակից, քանի որ՝ «երբեք չենք ներեր ումեք ասել՝ զի եկեղեցական երաժշտություն մեր բոլորովին խանգարված է, սակայն ի վերս ալսր ամենայնի՝ անկեղծությամբ ևս պետք է խոստովանիլ՝ զի բավական օտար եղանակներ հաջողած են սարդիլ և մինչև անգամ ինչ ինչ շարականաց և երգոց ըստ

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի, 1968 թվականի №№ ԺԱ—ԺԲ-ից:

⁴⁹ «Արարատ», 1873, էջ 383—385:

⁵⁰ Եկեղեցական երաժշտություն և ձայնագրություն, «Արարատ», 1873, էջ 410:

⁵¹ Հայտնաբերված երգոց ազդեցություն, «Արարատ», 1873, էջ 413:

⁵² Այս առումով ուշագրավ մի դիտողություն էլ անում է Մ. Խոստիկյանը, երբ քննելով այն կապվածները, որոնք վերաբերում են՝ Ներսես Գ-ի ժամանակ «Շոնընտի» կոչված ժողովածուի ստեղծման պարագաների մասին Կ. Գանձակեցու հաղորդած տեղեկություններին, գրում է. «Կարծես թե մինչև այսօր էլ, երբ կանոնի ենթարկված և տպագրված շարական ունենք, կաթողիկոսի ներկայության հենց Էջմիածնում այդպիսի շփոթություններ չեն պատահում: Եվ եթե այժմ այդպես, ապա որչափ ևս առավել այն ժամանակ, երբ շարականների թիվը որոշ և կարգը հաստատ չէր, երբ կրոնական ոգին դեռ վառ էր, և յուրաքանչյուր վարդապետ յուր իրավունք կհամարեր նոր շարականներ հորինել և եկեղեցում երգել տալ: «Արարատ», 1908, էջ 942:

ձայնիցն եղանակներ փոփոխված և մի քանի ձայններ բոլորովին մոռացված են, մասնավոր կան տեղեր՝ որոց մեջ 4—6 ձայներ կամ ավելի և պակաս կգործածվին, կան տեղեր՝ զի աճ ձայնը ալ-ի և բլ-ի վերա եղանակելով կերգեն», միաժամանակ շոշափում է պատմական անցյալի փաստերը:

Կաթողիկոսի նախատեսած ծրագրի համաձայն, մինչև 1873 թվականի սեպտեմբեր ամիսը Ռուսաստանի վեց թեմերից երեսուն չափաֆա, ընդունակ դպիրներ են հավաքվում Էջմիածնում, և Նիկ. Թաշճյանը ձեռնամուխ է լինում ժառանգավորաց դպրոցի աշակերտների և Մայր Աթոռի սարկավագների ու դպիրների հետ միասին՝ նրանց ևս ինն ամսվա ընթացքում հայկական ձայնագրության արվեստը ուսուցանելու, այլև Ծարականի, Ժամագրքի ու Պատարագի բոլոր հատվածի եղանակները ձայնագրելու գործին, որ և հաջողությամբ է ընթանում: Նույն թվականի դեկտեմբերի 14-ին Մայր տաճարում երգեցողությունը առաջին անգամ կատարվում է ձայնագրությամբ: Ուսումնական տարվա վերջին վերոհիշյալ 80 դպիրները ետ գնալով իրենց թեմերը, տեղերում տարածում են ձայնագրության արվեստը: 1874-ին տպագրվում են հայկական ձայնագրության Դասագիրքն ու ձայնագրյալ Պատարագը⁵³ և հրատարակության են հանձնվում Ծարականը⁵⁴ ու Ժամագիրքը⁵⁵ ևս: Այս բոլորը ուրախության, հրճվանքի և զմայլանքի զգացումներ են շարժում արևելահայ հասարակության ու մտավորականության, ինչպես և ընդհանրապես հայկական շրջաններում: 1873-ի վերջերին Ստաթի վանքից գործով Էջմիածին եկած Ստ. վրդ. Մխիթարյանը, մոտիկից ծանոթանալով երգ-երաժշտության բնագավառում այստեղ կատարվող խոր տեղաշարժերին, իր պարտքն է համարում հատկապես անդրադառնալ դրանց ու միաժամանակ հրապարակալ հայտնել իր հիացումը⁵⁶: Բիչ անց ամսագիրը ավետում է՝ «Ռուսաստանի հայոց վիճակներն» եկեղեցական Ձայնագրության տարածման և հառաջադիմության համար ըստ բավականին բերկրափայլ տեղեկություններ հետգհետե կհաճախեն, և ամենուրեք ուսանողաց մեջ երևեցած խանդն և եռանդն՝ և անխոնջ ջանքով և հարատևելությամբ ուսանելու փուլերն մեծ մխիթարություն կպատճառեն Վեհ. Հայրապետի՝ ինչպես նաև համայն հոգեւոր և եռանդուն Հայոց արտին»:

և այդ առթիվ շնորհակալական խոսքեր ուղղելով Թաշճյանին, գտնում է, որ «պ. Թաշճյանն՝ զկնի Պատա Համբարձումի՝ արժանացալ Հայկական Ձայնագրությանը

⁵³ Դասագիրք եկեղեցական ձայնագրության հայոց, աշխատասիրեաց Նիկողայոս Թաշճյան, Վաղարշապատ, 1874: Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի, Վաղարշապատ, 1874 (բ. տպ. 1878-ին):

⁵⁴ Ձայնագրեալ Ծարական, Վաղարշապատ, 1875:

⁵⁵ Երգք ձայնագրեալք ի ժամագրոց, Վաղարշապատ, 1877:

⁵⁶ Տես՝ Ստ. վրդ. Մխիթարյան, Ձայնագրություն և Հանդես, «Արարատ», 1874, էջ 26—27:

նագրությունը ծաղկեցնողներուն մեջ երկրորդ տեղը բռնել, իսկ Ծարականը և եկեղեցական ամեն երգերը ձայնագրելով և ի տպագրություն հանձնելով՝ առաջին տեղը իրավամբք գրաված է, զոր անշուշտ Ազգային և Եկեղեցական պատմությունը մեր ի ժամանակին ըստ արժանվույն և ըստ վաստակոցն պիտի գնահատեն և նորա անունը պիտի փառավորեն»⁵⁷: Ավելի հետո ամսագիրը հայտնում է, թե հայկական ձայնագրության տարածվելով և եկեղեցական երաժշտության բարեկրթության աշխատանքների ծավալվելով «քանի քանի տեղերեն հատկապես ուղերձներ և գոհության թույլեր կձեռնվին հանուն Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց, որոց մեջ նշանավոր տեղ կունեն Օրեսայի Հայոց դպրոցի հոգաբարձություն և նորին Հայտարարագրությունը և ուղերձը»⁵⁸: Վիճակներում ևս տեղի ունեցող լուրջ բարեփոխությունների մասին իմանում ենք ականատեսների վկայություններից էլ: Այսպես, Ս. Տեր-Մելիքսեդեկյանը, պաշտոնական գործով լինելով Ալեքսանդրապոլում և անձամբ ստուգելով պաշտոնագրության ասպարեզում այստեղ տարված աշխատանքների արդյունքները, ի կարողանում տեսածի կողքովն անցնել անտարբեր⁵⁹: Այս հաջողությունները հիմք են տալիս հայոց ծխական դպրոցներին իսկ պարտավորեցնելու «ձայնագրյալ երգեցողությունը», որ և նախաձեռնում է հոգևոր իշխանությունը⁶⁰: Ընդհանուր խանդավառությունը անցողակի բնույթ չի կրում: Գևորգ Դ-ը դեռ 1880-ին էլ, ու դարձյալ՝ անձամբ մասնակցելով գործին, հրատարակության է պատրաստել տալիս «Օրհնությունների քաղվածքները», որ նույնպես չի վրիպում նախաձեռնողի ոմանց ուղարկությունից⁶¹: Թվում է, թե ժամանակին ծավալված սույն մեծ շարժման բուն արգասիքն է այն իրական դրդիչը ևս, որ Ս. Հարությունյանին էլ ուժ ու համարձակություն է տվել բարձրացնելու հայոց եկեղեցիներում «հասարակաց երգեցողությունը» վերականգնելու և զարգացնելու ինքնին ուշագրավ գաղափարը, թեև տվյալ նյութին նվիրված հոդվածում կան և վիճելի ու վերանայելի կետեր⁶²:

Նախընթացից թող այն տպավորությունը չստացվի սակայն, որ ձայնագրության արվեստի տարածման և մասնավոր հայ եկեղեցական երգերի ձայնագրյալ ժողովածուների ստեղծման գործը մեզ մոտ ընթացել է անարգել: Ընդհակառակը, խոչընդոտներ եղել են, և շատ կանուխեն, ինչպես տեսնելու ենք ստորև, որոնք

⁵⁷ Հայոց Ձայնագրություն ի վիճակս և Նիկողայոս Թաշճյան, «Արարատ», 1875, էջ 280—284:

⁵⁸ Հայկական Ձայնագրություն, «Արարատ», 1876, էջ 80:

⁵⁹ Մարգիս Տեր-Մելիքսեդեկյան Բայինդուրցի, Ձայնագրություն և հանդես Ռադեքսանդրապոլ, «Արարատ», 1876, էջ 81—83:

⁶⁰ Տես՝ Կանոնք ծխական դպրոցաց, «Արարատ», 1876, էջ 381:

⁶¹ «Արարատ», 1881, էջ 482:

⁶² Ս. Հարությունյան, Հասարակաց երգեցողությունը, «Արարատ», 1907, էջ 409:

ի վերջոյ այնպիսի հետքեր են թողել, նույնիսկ «Արարատի» էջերում, որ այժմ ստիպված ենք հստակ վերաբերմունք ցույց տալ դրանց նկատմամբ: Տակալի՜ Ստ. վրդ. Մխիթարյանը իր արդեն վկայակոչված հոդվածի սկզբում անհրաժեշտ է համարել մի ակնարկ անել⁶³: Հաջորդ տարին «Արարատը» քիչ ավելի էր բացում վարագույրը, ասելով. «Պ. Թաշճյան» տակավին ամխոնց կհետևի և պիտի հետևի հայոց Ձայնագրությունը ավելի ևս մշակելու՝ ճոխացնելու և պայծառացնելու՝ և միշտ պատրաստ է և կհանդիման լսել հասկացող և ողջամիտ թե Հայկական և թե Եվրոպական ձայնագրագիտաց՝ ինչպես նաև գրագիտաց օրինավոր դիտողությունը և բանադատությունը՝ և ըստ այնմ ուղղել թեև ուղղելի ինչ գտանվի, կամ ավելի լավ և դյուրըմբռնելի հրահանգներ և կանոններ հավելուլ, թեև դժբախտաբար անցյալ տարվան հետևե ցարդ մորա անձին դեմ հարձակվելեն և չար մախանձու և կրից արդյունք եղող պարծենկոտ և սնաբան դղըրդմունքներեն ավելի ոչ ինչ լուրջ և օգտավետ մի դիտողություն կամ բանադատություն չերևցնալ, և մի քանի անձինք այն աստիճան կիրք կբանցեն՝ որ երբ հուզված վիճաբանության՝ կամ լավ ևս է ասել՝ անվանարկիչ հարձակմանց մեջ ուշադրության արժանի մի թեթև և կարևոր կետ նկատվի, այն ևս յուր հարգը կկորսնցնե, և ցավալի է՝ որ մի ամսագրո խմբագրություն ևս կոշիկեն վեր ելեր և յուր մշտական սովորության համաձայն՝ գրական հրապարակին վերա տեսնված սնապարծ և անօգուտ հակառակությանց դեմ՝ պ. Թաշճյանի պատասխանեաց ամբողջ հրատարակությունը առանց տեսնելու՝ ընթեռնելու և համահունկու՝ միայն մի կողմին և մի անձի հրատարակածը իբր թե պաշտպանելու կկանխե» (ընդգծումը մերն է—Ն. Թ.)⁶⁴: Տեսնում ենք, որ վեճերը գրադեցրել են նաև ժամանակի հայ մամուլը, և դրանց ընթացքում արվել են նկատառումների դիտողություններ ևս, ինչպես ասված է վերևի մեջբերման մեջ էլ, որոնցից կարևորը մեր ընդգծածն է: Խնդրի սկզբունքային կողմը պարզելուն խանգարել են չափազանց բուրբուռված կրքերը, ինչպես և մեր մամուլի մի քանի օրգանների՝ այն ժամանակների համար նորաձևային մոլությունը՝ հակադրվել էջմիածնին ու «Արարատին»: Ավելի հստակ դիտողություններով հանդես է եկել «Մեղու Հայաստանին», որին և մանրամասն պատասխաններ է տվել «Արարատի» խմբագրությունը⁶⁵, առանձնացնելով լրագրի առաջ քաշած հետևյալ երեք կետերը. ա) ձայնագրված շարականներն այն չեն, որոնց սովոր է ժողովրդի ականջը, բ) հարկավոր էր լավ երգեցիկներ հրավիրել ամեն տեղերից և ընտրությանը ձայնագրել այն, որ ավելի խիտրած էր, և գ) ձայնագրած եղանակները շարականների նոքա են, որոնք հաճույական են եղել Նորին Օծու-

թյան, այն է Տաճկաստանի եղանակները, մինչդեռ էջմիածնի և ուրիշ տեղերի եղանակների վերա ուշք դարձուցած չեն: Անդրադառնալով առաջին դիտողության, ամսագրի խմբագրությունը ընդհանրապես ճիշտ է նկատում, որ «ժողովրդի ականջը և երբեմն ժողովրդից ավելի զարգացած ճաշակ ունեցողներն անգամ կարող են շատ անկանոն երգին կամ եղանակին սովորած լինել, բայց սա մի՞թե հիմն է, որ երգն յուր նախնական եղանակով ձայնագրել ձեռնարկողն ժողովրդի ականջին ընտելացածն անշուշտ ընտիր համարեն»: Երկրորդ դիտողության կապակցությամբ տրված պատասխանը հետաքրքիր փաստեր է պարզում մեր առջև: «Պարզ կերևի,—գրում է խմբագրությունը,—որ լրագրին անհաշտ է Վեհ. Կաթողիկոսի տնօրենությունը, որ երբ ձայնագրություն կպատրաստվեր քանիցս ժողովրդի եղած են և հարցվեցան որոնք հայտնի էին հին եպիսկոպոսներից և վարդապետներից և ինչ որ կանոնավոր և հարազատ ճանաչվեցալ, ընդունվեցալ: Այսպես օրինակ Հարության Ավետարանից հետո ասելի «Փառք յարութեան քո, Տէր, Նորաստեղծեալ» և այլն էջմիածնում երգվածներ են ձայնագրված: «Յիշեցուք»-ից հետո տոն օրերին երգելի «Անբաժանելին» երգը Վենետիկից առնված է արք. Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի (որ հին եղանակների քաջ շարականագետ է) երգածով ձայնագրելով: Եվ Ռուսիայի հայերի մեջ կզոտնըվի՝ արդյոք մի ուրիշն, բացի մոր ձայնագրագետներից, որ իմանար «Անբաժանելին» երգել: Նույնպես Գաբրիել արքեպիսկոպոսի երգածով ձայնագրված է ս. Հատորության ժամին երգելի «Ով անմահ հաց կենաց» և այլն: Ազգի Հայրապետի և էջմիածնի Կաթողիկոսի եկեղեցու տոներին հանդիսավոր կերպով սեղանի առաջ երգելի «Եւ ևս խաղաղութեան» քարոզը արք. Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանի երգածով է ձայնագրված, և այլն և այլն: Հմուտ երգիչ մի հին եպիսկոպոս կխոստովաներ, թե մա չգիտե մյուսն օրհնությունյան կամ եպիսկոպոս ձեռնադրելու քարոզների եղանակներ և ուրիշ քանի մի ծանր երգեր և ստեղծեր, ուրիշներն ևս մոռացել են: ...Ուրեմն ոչ մի տեղ չգտնված երգերը միակ գտնված ընտրելագույն և հարազատագույն աղբյուրից վերցնելը և ձայնագրելը կարո՞ղ է միթե երբևիցե կամայականություն համարվել: Ավելի ծանրակշիռ է երրորդ դիտողությունը և դրա առնչությամբ խմբագրության տված պատասխանը պետք է (ու կարող էր) ավելի փաստաշատ լիներ: Համեմայն դեպս, այնտեղ ասված է, որ «ձայնագրած եղանակները Նորին Օծության հաճույականներ չեն և Տաճկաստանի միայն, այլ բուն հին հայկական եղանակներ են, որոնք պահպանված են ավելի բազմամարդ հաջաբնակ տեղերում: ...4. Պոլսում պահպանված եղանակը բուն էջմիածնի եղանակն է, որ տարած էին այնտեղ ԺԴ և ԺԵ դարերից հաճախող էջմիածնի միաբանները,—որն առաջնորդության պաշտոնով, որը պատրիարքական Աթոռն ամբառնալով և որը նվիրակությամբ գնալով, որոնց գլխավոր պաշտոնն էր նախաձեռնող լինել եկեղեցական քարեզարդության և մեր նախնական ավանդույթի անթերի պահպանության, որոնց մինն ևս ազգային

⁶³ Ձայնագրություն և հանդես, «Արարատ», 1874, էջ 25:

⁶⁴ Հայոց Ձայնագրություն ի վիճակ և Նիկողայոս Թաշճյան, «Արարատ», 1875, էջ 231, 233—234:

⁶⁵ Տես՝ Ազգային տեսություն, «Արարատ», 1879, էջ 269—275:

կրոնական զգացմունքը վատ և կենդանի պահող երգեցողությունն է: Կաթողիկոսներն ևս՝ ոմանք երթե-վելություն կանեին Բյուզանդիոն և մոցա սովորու-թյուն էր փոխելուանդ աշխատություն մաս մեր երգե-ցողության եղանակների անկորուստ և անհատն պահպանության մասին: Հիշելու է մանապես Սի-մեոն կաթողիկոսի Թեոդորոս սարկավագն, որից կրկին փափագով սովորած էին հայրենի թանկագին եղանակը Կ. Պոլսի հայրենաստենչ հայերը»:

Անհրաժեշտ է նախ՝ լրացնել այն դիտողություննե-րը, որոնք ստաշ են բերված ի պաշտպանություն Ն. Թաշճյանի ձայնագրած երգերի, ապա անդրադառնալ թե՛ Արևելյան Հայաստանում և թե՛ Էջմիածնում մույն երգերի ժամանակին ընդհանրացած տարբերակների կարևոր խնդրին: Պոլսահայ մշակույթի, այդ թվում և եկեղեցական երաժշտության արմատները խոր մխրճված են առհասարակ միջնադարի բուն հայկա-կան հոգևոր կյանքի մեջ: Կաթողիկոսական գահը Սսից Էջմիածին տեղափոխելու ժամանակ (1441 թ.) Կիլիկիայում անշքացած էր արդեն հայ բարձրագույն տիպի դպրոցական կյանքը: Մայր երկրում վերջին տարիներն էր հաշվում Մեծոփա դպրոցը: Ժե դարի երկրորդ կեսին բարձրացավ Երզնկայի Ավագ և Կա-սյան վանքերի համալսարանը, Հովհ. վրդ. Համշեն-ցու գլխավորությամբ: Համշենցու մահից հետո (1497 թ.) նրա աշակերտներ Թորոս Տարոնեցին և


Գրիգոր Չորթան Արմիշեցին մոր համալսարաններ հիմնեցին, մեկը՝ Տարոնի ա. Առաքելոց վանքում, մյուսը՝ Արմեշում, որտեղից և վարդապետական ա-ռաջին իսկ սերնդի ջանքերով ընծյուղեց Բաղեշի նշա-նավոր դպրոցը⁶⁶: Վերջինիս սան և Վարդան Բաղի-շեցու աշակերտ Հովհաննես Կոլոտ պատրիարքի ձեռքով էլ պատվաստվեց Սկյուդարի դասատունը, որ «Թուրքիո հայոց ԺԸ դարո մտավորական կյան-քին վրա հանգրվան մը» եղավ⁶⁷: Պոլսահայ մտավո-րական կյանքը հետագայում բարգավաճեց առատ սնունդ բաշխով հայաբնակ ուրիշ աղյուրներից ևս, սակայն այդ բարգավաճումը որպես հիմք ուներ Կո-լոտի և նրա աշակերտների ծավալած հսկա գործու-նեությունը: Այս տեսակետից մեզն ու անգամ ավելի բնորոշ մի պատկեր է ներկայացնում պոլսահայ եկե-ղեցական երգարվեստի. որպես ուրույն դպրոցի, գո-յացումն ու զարգացումը:

(Շարունակելի)

⁶⁶ Ն. Ակինյան, Բաղեշի դպրոցը, 1500—1704 (Նը-պաստ մը հայոց եկեղեցւո պատմության և մատենա-գրության), Կիևնա, 1952:

⁶⁷ Բաբգ. ծ. վրդ. Կոլոտեցեյան, Կոլոտ Հովհաննես պատրիարք (պատմագրական և բանասիրական ու-սումնասիրություն), Կիևնա, 1904, էջ 69:





ԹԱՄԱՆՅԱՆ ՅՈՒ. Ա., ԱԶԱՏՅԱՆ Ը. Ռ.

(Գարտարապետներ)

ՄՈՄԻԿԸ ՈՐՊԵՍ ԺԱՐՏԱՐԱՊԵՏ

Հայ պատմական և արտարապետության թողած հարուստ ժառանգությունը պիտված է Հայաստանում մեկ և պատմում է երբեմնի ծաղկող հայ մշակույթի մասին: Բազմաթիվ են այդ հուշարձանները, սակայն սակավաթիվ են մեզ հասած տեղեկությունները նրանք կերտող արտարապետների մասին: Ըստ և շատ արտարապետների, նկարիչների, քանդակագործների, գրչական արվեստի գործիչների անունները անհայտ կորել և ջնջվել են, սակայն ուսումնասիրողներին երբեմն հաջողվում է այդ անունները վեր հանել և նրանց կատարած գործերի հետ ներկայացնել գիտությանը:

Միջնադարյան առավել նշանավոր արտարապետներից մեկի անունը հասել է մեզ, որին ազատ կարող ենք հիշատակել Տրդատի, Մանվելի, Սիրանեհի և ուրիշների կողքին: Խոսքը վերաբերվում է Մոմիկ վարդապետի բազմաթիվ անգամ ստեղծագործությանը:

Մոմիկի ստեղծագործությանը նվիրվել են մի շարք աշխատություններ. Ա. Ավետիսյանի «О художнике Момике»¹ և «Գլածորի մանրանկարչության դպրոցի հիմնադիր վարդապետ Մոմիկը»² հոդվածները, ինչպես նաև Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի «Գրչության արվեստը հին հայոց մեջ» և Գարեգին Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» գրքերում հետազոտողները ուսումնասիրում են Մոմիկի ստեղծագործության միայն մի կողմը.—այն է. Մոմիկն իբրև նկարիչ և գրչական արվեստի ու ձեռագրերի գեղարվեստական ձևավորման գործի մեծ վարպետ:

Ա. Բարխուդարյանը «Միջնադարյան հայ արտարապետներ և քարգործ վարպետներ» աշխատության մեջ վեր է հանում Մոմիկի արտարապետական և քանդակագործական ստեղծագործությունները, զգալի ընդլայնելով նրա գործունեության մասին մեզ հասած աղետ տեղեկությունները:

Մեր հոդվածը նույնպես նվիրված է Մոմիկ վարդապետի արտարապետական և քանդակագործական աշխատանքների քնննությանը:

Ինչպես արդեն հայտնի է, Մոմիկի արտարապետական և քանդակագործական գործերը կենտրոնացած են պատմական Վայոց ձորում: Մոմիկն իր ստեղծագործության սկզբնական շրջանում եղել է նկարիչ և իր տաղանդը նվիրել է գրչական և հատկապես մանրանկարչական արվեստին:

Հասունանալով՝ նա զբաղվում է քարգործությամբ—քանդակագործությամբ և կյանքի վերջում հմտանում արտարապետության մեջ:

Արվեստի պատմությանը հայտնի են այդպիսի օրինակներ, երբ արվեստագետը նրկարչությունից, որն ունի երկու չափում, անցնում է քանդակագործության, այսինքն երեք չափումների, և վերջապես արտարապետությանը, որն արդեն ունի ներսի ծավալ, կամ չորս չափում: Դա իտալական վերածննդի հռչակավոր վարպետներից՝ Միքելանջելոն է:

Ստեղծագործական մտքի զարգացման իրար հաջորդող այս օրինաչափ փուլերը կազմել են Մոմիկի գործունեության հիմքը: Նա չի բավարարվել հարթությամբ ու ծավալով և ձգտել է ներքին տարածությունները ենթարկել ծավալին, ստեղծել է արտարապետական այնպիսի գոհարներ, ինչպիսիք

¹ «Տեղեկագիր», ԳԱ-ի Հաս. գիտ. 1956, № 2:

² «Էջմիածին», 1956, № 8—9:

են՝ Ամադուի Նորավանքում կառուցված երկհարկանի եկեղեցի-դամբարանը, Արենիի եկեղեցին և հավանական է, կառուցել է ևս ուրիշ կոթողներ, որոնք կարող ենք նշել միայն ենթադրաբար: Մոմիկի այդ անցումը դեպի ներքին տարածություն, դեպի ճարտարապետություն, վկայում է նրա մեծ տաղանդի մասին:



Արենիի հուշարձանի արևմտյան մուտքի ճակատակալ քարը (չափագրություն զծ. 1)

Եղեգնաձորի շրջանի Արենի գյուղի մոտ գտնվող հուշարձանը կրում է Մոմիկի ձեռագիր շինարարական արձանագրությունը 1321 թվականով և հանդիսանում է նրա լավագույն գործերից մեկը:

Արփա գետի ձախ ափի բարձրադիր հարթակի վրա տեղադրված հուշարձանը ուրվագծվում է հսկայական ժայռի ֆոնի վրա, որը երևակայական առնչելի ամրոցի պարիսպ է հիշեցնում: Այդ հակասություններով լի բնանկարին զարմանալի կերպով համապատասխանում է հավերժ հանգստություն խորհրդանշող հուշարձանը: Տեղը ընտրելիս Մոմիկն, անշուշտ, հաշվի է առել այն տե-

սարանները, որոնք բացվում են մոտակա ձորից և բարձունքներից դեպի հուշարձանը և հուշարձանից դեպի Արփա գետի հովիտը, շրջակա լեռներն ու ձորերը: Գույնի ներդաշնակություն տեսակետից, քարի ընտրությունը սերտորեն կապված է շրջապատի բնության հետ, կազմելով նրա անբաժանելի մասը: Հուշարձանը լավ է դիտվում բավականին մեծ հեռավորությունից:

Կոթողի կառուցման ժամանակը անցնելի հետք է թողել համապատասխանների և առհասարակ ամբողջ ճարտարապետական հորինվածքի վրա:

Հայաստանի 13—14-րդ դարերում, հատկապես Սյունիքը, ապրել է ուրույն կյանքով: Տարանցիկ ճանապարհների զարգացման հետ մեկտեղ զարգանում է նաև նոր ծնունդ առած առևտրական կապիտալը: Աշխարհիկ գաղափարները թափանցում են նույնիսկ եկեղեցական կառուցվածքների, հատկապես դրվագումների մեջ:


Այդ շրջանում գորեղ ազդեցություն ունեւ Հայաստանի մայրաքաղաք Անի, որը սնում էր Հայկական լեռնաշխարհում նոր սկիզբ առնող աշխարհիկ գաղափարներով արվեստին:

Անիի ժամանակակից արվեստագետը՝ Մոմիկը, հարազատ մնալով ժամանակի ոգուն, հրաժարվում է հնուց եկած ավանդական ձևերից և պատկերում է Տիրամորը, որպես սովորական կին, հագնված իր ժամանակին համապատասխանող տարազով, ազատ շարժումներով: Կասկածից դուրս է, որ արվեստագետը իր գործունեության մեջ օգտվել է իրական բնօրինակից:

Մանրանկարչության մեջ, կարելի է նշել մի շարք օրինակներ, որոնք փայլուն կերպով հաստատում են վերը նշվածը: Այդ նույն գաղափարը, կատարված մեծ վարպետությամբ, տեսնում ենք՝ Արենիի հուշարձանի արևմտյան շքամուտքի ճակատակալ քարի վրա (զծ. 1):

Ծակատակալ քարի զարդաքանդակի հիմնական կոմպոզիցիայի կենտրոնում տեղադրված է Տիրամայրը՝ մանուկ Հիսուսը գրկելին, ճատած բազմոցի վրա: Ծակատակալ քարի ամբողջ մակերեսը մշակված է զարդաքանդակներով, որոնք պատկերում են ոճավորված խաղողի մուլը: Խաղողի ողկույզները ավելի ևս շեշտում են բուսական աշխարհի հարստությունը: Այստեղից անմիջապես կապ է ստեղծվում բնության հետ, որով և շեշտվում է այն փաստը, որ թե՛ Տիրամայրը և թե՛ աստվածային Հիսուսը նույնքան երկնային են, որքան և երկրային:

Մոմիկը Տիրամորը պատկերում է վերին աստիճանի ճշմարտացիությամբ, նույնիսկ գեղջկական հագուստով: Դեմքի կատարյալ



Արևելի քաղաքացի առաքապետները (չափագրություն գծ. 2)

իմագները արտահայտում են ժողովրդա-
տան բարիությանը յի կնոջ կեցվածք և կար-
գեստ աշխարհի կնոջ այնքան ծանոթ է, որ հենց հի-
սա կարելի է նրան հանդիպել մոտակա գյու-
ղերից մեկում:

Այդ վերին աստիճանի մարդկային կեր-
պարը, որով քանդակագործը օգտվել է Տի-
մոթի պատկերելու համար, լավագույն ա-
րվագույց է, որ աշխարհիկ մոտիվները ար-
ված են գրավում են հիմնական տեղը նրա
տեղեկագործության մեջ:

Քանդակագործության մեջ նշանակալից է
փաստը, երբ քանդակը հանդես է գալիս
միայն զարդարման միջոց, այլ նա բացա-
րապես է նաև նյութ: Եթե ճակատակալ
արհի հիմնական մակերեսը լրացնում է ոլո-
սապտույտ բուսական զարդաքանդակը, ա-
յլ քաղաքացի քանդակագործման մեջ կի-
ստանված է առավելապես գծային-երկրաչա-
փական զարդաքանդակը, որը բնորոշում է
այն նյութի որակը, որից պատրաստված է
քաղաքացի: Այսպիսով, կատարման ձևի հա-
տարրությունը այն միջոցն է, որը յիովին բա-
րաբարություն է նյութի էությունը:

Նրբաքանդակ ոճով՝ (ընդամենը 0,5—2,5
սմ) ոչ մեծ խորությամբ կատարված քան-

դակը ապացուցում է նրա հեղինակի մեծ
արվեստագետ լինելը:

Փայլուն կերպով դրսևորվում է Մոմիկի
քանդակագործական ձիրքը քաղաքացի ա-
ռաքապետներին արած բարձրաքանդակների
կատարման մեջ (գծ. 2): Ավետարանիչները
պատկերված են մարդու (հյուսիս-արևելյան
առաքապետ), աշուրի (հարավ-արևելյան ա-
ռաքապետ), թռչունի (հյուսիս-արևմտյան ա-
ռաքապետ) և ցուլի (հարավ-արևմտյան ա-
ռաքապետ) կերպարներով: Նրանք բոլորը
օժտված են թևերով և թռչելու ունակու-
թյամբ: Լուսավորելու գաղափարը արտա-
հայտվել է յուրաքանչյուր ավետարանիչի
մոտ մագաղաթի առկայությամբ:

Հուշարձանի համաչափությունը և դրվա-
գունը կատարված են տարածական մեծ
զգացումով և շինարարական արվեստի քաջ
ինագությունը:

Ինչպիսի հետաքրքիր լույս և ստվերի ա-
ռատ հնարավորություններով է հագեցված
հուշարձանի թմբուկը: Թմբուկը 24 հիստանի
բազմանկյունի է, որի 8 հիստերի վրա բաց-
վում են պատուհաններ, իսկ մնացած հիս-
տերին տեղադրված են եռանկյունի խորշեր:
Երեք-քառորդ սյուների փունջը, սկիզբ առ-



Նկ. 1. Ամաղուի Նորավանքի ա. Կարապետ եկեղեցու գավթի մուտքի ճակատակալ քարը

նելով թմբուկի հիմքում հորիզոնական գոտուց, բարձրանում է նիստերի անկյունները, կազմելով դրվագման հիմնական միջոց: Սյունների այդ փունջը՝ ձգվելով թմբուկով վեր, պսակվել է բազմաճակտոնավոր քիվով, որը իր հերթին ավարտվել է սրածայր վեղարով: Կիրառելով այդպիսի միջոցներ, Մովսիս իր կերտած ճարտարապետական կառուցվածքին հաղորդում է քանդակի արտահայտչականություն:

Նրա մյուս ճարտարապետական աշխատանքները Ամաղուի Նորավանքի կառուցվածքներն են: Ինչպես հայտնի է, Ամաղուի Նորավանքը Օրբելյան իշխանների ժամանակ ձեռք է բերում Սյունիքի հոգևոր կենտրոնի նշանակություն և այդ կապակցությամբ վերակառուցվում ու ընդարձակվում է:

Մեզ արդեն հայտնի երկհարկանի դամբարան-եկեղեցու հետ մեկտեղ Մովսիսի ստեղծագործությանը կարող ենք վերագրել նաև Ամաղուի Նորավանքի ա. Կարապետ եկեղեցու գավթի վերակառուցումը:

Գավթի վերակառուցվել է 1261 թվին Սիրանուս ճարտարապետի կողմից: Հուշարձանի հետազոտությունը ցույց է տալիս, որ նրա

խաչվող կամարներով ծածկը խարսխված է եղել որմնամույթերի վրա: Վերակառուցման ժամանակ մույթերի վրայով անց է կացվել հոծ քարե գոտի, որը հանդիսանում է պահպանված թաղի հիմքը:

